ТСТУ

#4(77)
2022

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

«Անտարեսը»

► Ստեղծում է
ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ

- գրքեր
- ձեռնարկներ
- դասագրքեր

► Ձգտում է ձևավորել
ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ

- մթնոլորտ
- մրցակցություն
- հասարակություն

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ մթնոլորտը ձևավորվում է այն մարդկանց միջոցով, որոնք կարևորում ու ձեռք են բերում ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ գրքեր:
Ձևավորի՛ր մթնոլորտ:

Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
antares@antares.am / www.antares.am

Էրիկա Սարգսի

Հումորին նվիրատաց. «Արի» սթենդափ ակումբի բեմը

Անկախ Հայաստանում հումորը միշտ մի քիչ ավելին է եղել, քան պարզապես զվարճալիք։ 90-ականների սկզբի ԿՎՆ-ը փոխարինում էր մարզական հաջողություններին և ամրապնդում մարտական հաջողությունները (երբ ԵրՄԻՆ հաղթում էր Բաքվի թիմին)։ «Մեր բակը» փոխարինում էր կինոյին ու ձևավորում երաժշտական ճաշակ (լավ, թե վատ՝ այլ հարց է)։ «Կարգին հաղորդումը», մի թեթև ուռճացումներով, արտացոլում էր մեր իրականությունը ու, այդպիսով, ստիպում մեզ ծիծաղել ինքներս մեզ վրա։ Հետո վերջապես ունեցանք քաղաքական հումոր, երբ ճահճացած քաղաքական դաշտի վրա հնարավոր եղավ գոնե մի լավ ղժժալ (ղե, չես կարողանում մի բան փոխել, գոնե՝ խնդա)։ Նույնիսկ 44-օրյայի ժամանակ ծնվում էին մեմեր, անեկդոտներ ու կատակներ, որոնք թույլ էին տալիս մի քիչ ուժ հավաքել հաջորդ օրը դիմավորելու համար։
Սթենդափ ձևաչափի մուտքն էլ Հայաստան զուտ զվարճանքի ոլորտի զարգացման փուլերից մեկը չէր։ Առաջին մասնագիտացված ակումբը Երևանում բացվեց ռուսաստանցիների աննախադեպ մարդաշատ ռելոկացիայի առաջին ալիքի արդյունքում, իսկ ռելոկացիայի պատճառը հերթական արյունոտ պատերազմն էր մեր խենթուկ տարածաշրջանում։
Բայց երբ սեպտեմբերին Հայաստանը կանգնեց հերթական կործանարար պատերազմի շեմին (ունեինք Առաջին արցախյան պատերազմ, Ապրիլյան, 44-օրյա, հիմա էլ ի՞նչ, Սեպտեմբերյա՞ն), մի տեսակ հումորի մասին ամսագիր տպելը դարձավ անտեղի։ Թեպետ ինչո՞ւ միայն դա, ամեն ինչ դարձավ ժամանակավրեպ ու անիմաստ։ Հետո կրակը դադարեց։ Հեղինակներն ու խմբագրությունը սթափվեցին ու, այդուհանդերձ, շարունակեցին աշխատանքը։ Պատրաստեցին ու վերջացրեցին հոդվածները հայոց սթենդափի նվիրյալների մասին, վերանայեցին «Կարգին հաղորդման» տասնյակ էպիզոդներ, խրվեցին ինտերնետային հումորի հորձանուտները, գնացին հասան ԿՎՆ-ի ամենավաղեմի խորքերը (երբ հեռուստացույցը սև-սպիտակ էր, իսկ բոլոր կատակները նախապես գրաքննվում էին), նույնիսկ հայտնաբերեցին արդեն գրեթե մոռացված երգիծական մի հանդեսի խոսուն շապիկները։
Կարծես թե հաջողվեց ցույց տալ մեր հումորն իր ոճական ու ֆունկցիոնալ բազմազանությամբ։ Լավ է, որ նույնիսկ ամենամռայլ ժամանակներում կարելի է գտնել քո ճաշակով շատ նուրբ ու ինտելեկտուալ, կամ տափակ, բայց ձայնով ծիծաղեցնող մի բոց։
Լավ չէ, որ մենք հիմա համարն ուղարկում ենք տպարան ու չենք պատկերացնում, թե արդյո՞ք այն տեղին կլինի տպարանից դուրս գալու պահին, թե՞ բոլորիս գլուխները նորից բոլորովին այլ բանով են զբաղված լինելու (օրինակ՝ հերթական պատերազմը հներից տարբերելու համար հարմար անվանում հորինելով)։
Անհումոր խմբագրական ստացվեց, կներեք :(

Գլխավոր խմբագիր
Արտավազդ Եղիազարյան

ՔԱՂԱՔԱՄԵՋ

04 Երեկոյան Երևան

Բարձր բալ
ARARAT Cherry նոր ըմպելիքի ներկայացումը Երևանի կոնյակի գործարանում:

06 Խառը կանաչի
Ամսվա ամփոփում
Նոր գրքեր, նոր նստավայրեր ու սպասվող իրադարձություններ:

08 Նոր նստավայր
Բանդերէգո. էգոյահաճո միջավայր
Ինչպիսին է շայ յուրահատուկ նորաբաց բարը:

10 Առաքում

Menu.am՝ առաջինը, հայկականը
Ինչպես է Menu.am-ը ցգտում «սուպեր արագության»:

12 Արվեստ
«Սիրում եմ նայել՝ ոնց են մարդիկ լվացք փռում»
Երևանն ու այլ քաղաքները՝ նկարչուհու գործերում:

ՀՈՒՄՈՐ

14 Նոր ձևաչափ

Արի ասեմ
Ինչպես բացվեց Երևանի առաջին սթենդափ ակումբը՝ «Արին». պատմում են հիմնադիրները:

18 Սեփական փորձ
Սթենդափի տեսություն ու պրակտիկա. Աշոտ Դանիելյան
«Սուբյեկտիվ սթենդափ» ռուսալեզու բլոգի հեղինակ Աշոտ Դանիելյանի փորձը:

20 Խոշոր պլան
«Սթենդափերը պիտի մազոխիստ լինի»
Երևանյան կատակերգական անդերգراունդի ականավորները՝ մոտիկից:

28 Առանց սահմանների

Մոսկվա-Երևան-սթենդափ
Ինչպե՞ս է ռուսական կատակերգական ոլորտը թափանցում Հայաստան ու ինչ ազդեցություն է թողնում տեղական շուկայի վրա:

32 Խորհուրդ

10 խորհուրդ սկսնակ սթենդափերներին
Եղեք պատրաստ՝ նախքան բեմից ձեր հումորները հնչեցնելը:

34 Այնտեղ
Թույլ սթենդափ ակումբներ
Մասնագիտացված կատակերգական նստավայրեր՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ռուսաստանում և Հոնկոնգում:

38 Հեռուստացույց

Կարգին անկարգություն
Ինչպե՞ս է դիտվում լեգենդար «Կարգին հաղորդումն» այսօր՝ փակվելուց 13 տարի անց:

42 Ձայրույթ
Կատակին չդիմացան
«Արմֆոմեդիի» վարողները՝ քաղաքական հումորը դժվար ընդունողների մասին:

44 Համացանց

Հումոր 2.0
Հայկական հումորի առանձնահատկությունները թվային հարթակներում:

46 Իմ Երևան
Տաշ Սարգսյան. «Մենք մեր քաղաքի մի մասն էինք»
«Նոր հայերի» ասպղերիս մեկն իր Երևանի մասին:

48 Հուշեր
Երկրորդ իմաստի հումոր
ԿՎՆ-ի առաջին հայկական թմի ավագի հուշերը:

50 Շապիկ
Փշոտ շապիկներ
«Ոչնի» երգիծական հանդեսի խոսուն շապիկները:

52 Կադրերի բաժին

«Ոզնի» #20-21, հոկտեմբեր-նոյեմբեր 1957 թ.
Մի դրվագ՝ Երևանի երգիծական պատմությունից:

Շապիկ՝
Նոնա Իսաջանյան

ԵՐԵՎԱՆ #4(77) | 2022

Սպագրվում է ՀՀ ԱԳՄՍ նախարարության աջակցությամբ

Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱԶԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Արտ-տնօրեն՝
ՆՈՆԱ ԻՍԱՋԱՆՅԱՆ
Թողարկող խմբագիր՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Էջադրում՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հեղինակներ՝
Մարգարիտ Միրզոյան, Բիայնա Մահարի, Լենա Գևորգյան, Շուշանիկ Փափազյան, Անի Բարսեղյան, Էլեն Բաբալյան, Մարիամ Ալոյան, Դիանա Մարտիրոսյան, Կարեն Անտաշյան, Հասմիկ Բարխուդարյան, Կարինե Տերտերյան

Լուսանկարներ և պատկերազարդումներ՝
Հայգազ Կարդենյան, Մարիամ Լորեցյան, Հարություն Մալխասյան, Բիայնա Մահարի, Վալենտինա Պալատուրյան, Արա Երնջակյանի արխիվ, Բանդերէգո, ԱրմՔոմեդի, Երևանի կոնյակի գործարան, Menu.am

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ
Տնօրեն՝
Արտավազդ Եղիազարյան

Հայաստանի Հանրապետություն, 0014, Երևան, Պարույր Սևակ 8
Էլ. փոստ՝ evnmag@gmail.com
Առցանց՝ evnmag.com

facebook.com/YerevanCityMagazine

instagram.com/evnmag

© 2011-2022 **«ԵՐԵՎԱՆ»**

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«ԵՐԵՎԱՆ» ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում Արտավազդ Եղիազարյանը:

Համարը տպագրության է հանձնվել՝ 24.10.2022

Տպագրված է Անտարես տպագրատանը, 0009, Երևան, Մաշտոցի 50ա/1

Տպաքանակ՝ 4200 օրինակ

Ամսագիրը ղեկավարվում է «Զանգվածային լրատվության մասին» և «Գովազդի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ամսագրի նյութերը վերատպվում են միայն իրավատիրոջ գրավոր համաձայնությամբ: «ԵՐԵՎԱՆ» ամսագրին հղում կատարելը պարտադիր է:

«ԵՐԵՎԱՆ» ամսագրի ստեղծման գաղափարը պատկանում է «Երևան Փրոդաքշն» ՓԲԸ-ին:

ՎԻՇԱՊԱՎԲԱՐՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ



Նոր հայկական ֆենթըզի վեպ՝ մեր կողքին ապրող
վաղնջական առասպելական էակների մասին

Երևանի բոլոր գրախանութներում

գինը՝ 4990 դրամ

Բարձր բալ

Ինչպես Երևանի կոնյակի գործարանի տարածքում մեծ հանդիսավորությամբ ու հավես վայբերով ներկայացվեց ARARAT Cherry նոր խմիչքը, որն արդեն հասցրել է դառնալ երևանյան կոկտեյլների ամենասիրված բաղադրիչներից մեկը:

Օրացույցի համաձայն՝ արդեն աշուն էր, բայց աշնանային այն օրերից էր, որոնք դեռ դժվար է տարբերել ամառվանից: Տարվա եղանակի փոփոխության մասին այդ ժամանակ դեռ փաստում են միայն անծայրածիր ցերեկային խցանումները, քանի որ բոլոր-բոլորն արդեն վերադարձել են արձակուրդից: Այս տողերի հեղինակն էլ նոր էր հայրենիք վերադարձել ծովափնյա հանգստից: Դա էլ այն հանգիստներից էր, որոնց հետդարձն այնքան հոգնեցուցիչ է, որ հայրենիքում պետք է դեռ մի քանի օր հանգստանալ այդ հանգստից: Այլ կերպ ասած, փորձում եմ արդարանալ, թե ինչպես ստացվեց, որ ներկա չգտնվեցի ARARAT Cherry-ի ներկայացման շլացուցիչ միջոցառմանը: Նույնիսկ հրավիրատոմս ունեի, բայց օրգանիզմս հրաժարվում էր հեռանալ տան բազմոցից ավելի հեռու, քան խոհանոցն էր:

Ինչևէ, ինչպես պարզվեց արդեն այդ նույն երեկոյի ընթացքում, բավական շատ բան էի կորցրել: Նախ, աչքովս ընկավ Kond House բարի հիմնադիր-հայր Նարեկ Բախտամյանի հուզիչ ֆեյսբուքյան գրառումը՝ միջոցառմանն իր մասնակցության մասին: Պատմում էր, թե որքան լարված էր, ինչքան շատ բան կար մտածելու՝ սկսած կոկտեյլների բաղադրությունից ու անվանումից, վերջացրած սնունդով ու տաղավարի դիզայնով: «Ամեն ինչ պետք է լիներ նախ մասնագիտական առումով իդեալական, հետո արդեն տարբերվող, գժական, կոնդական ու մի քիչ էլ բախտամյանական»,– գրում էր Նարեկը: Ու ոնց հասկացա մեկնաբանություններից ու հետո տարբեր էջերում հայտնվող գունեղ լուսանկարներից՝ ամեն ինչ իրոք իդեալականին մոտ էր ստացվել: Ընդ որում՝ ոչ միայն Kond House-ի մոտ, այլև մյուս թույն երևանյան բարերի, որոնք այդ ուրբաթ երեկո իրենց գործունեության մի զգալի մասը տեղափոխել էին Երևանի կոնյակի գործարանի տարածք:

Մի քիչ մանթո վիճակով գրում եմ ԵՐԵՎԱՆի արտ-տնօրեն Նոնային, թե՝ իրո՞ք էդ աստիճան թույն է անցել: Նոնան հաստատում է, բայց ավելի շատ խոսում է մշակութային բաղադրության մասին. «Ներսոյին երգելուց լայվ չէի տեսել,– նկատի ունի դերասան Ներսես Ավետիսյանին,– շատ հավես ծրագիր էր՝ դասական հին երգեր, բայց թարմ հնչողությամբ: Շատ

↑ Երգում է Ներսես Ավետիսյանը

ափսոս, որ չեկար, որովհետև լիքը հետաքրքիր մարդ կար, որոնց հետ կարելի էր լիքը հետաքրքիր բաներ քննարկել ու պլանավորել: Ես էնքան ծանոթ տեսա, որ չհասցրեցի բոլոր կոկտեյլները փորձեմ, չնայած երևի բոլորը չէի էլ հասցնի...»

Հետո տեսնում եմ կինոլրագրող Դիանա Մարտիրոսյանի սթորին այն մասին, որ սրա պես միջոցառումներն իր մոտ միշտ համախմբման հաճելի զգացողություն են ստեղծում, իսկ ARARAT-ը շարունակում է փառահեղ ներկայացնել Հայաստանն աշխարհին:

Դե իհարկե, համախմբվել էին, փաստորեն, բոլորը, բացի ինձնից: Իսկ Դիանան դեռ անձնական հաղորդագրություն է գրում՝ կարծես փորձելով խորացնել ափսոսանքի զգացումս. «Լսի, գործարանի տարածքում էս տիպի երեկո անցկացնելն էնքան հաճելի էր, թվում էր՝ համ բրենդի, համ քաղաքի արմատներին ենք մոտեցել: Թույն գաղափար էր՝ մի տեղում հավաքել Երևանի ամենասիրված բարերը, Կոնյակի գործարանի ու գիշերային Երևանի կապը կարծես ավելի ամրապնդվեր»:

Մի պահ արդեն սկսում եմ զարմանալ, թե այս ինչ մեծ հանդիսավորությամբ է ներկայացվում հենց ARARAT Cherry-ն, չնայած սա ARARAT Flavors համահոտային խմիչքների շարքի արդեն երրորդ ներկայացուցիչն է: Մյուս օրը զանգում եմ Վարդգես Հովեյանին (Երևանի կոնյակի գործարանի արտահանման զարգացման ղեկավարն է) ու արտահայտում զարմանքս: Հանգստացնում է, ասում է, որ սրան նախորդող Apricot-ն ու Coffee-ն էլ իրենց արժանի հանդիսավոր ներածությունն են ունեցել, պարզապես «հիմա էնպիսի խառը ժամանակներում ենք ապրում, որ ցանկացած լավ բան ինքնըստինքյան բազմապատիկ ռեզոնանսային է դառնում, էդտեղից էլ տպավորությունդ»: Գուցե հավելյալ փայլ է տվել այն, որ այս անգամ միջոցառումը տեղի էր ունենում Երևանի կոնյակի գործարանի շենքում, որն ինքնին մեծ համբավով վայր է, բայց որտեղ ոչ բոլորին է վիճակվել լինել:

«ARARAT-ի բոլոր արժեքներն արտացոլված էին՝ առատաձեռնությունը, վարպետությունը, սերն աշխատանքի հանդեպ, ի վերջո, մի խոսքով՝ շատ ստացված սիրուն միջոցառում եղավ,– շարունակում է Վարդգեսը, ապա հատուկ հպարտանում մասնակից բարերի մասնակցությամբ,– եզակի ընկերություններ կան Հայաստանում, որ կկարողանային ուրբաթ օրով Երևանի ամենալավ բարերն իրանց ամենալավ սթաֆի հետ հանդերձ հավաքել մի տարածքում, կողք կողքի, էնպես, որ ամեն բար ցուցադրեր իր ողջ վարպետությունը՝ մեկական signature կոկտեյլով, որը և ցուցադրեց իրենց բարձր մակարդակը, և ընդգծեց հարգանքը դեպի էն բրենդը, որի հետ իրանք աշխատում են»: Ինչպես պարզվեց, ARARAT Cherry-ով շուրջ հինգ տասնյակ կոկտեյլի բաղադրատոմս է մշակվել՝ ամենատարբեր տրամադրությունների համար:

Վարդգեսից խոստում եմ կորզում, որ, չնայած բացակայիս, հաջորդ միջոցառմանն էլ հրավեր կստանամ, ինքս էլ պատասխան խոստումն եմ անում, որ բաց չեմ թողնի, նույնիսկ եթե հանգստից հետո շատ հոգնած լինեմ: Իսկ մինչ այդ պետք մտնել Phoenix, Kong, Minas կամ Kond House ու փորձել, օրինակ, Yerevan Sling կոկտեյլը՝ շատ հայտնի Singapore Sling-ի՝ ARARAT Cherry-ի ջանքերով երևանացված տարբերակը:

Արտավազդ Եղիազարյան
Երևանի կոնյակի գործարան

Ինչ անել

Rambalkoshe-ի 6-րդ փարեղարձ

Նոյեմբերի 6, Արողության 9

Չնայած որ Rambal-ի միջոցառումները հաճախ տեղի են ունենում ամենատարբեր վայրերում, այս անգամ ծննդյան տոնը, կնշվի հենց այնտեղ, որտեղից սկսվել է դրա պատմությունը՝ Արողության 9 հասցեի առանձնատանը: Միջոցառումը կմեկնարկի ժամը 11-ին ու կտևի մինչև 23-ը: 12 ժամ անընդմեջ ելույթ կունենան դիջեյներ, որոնց լսելու համար չի գանձվի նույնիսկ մուտքի վճար. պարզապես եկեք միասին տժժալու, հորդորում են Rambalkoshe-ի հիմնադիրները:

Beatles in Jazz

Նոյեմբերի 3, «Արնո Բաբաջանյան» համերգասրահ

Լիվերպուլյան քառյակը գոյություն չունի արդեն 50 տարի, բայց դա չի խանգարում խմբի ժառանգությանը լինել արդիական ու սիրված: Սրա վկայությունն են նաև բիթլզյան երգերի բազում վերաիմաստավորումները: Թավջութակահար Դեյվ Գյոդակյանն ընկերների հետ առաջարկում է վայելել Ջոնի, Փոլի, Ջորջի ու Ռինգոյի երգերը ջազային մեկնաբանությամբ: Կատարողներն են՝ Աննա Կոստանյան՝ վոկալ, Դավիթ Մելքոնյան՝ սաքսոֆոն, Կարեն Գրիգորյան՝ դաշնամուր, Դեյվ Գյոդակյան՝ կոնտրաբաս, Արման Մնացականյան՝ հարվածայիններ: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ:

«Անքնություն»

Հոկտեմբերի 28-ից
կինոթատրոններում

Հայկական կինոն հազվադեպ է հանդիսատեսին առաջարկում թրիլերներ: «Անքնությունը» հենց այդ ժանրի ժապավեն է. ուշ գիշերով հնչած սխալ զանգն ամբողջովին փոխում է գլխավոր հերոսի (Սամվել Թաղևոսյանի դերակատարմամբ) պատկերացումները բարու և չարի, կյանքի և մահվան մասին: Նա կանգնում է վտանգավոր ընտրության առաջ, որտեղ նժարի մի կողմում իր հարազատ մարդկանց և որդու կյանքն է, մյուսում հանելուկային անծանոթուհու, որը պատրաստվում է ինքնասպան լինել:

Նինա Խեմչյան. Արձագանք

Գաֆէսճեան արվեստի կենտրոն, մինչև նոյեմբերի 6

Գաֆէսճեան արվեստի կենտրոնի համար այս նախագիծը ոչ միայն չափազանց կարևոր է, այլև խորհրդանշական. չէ՞ որ այստեղ է ցուցադրվում Գրիգոր Խանջյանի հայտնի «Հայոց այբուբենը» որմնանկարը: Փարիզաբնակ Նինա Խեմչյանն արդեն մի քանի տարի է, ինչ խորասուզված է Մաշտոցի արվեստի մեջ: Երկար ստեղծագործական փնտրտուքի արդյունքում արվեստագետը յուրօրինակ կամուրջ է ստեղծել մեծ մտածողի աշխատանքի հետ և ցանկանում է հավերժացնել վերջինիս ժառանգությունը ժամանակակից աշխարհում:

Sansara

Նոյեմբերի 17, Սուֆ

Ռուսական ռոքի ուրալյան ճյուղի ականավոր ներկայացուցիչ Sansara խմբի անդամների մեծ մասը լքել է Ռուսաստանն Ուկրաինայի դեմ պատերազմի մեկնարկից հետո: Սակայն դա չի խանգարում Սաշա Գագարինին ու մյուս երաժիշտներին ակտիվ համերգային գործունեություն ծավալել: Խմբի երևանյան ելույթը տեղի կունենա «Տուֆ» տարածքում:

Iron Force Metal Festival 2022

Նոյեմբերի 20, Պոլիգրաֆ

Կորյունի փողոցում գտնվող Պոլիգրաֆ ակումբը թեև նախ և առաջ էլեկտրոնային երաժշտության կենտրոն է, բայց պարբերաբար հյուրընկալում է նաև բոլորովին այլ ժանրերի միջոցառումներ: Iron Force փառատոնը մի հարկի տակ կհավաքի մետալ խմբեր Հայաստանից, Հունաստանից, Իրանից ու Վրաստանից, իսկ ենթաժանրերն ընդգրկում են բլեք, դեթ, պագան, պրոգրեսիվ դեթ և տեքնիալ դեթ մետալ ուղղությունները:

Նոր նստավայրեր

Գեղագիտական հանույթների դեսպանատուն (ՊԷՄ), Սարմենի 72

Ռուսական ռեստորանային փորձը շարունակում է իր դրսևորումը գտնել ռելկանտներով լի Երևանում: ԳՀԴ-ի հիմնադիրներն էլ նախքան այստեղ տեղափոխվելը փորձ են հավաքել Մոսկվայում: Սարմենի փողոցի գողտրիկ ու կանաչաշատ առանձնատներից մեկում բացված այս նստավայրում կարելի է ճաշել ու փորձել բազմաթիվ ֆիրմային կոկտեյլներ: Բացի այդ, տարածքում պարբերաբար նվագում են դիջեյներ, կազմակերպվում են շախմատի ու «Ինչ: Որտեղ: Երբ»-ի մրցույթներ: Ուշադրություն, բարը չի աշխատում երկուշաբթի օրերին, մյուս օրերին բաց է 18:00-ից գիշերվա 2-ը:

Yassou Greek Kitchen and Bar, Պուշկինի 38

Երևանի ամենահին շենքերից մեկում, որտեղ 19-րդ դարում տեղակայվել է Աֆրիկյանների գերդաստանը, այժմ բացվել է Երևանի ամենամեծ հունական ռեստորան-բարը: Հիմնական ուտեստների ցանկը ներառում է այն ամենը, ինչ մարդիկ կարոտում են հունական արձակուրդներից հետո. միջերկրածովյան ութոտնուկ, սիբաս և այլն: Իհարկե, հատուկ տեղ ունեն դիպերը (ձաձիկի, ֆետա կրեմ, հումուս և այլն) և աղցանները: Yassou կարելի է գնալ նաև գինի կամ կոկտեյլ խմելու:

2022 Place

Այս վեգանական միկրո նստավայրի հիմնադիրները ռուս ռելկանտներ են, որոնք Մոսկվայում ունեցել են նույն ուղղվածության սրճարան, պիցցայանոց և բար: Երևանյան 2022 Place-ում Իլյան ու Մարիյկան միավորել են իրենց փորձն ու հայկական խոհանոցը: Դրա վառ օրինակը տեմպուրայում պատրաստված վեգանական տոլման է: Բազմազան վեգանական մենյուին զուգահեռ հասանելի է գարեջրի բավական լայն տեսականի: Նստավայրն աշխատում է 13:00-ից 22:00-ը:

Bagel Shop, Մոսկովյան 27

Բեյգլների արտադրությամբ զբաղվող Bagel Shop-ը վերջապես բաց է նաև հանրության համար: Մոսկվայում բացված սրճարանում կարելի է համտեսել բեյգլների հսկա տեսականին՝ սաղմոնո, կծու սերուցքային պանրով, ելակի ջեմով, ավոկադոյով, պեպպերոնիով ու մոցարելայով, տապակած բանջարեղենով, թունայով և այլն: Bagel Shop-ն աշխատում է առավոտվա 8-ից: Իհարկե, գործում է նաև առաքում:

Նոր գրքեր

Գուրգեն Խանջյան «Համավարակ», Անդրարեւ

Գուրգեն Խանջյանի ամեն նոր գիրք ինքնին իրադարձություն է, իսկ «Համավարակը» նաև առաջին մեծ գեղարվեստական գործերից է, որ անդրադառնում է անկախ Հայաստանի գուցե ամենավատ տարվա՝ 2020 թվականի, երկու կարևորագույն իրադարձություններին (վերնագրում ակնարկվող համավարակ և պատերազմ): Այս երկուսն ընթերցողը տեսնում է գլխավոր հերոսի՝ Հարութի աչքերով, որն առաջին անգամ այցելում է Հայաստան երեսուն տարվա էմիգրացիայից հետո՝ նոր մահացած հորից ժառանգած տունը վաճառելու նպատակով: Բայց վրա հասած թագավարակը ստիպում է նրան ավելի երկար մնալ Հայաստանում:



Ռուբեն Ֆիլյան «Քո երկրի դեսպանը», ԱՐԻ գրականության հիմնադրամ

Արձակագիր Արամ Պաչյանը շարունակում է երկրորդ կյանք պարգևել Ռուբեն Ֆիլյանի գրականությանը. արձակագիրը մահացել է 1981 թվականին ընդամենը 31 տարեկանում, բայց նրա ժառանգությունը նոր է լիարժեք ուշադրության արժանանում: Այս անգամ լույս է տեսել «Քո երկրի դեսպանը» վեպի առաջին ամբողջական տարբերակը (Պաչյան խմբագրությամբ), որտեղ պատմողը հայտնվում է Հայոց պատմության թանգարանում ու տեսնում մի ուշագրավ լուսանկար, որտեղ պատկերված են Անգլիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլը, նրա օգնականը և մարդիկ, որոնք մեջքով են կանգնած:



Լուսինե Խառատյան «Սիրիավեպ», Գրանիշ

Լուսինե Խառատյանի «Սիրիավեպ»-ը արկածային ստեղծագործություն է: Իրադարձությունները զարգանում են նախապատերազմական Սիրիայում, որտեղ գլխավոր հերոսները՝ հայաստանցի երեք կին հետազոտողներ, հետազոտական աշխատանքների բերումով այցելում են տարբեր վայրեր, հանդիպում և զրուցում ամենատարբեր մարդկանց հետ, այս ամենով պայմանավորված՝ հայտնվում սիրիական հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում: Կհաջողվի՞ արդյոք գլխավոր հերոսներին՝ Շուշանին, Էսթերին և Աստղիկին դուրս գալ դժվարին իրավիճակներից...

Համլետ Առաքելյան «Անմահների ակադեմիան», Անդրարեւ

Նոր հայկական վեպ՝ ֆենթեզի ժանրում: Արեգն ու Արան Երևանյան համալսարանում իրենց առաջին տարվա ընթացքում ծանոթանում են տիկին Տարտարոսյանի՝ Անմահության հիմունքների դասախոսի հետ և սկսում են զնալ գաղտնի անմահական հավաքների, որոնց նպատակը Վիեննայի Անմահության ակադեմիա ընդունվելն է: Դրա համար նրանք պիտի անցնեն անմահության մի քանի հարթակներով, մտածում սովորեն ու չշեղվեն անմահական ճանապարհից: Համլետ Առաքելյանի այս հրաշավեպը վերերկրային իրարամերժ ուժերի հարատև պայքարի արտահայտումն է՝ երկու երիտասարդի երկրային հրաշապատում ճանապարհի մեջ:

ԲԱՆԴԵՐԷԳՈ. *էգոյահաճո միջավայր*

ԵՐԵՎԱՆԸ գնացել է նորաբաց «Բանդերէգո» կոկտեյլ բար՝ լսելու դրա պատմության ու փիլիսոփայության մասին ու տեսնելու այնտեղ ստեղծված զուգահեռ իրականությունը: Բարի հիմնադիր Ջոն Մկրտչյանը մի շոթ «Արքայական բալասանի» շուրջ մեզ պատմեց այն ամենը, ինչ հարկավոր է իմանալ նախագծի մասին:



Խառը՝ աշխատանքային

Իրականում բարերում ամենախառը ցերեկային ժամերին է, երբ փորձում են ի մի բերել երեկվա օրը՝ միևնույն ժամանակ պատրաստվելով հաջորդ երեկոյին: Հենց այդ ժամանակ էլ գնացինք «Բանդերէգո»՝ զրուցելու հիմնադիր Ջոն Մկրտչյանի հետ: Բարի ներսում միակ բանը, որը հուշում էր արտաքին աշխարհի գոյության մասին, նորոգումով զբաղված աշխատակիցներն էին, կանգնակի շուրջ ակտիվ քննարկումների մեջ ընկած թիմակիցները և մաքրուհիները: Ջոնի խոսքով՝ մինչև բացումը թեստային տարբերակով են աշխատում՝ ընթացքում շտկելով բոլոր խնդիրները, տարածքը հարմարեցնելով թիմի և հաճախորդների համար: Նախագծի վրա աշխատել են շուրջ մեկ տարի և հոկտեմբերի 31-ին՝ Հելոուինի օրը, այն պաշտոնապես կբացվի:

Ոչ ստատիկ էակներ

Անվանումը բավական հետաքրքիր պատմություն ունի: Այն, որ նախագիծն ընդհանուր առմամբ ոգեշնչված է կապիկի կերպարից, դժվար չէ նկատել ոչ միայն անվանումից («բանդերը» հինդիում նշանակում է կապիկ), այլև դիզայնից: Մուտքի դռան վրա պատկերված կապիկները դրա վառ ապացույցն են: Ի սկզբանե, բարը պիտի անվանվեր «Բանդերլոգ»՝ ոգեշնչված Կիպլինգի «Ջունգլիների գրքում» նկարագրվող կապիկների ցեղից: Դրանք շատ ակտիվ են, ունեն կարճ հիշողություն, բայց և միահամուռ են:
«Այդ կերպարներն ինձ էլ են բնորոշ,– ասում է Ջոնը,– ոչ ստատիկ, փոփոխվող, անընդհատ նորացվող, առանց որևէ կանոնների»: Այդ ամենը երևում է նաև տարածքի ներսում. չկան կանոններ, օրինաչափություն, տիրում է մաքսիմալիզմը: Սակայն այդ անվանման հետ կապված որոշակի հակասական կոնոտացիաների պատճառով որոշեցին պահպանել բառի հիմնական մասը՝ ավելացնելով դրան «էգոն», որն էվոլյուցիայի շղթայում մարդու ամենավերին կետերից է:
Բացի այդ, «բանդեր» և «էգո» բառերի սկզբնատառերը միասին դառնում են be (անգլերեն՝ «լինել») բառը, որն էլ բացահայտում է բրենդի մեկ այլ գաղափարախոսություն. «Բանդերէգոյում» մարդը կարող է լինել այն, ինչ ցանկանում է. սահմանափակումներ չկան: Ռասայական, գենդերային, կրոնական և շատ այլ բաժանումներ մի կողմ են դրվում: Այդպիսով փորձում են մարդկանց ավելի լայն մտածողության և աշխարհընկալման բերել: Այդ նույն գաղափարից ելնելով էլ ընտրել են թիմը: Թիմակիցներից շատերն օտարերկրացի են, այլ մշակույթների մարդիկ:

Դետալներ

Ջոնը նախագիծն անվանում է «էգոն բավարարող» (ego friendly) բազմամշակութային բար, և ամեն մանրուք հուշում է այդ մասին: Տարածքը չես կարող նկարագրել: Պետք է պարզապես գալ, տեսնել, ուսումնասիրել ամեն դետալ և նույնիսկ դրանից հետո շատ բաներ կմնան չբացահայտված: Ինտերիերի մաս կազմող իրերը բերված են աշխարհի ամենատարբեր վայրերից՝ Հնդկաստան, Ասիա և այլն: Նույնիսկ երաժշտությունը լինելու է դաուն տեմպո էլեկտրոնային՝ հստակ էթնիկ ուղղվածությամբ: Բնականաբար, այս ամենի մեջ չեն մոռացել նաև հայկականը: Տարածք մտնելուն պես յուրահատուկ բույր կզգաք, ու եթե թիմից որևէ մեկին հարցնեք, ձեզ կպատմեն, որ այն ստեղծվել է Մատենադարանի ձեռագրերից վերցված հատուկ բաղադրատոմսով: Այստեղ պատմության հետ կապը չի ավարտվում: Բարմենները ձեզ կառաջարկեն յուրահատուկ կոկտեյլներ, որոնց հիմքում ևս ձեռագրերի բաղադրատոմ-

սերով պատրաստված թուրմեր են: Բարում օգտագործվող օճառն ու ձեռքի քսուկը նույնպես դարերի պատմություն ունեն. պատրաստված են մյուռոնաբույրի հիմքի վրա:
Տարածքը բաժանված է մի քանի մասի՝ հիմնական սրահը, որտեղ բարմենները կանգնած են ոչ թե բարի կանգնակի հետևում, այլ շուրջը: Մյուս սրահը ոսկեպատ «Էլդորադոն» է, բայց ամենահետաքրքիրը «Poker Room»-ն է: Բարի կանգնակների փոխարեն այստեղ իրական պոկերի սեղաններ են, բայց խաղալ չի թույլատրվում: Այս սրահում հստակ մենյու գոյություն չունի: Երբ մարդը մտնում է ներս, բարմենը, նրա հետ զրուցելով, փորձում է բացահայտել հաճախորդի խառնվածքը և, ըստ իր ընկալման, կոկտեյլ է պատրաստում, որը հարազատ կթվա հենց այդ մարդու քիմքին: Երեկոյի վերջում չմոռանաք մտնել հայելապատ սենյակ և նկարվել այդ երեկոն հիշողության մեջ պահպանելու համար:

«Բանդերէգոյի» թիմը մշակել է 15 հեղինակային կոկտեյլ, որոնցից յուրաքանչյուրը վերաբերում է որևէ երկրի մշակույթի: Օրինակ՝ «Սաուդադե» կոկտեյլը պատրաստվում է պորտուգալական խմիչքի հիման վրա, իսկ անվանումն ինքն իրենով նշանակում է մի տխրության տեսակ, երբ դու տխրում ես լավը հիշելով: Բառ, որը կնկարագրի այս հոգեվիճակը, կարելի է գտնել միայն պորտուգալացիների առօրյայում: «Բանդերէգոն» փորձել է ամեն մշակույթից նման հետաքրքիր դետալներ ու պատմություններ գտնել ու ստանալ տարբերվող համ: Բարի խոհանոցը նույնպես առանձնահատուկ է: Խոհարարների առջև խնդիր է դրվել ստանալ համեղ ու տարբերվող ուտեստներ՝ համադրելով իրար հնարավորինս հակասող բաղադրիչներ:

Նովուս

Սպասարկման հարցին շատ լուրջ են մոտեցել, մշակել են սեփական հայեցակարգը, որն անվանել են «Նովուս»: Այն սպասարկման տեսակ է, որը պահպանում է էթիկայի բոլոր կանոնները՝ միևնույն ժամանակ ցուցաբերելով ընկերական մոտեցում: «Երբ հյուրը մտնում է մեր դռներից ներս, նա մտնում է մեր տուն, թիմի յուրաքանչյուր անդամ այս տան տերն է և հենց այդպես էլ դիմավորում և ճանապարհում է հյուրին,– պատմում է Ջոնը,– չզարմանաք, եթե բարմեններից մեկը գա և նստի ձեր սեղանի շուրջ, և դուք զրույց սկսեք, ինչպես հայկական հավաքույթների ժամանակ է դա տեղի ունենում»:
Մշակված ծրագիրը բավական հստակ է ու երկարաժամկետ. շաբաթվա մեջ երեք օր խոհարարներից մինչև հյուրընկալ՝ բոլորը դասընթացների են մասնակցում և ավարտական քննություն հանձնում: Անգլերեն, բուսաբանություն, գաստրոֆիզիկա, խմիչքի պատմություն և այլն: «Մեզ մոտ մի բան չիմանալն ամոթ է»,– ասում է Ջոնը: Հիմնադիրն ինքը տարիներով աշխատել է Երևանի լավագույն վայրերում՝ անցնելով «դժոխքի բոլոր շրջանները». խոհարարի օգնականից՝ շեֆ, այնուհետև մենեջմենթ ու մարքեթինգ: Մի շրջան դուրս է եկել ոլորտից, հետո մեկնել արտերկիր, ճանապարհորդել, ծանոթացել տարբեր մշակույթների հետ: «Տեսնելով այնտեղի մոտեցումները՝ բոլորովին նոր գաղափարներ, հասկացա, որ պիտի վերադառնամ ու Երևանում ստեղծեմ մի այնպիսի նախագիծ, որի նմանը քաղաքը դեռ չի տեսել,– պատմում է Ջոնը,– կոնցեպտուալ վայր, որն իր ասելիքն ունի, որի մասին կարելի է ժամերով պատմել»:

Լավագույնների օրինակով

Բարի թիմին ի սկզբանե վերապատրաստել է Սանկտ Պետերբուրգի ամենահայտնի բարերից մեկի՝ «Էլ Կոպիտասի» թիմը: Եկող տարվա ընթացքում սպասում են մի քանի այլ կարևոր բարերի թիմերի այցեր Երևան՝ վերապատրաստելու բարի աշխատակիցներին, պարբերաբար հրավիրելու են այլ հայտնի բարմենների իրենց փորձով կիսվելու համար: Կարևոր է նաև այն, որ ուսումնական գործընթացը բաց է նաև այլ տեղերում աշխատող բարմենների համար: Կարող են գալ, մասնակցել, սովորել: «Մեր նպատակն է բարձրացնել բարային մշակույթի մակարդակը Հայաստանում,– ասում է Ջոնը,– մենք ունենք հստակ մշակված ստրատեգիա, և վստահ եմ, որ դրան հետևելով մոտակա մեկ-երկու տարում մեր անունը ևս կլինի աշխարհի թոփ բարերի ցուցակում»:

Մետավերսն ու Կեյտարոն

«Բանդերէգո» մուտք գործելն այդքան էլ հեշտ չի, սկզբում պետք է կայքի միջոցով հաստատում ստանալ ու միայն դրանից հետո ձեզ թույլ կտան սեղան ամրագրել:
Գնալուց առաջ չմոռանաք բարմեններից մեկին հարցնել Կեյտարոյի մասին: Նա թիմի կողմից ստեղծված հավաքական կերպար է, որի միջոցով հետագայում բացահայտելու են բարի կոնցեպտը:
Կեյտարոն ճանապարհորդ է, SS ոլորտի ներկայացուցիչ, ով գումար է վաստակում ռոբոտներ ստեղծելով: Բարի ինտերիերը ստեղծելիս պատկերացրել են, թե ինչպիսի տեսք կունենար նրա տունը՝ ճանապարհորդի տունը: Կեյտարոն ձեզ կուղեկցի նաև մետավերսի տարածքում, որտեղ դուք նույնպես կարող եք գտնել «Բանդերէգոն»: Մետավերսի որևէ մակարդակում այցելուն կկարողանա ծանոթանալ նախագծին, շփվել Կեյտարոյի հետ, մասնակցել վարպետաց դասերի, տարբեր թրեյնինգների ռեստորանային ոլորտի վերաբերյալ: Իսկ դրսից հրավիրված դիջեյների սեթերը, որոնք նվագելու են իրական կյանքում, հասանելի կլինեն նաև մետավերսում: Այդ ամենի մասին ձեզ մանրամասն կպատմի հենց ինքը՝ Կեյտարոն:



Ժամանակը՝ որպես արժեհամակարգ

Նախագծի փիլիսոփայությունը նույնպես առանձնանում է: Թիմը մտապահել է 1440 թիվը, որպես մեկ օրվա րոպեների քանակ և փորձում է իր հաճախորդների համար այդ րոպեներից յուրաքանչյուրն իմաստալից դարձնել: «Հյուրի մտնելու վայրկյանից մինչև գնալու պահը այնպես ենք մտածել, որ որևէ րոպե չվատնվի անիմաստ»,– ասում է Ջոնը:
Ժամանակի հանդեպ նրբանկատությունը նաև սպասարկման արագության մեջ է երևում: Բարի կանոններից մեկն այն է, որ առավելագույնը հինգ րոպեում կոկտեյլը պիտի հայտնվի հաճախորդի ձեռքում:«Բանդերէգոյում» չկան մատուցողներ, միայն բարմեններն են, որոնք ձեզ կհյուրասիրեն համեղագույն խմիչքներ՝ համեմված հետաքրքիր պատմություններով: Ջոնի խոսքով՝ մեծ տեղ են տալիս տարբեր ավանդույթների. լինի դա հնդկական ձեռքեր լվալու սովորույթը, թե հայկական «բարով տեսանքը», որով այցելուն դիմավորում են բարում:
Ինձ նույնպես ճանապարհեցին հայկական ավանդույթին համապատասխան: Փոքր գավաթների մեջ լցնելով «Արքայական բալասանը»՝ Ջոնը պատմեց, որ դեռ հազարամյակներ առաջ հայ թագավորներն այս 50-ից ավելի խոտաբույսերից պատրաստված թուրմը համադրել են գինու հետ: «Կարելի է ասել, որ դեռ այն ժամանակ մեր արքաները կոկտեյլներ են խմել»,– ասում է Ջոնը:

Մարգարիտ Միրզոյան
«Բանդերէգո»

Menu.am՝ առաջինը, հայկականը

21-րդ դարում նախընկրելի ռեստորանից ուրեսպ պատվիրելն ավելի քան հասարակ երևույթ է համարվում: Սակայն սննդի առաքումն ունի պատմություն՝ շատ ավելի երկար, քան սմարթֆոնների դարաշրջանը: Առազին պատվիրված փաֆ պիցցան վայելել են 19-րդ դարում իտալական ազնվական ընտանիքներից մեկում: Իսկ ահա սննդի առազին օնլայն պատվերն իրականացվել է արդեն 1994 թվականներին ԱՄՆ-ում: Դրանից էլ 18 տարի անց օնլայն սնունդ պատվիրելու մշակույթը մտել է Հայաստան: 2012-ին ստեղծվել է Menu.am-ը՝ առազին հայկական օնլայն առաքման հարթակը: Ընկերության տնօրեն Դավիթ Բաբայանը պատմել է Menu.am-ի հիմնադրման, արժեքների, մարտահրավերների, IT ստարտապի լինելու, սպասվող բարեփոխումների և այլնի մասին:

↓ Menu.am ընկերության տնօրեն Դավիթ Բաբայան

Ինչպե՞ս ծնվեց ընկերության ստեղծման գաղափարը:

— Երկու հայրենասեր գործարար 2012-ին հանդես եկան ընկերությունը ստեղծելու գաղափարով: Տեսնելով դրսի փորձը՝ նպատակ կար մի քանի էլեկտրոնային առևտրի նախագիծ իրականացնել: Մտածեցին՝ ինչո՞ւ այդ փորձը չբերել Հայաստան, ինչո՞ւ չզարգացնել այդ մշակույթը հենց մե՛ր երկրում: Խնդիր դրեցին իրենց առջև ու սկսեցին աշխատել: Թիմ հավաքեցին, առաքիչներ ներգրավեցին: 2012-ի հոկտեմբերին գրանցվեց Menu.am-ի առաջին պատվերը: 2020-ին փոխարինեցի Վահան Քերոբյանին տնօրենի պաշտոնում: Menu.am-ը Հայաստանում հիմք դրեց օնլայն առաքման մշակույթին: Կարելի է ասել՝ եթե չլիներ Menu.am-ը, ապա կլիներ մեկ ուրիշը, բայց փաստ է, որ այս դեպքում կարևոր չէր գաղափարը, կարևոր էր իրականացումը: Menu.am-ի հիմնադիրները կյանքի կոչեցին այդ գաղափարը:

Շատերը Menu.am-ը ընկալում են որպես սննդի առաքման ծառայություն, քչերն են պատկերացնում, որ այն նախ և առաջ SS ստարտապ է...

— Մեր արտադրանքն առաջին հերթին մեր SS պրոդուկտն է, և հետո՝ դրա միջոցով հաճախորդներին մատուցվող ծառայություն: Առանց SS լուծումների հնարավոր չէր կազմակերպել այս ամենը: 2012-ին Հայաստանում եղել ենք այն եզակիներից, ում հաջողվել է էլեկտրոնային առևտրի հարթակ՝ վեբ կայք ու հավելված ստեղծել: Ծրագրային ապահովումն արել ենք մեր միջոցներով, հաջողության հասել մեր ծրագրավորողների և գործընկերների շնորհիվ: 2012-ից սկսած հասցրել ենք մի շարք մրցույթներում ցույց տալ մեր հնարավորությունները և դրական գնահատականի արժանանալ հասարակության կողմից՝ արդեն որպես SS ստարտափ: Կարող է թվալ, որ մենք արդեն ունենք ծրագրային ապահովում, ու անհրաժեշտություն չկա դրա վրա փոփոխություններ անել, բայց քանի որ շուկան շատ արագ է զարգանում, ավելանում են հաճախորդների պահանջները, մեր ծրագրավորողների թիմը միշտ շարունակում է աշխատել: Հաճախորդների, ռեստորանների և առաքիչների համար ավելացվում են նոր գործառույթներ, ծրագրային ապահովումը հարմարեցվում է նրանց պահանջներին:

Մի բան էլ կա, որ հաճախ անտեսվում է. կա տպավորություն, որ Menu.am-ով հնարավոր է միայն սնունդ պատվիրել: Հարթակում սննդից բացի կգտնեք գրեթե ամեն ինչ. տնտեսական ապրանքներ, ծաղիկներ, կենդանիների սնունդ, փուչիկներ, տորթեր, ալկոհոլ... Համագործակցում ենք «Քարֆուր» սուպերմարկետի հետ, ցուցակը պատրաստվում ենք համալրել նաև դեղորայքով, սակայն ներկա պահին հաճախորդը հնարավորություն ունի դեղատներից նաև հիգիենայի պարագաներ պատվիրել: Ծածկույթը բավական լայն է: Նախապես պլանավորած միջոցառումը, ճաշկերույթը ևս խնդիր չէ, քանի որ Menu.am-ում հաճախորդը հնարավորություն ունի պատվերը նախօրոք տեղադրել:

Չենք կարող չխոսել նաև խնդիրներից: Ինչ-որ պահից հաճախացան բողոքներ Menu.am-ից, հատկապես առաքման արագությունից: Ըստ ձեզ՝ արդարացվա՞ծ էին այդ բողոքները:

— Չենք բացառում ու տեղյակ ենք, որ ժամանակ առ ժամանակ եղել են թերացումներ առաքման հետ կապված: Հիմնական խնդիրն այն է, որ շատ հաճախ ունենում ենք առաքիչների սակավություն, մյուս կողմից էլ ունենում ենք պատվերների քանակի շեշտակի աճ, որը հաճախ հնարավոր չի լինում կառավարել: Խնդրին լուծում տալու համար նոր առաքիչներ ենք ներգրավում, սակայն դա էլ միշտ չէ, որ խնդրին ամբողջական լուծում է տալիս: Պիկ ժամերին, անձրևային օրերին, հավաքների ժամանակ խնդիրը շոշափելի է դառնում: Այնուամենայնիվ, քանի որ Menu.am-ն է հանդիսանում հաճախորդի և ռեստորանի միջև կապը, մենք պատասխանատվությունը վերցնում ենք մեզ վրա: Այժմ ուրախությամբ կարող եմ փաստել, որ այս առումով ունենք բարելավումներ:

Հատկապես ինչ աշխատանք է տարվում այդ ուղղությամբ և ինչ ձեռքբերումներ ունեք:

— Նախորդող ամիսներին ունենք բարելավումներ, ինչը նկատելի է մեր հաճախորդների գնահատականներից: Հաճախորդը հնարավորություն ունի պատվերից հետո գնահատել ռեստորանին, առաքիչին: Էականորեն մեծացրել ենք առաքիչների թիվը: Շատ ինտենսիվ աշխատում ենք ռեստորանների հետ, որ կարողանանք կոորդինացնել և նվազագույնի հասցնել պատվերների ուշացումները ռեստորանների կողմից: Առաքիչների հետ նաև թրեյնինգներ ենք կազմակերպում: Ջանք չենք խնայում առաքումը ճիշտ ժամանակին հաճախորդին հասցնելու համար, իհարկե, դեռ այս ուղղությամբ անելիքներ ունենք: Ձգտում ենք սուպեր արագության:

Ինչպե՞ս եք պատրաստվում ամրապնդել ռեստորան-առաքիչ-պատվիրատու հարաբերությունները:

— Menu.am-ը, լինելով առաջին հայկական օնլայն պատվիրման հարթակը շուկայում, այժմ ունի ամենամեծ գործընկերների ցանցը Հայաստանում (500+): Մեծացրել ենք վաճառքի թիմը, ինչն էլ ավելի է ամրապնդում կապը ռեստորանների հետ: Փորձում ենք հասկանալ Menu.am-ից իրենց ակնկալիքները, լսում դժգոհությունները, եթե կան խնդիրներ, փորձում ենք դրանց արագ լուծում տալ: Կարելի է ասել՝ մենք 24 ժամ կապ ենք պահում գործընկերների հետ: Իրականացնում ենք ակցիաներ ռեստորանների հետ, ունենք հաճախորդների անհատական մոտեցման բանաձև: Իսկ մեր ծրագրային ապահովումը թույլ է տալիս ունենալ ռեստորան-առաքիչ-պատվիրատու շփումն ու հարաբերությունների ամրապնդումը:

Վերջին 1-2 տարում սննդի առաքման ոլորտի միջազգային ընկերություններ սկսեցին գործունեություն ծավալել նաև Հայաստանում: Ինչ ազդեցություն ունեցավ դրանց մուտքը Menu.am-ի գործունեության վրա և ինչ քայլեր եք ձեռնարկում մրցունակ լինելու համար:

— Իհարկե, Menu.am-ն առաջին հայկական օնլայն առաքման ծառայությունն է, սակայն չենք կարող շուկայում մնալ միակը: Նոր խաղացողների մուտքը Հայաստան լավ ենք գնահատում: Մի կողմից՝ շուկան է մեծանում, մյուս կողմից՝ մրցակցությունն է ավելանում: Չնայած նրան, որ մրցակիցները խոշոր խաղացողներ են, սակայն Menu.am-ն իր դիրքերը չի զիջում: 2022 թվականին ունենք պատվերների աճ: Խաղացողները զարգացնում են օնլայն պատվիրման մշակույթը, իսկ մրցակցությունն այն բանալին է, որը տանում է դեպի զարգացում: Բացի այդ, Menu.am-ն ունի և հաճախորդին կարող է առաջարկել մի շարք հնարավորություններ, որոնք չեն առաջարկում այլ առաքման ընկերությունները: Մենք ընդլայնել ենք մեր աշխարհագրական գործունեությունն ու Երևանից բացի աշխատում ենք Գյումրիում, Աբովյանում, Էջմիածնում: Համագործակցում ենք ավելի քան 500 ռեստորանի, խանութների հետ: Առաքումն իրականացնում ենք ավելի մեծ շառավղով, քան շուկայում մրցակիցներից որոշները: Աշխատում ենք 24 ժամ՝ հաճախորդին հնարավորություն տալով պատվեր իրականացնել օրվա ցանկացած պահին: Մենք այն բացառիկներից ենք, որն ունի զանգերի կենտրոն: Ի վերջո՝ առաջինն ենք ու հայկականը:

Իսկ եթե խոսենք ապագայի մասին: Ինչպիսին է տեսլականը մոտակա տարիների համար:

— «Ուրախության առաքում ամեն օր»՝ մեր կարգախոսն է: Մենք ունենք գերնպատակ՝ այնպես անել, որ հաճախորդը մեզնից գոհ մնա: Մեր տեսլականն է՝ արժեք ստեղծել թե՛ ռեստորանի, թե՛ առաքիչի և, որ ամենակարևորն է՝ հաճախորդի համար: Այդ գործընթացում անում ենք ամենը՝ այդ շղթայում ներգրավված բոլոր կողմերին գոհացնելու համար: Եվ, ի վերջո, նպատակ ունենք հասնել «սուպեր գոհ» հաճախորդների:

Վարինա Մերոյերյան
Menu.am

Կարիշոկ Դուլյան. «Սիրում եմ նայել՝ ոնց են մարդիկ լվայք փռում»

Սեպտեմբերին Երևանում յուցադրվեց նկարչուհի Կարիշոկ Դուլյանի նոր մեծ՝ Make Love, Not War կրաֆի յուցադրությունը: ԵՐԵՎԱՆՆ հանդիպել է նախկին Խարբերդի հեր ու կրուցել իր աշխատանքներում այդքան հաճախ հանդիպող քաղաքային ու երևանյան սյուժեների, ինչպես նաև սիրո կարևորության մասին:

"Make Love, Not War" 2022

Ճարտարապետից նկարիչ

4-5 տարեկան երեխա էի, ինձ տարան նկարչության դասերի: Մի օր էլ ուսուցիչս՝ ռուս աղջիկ էր Լենա անունով, որոշեց, որ իմ նկարներով պիտի անհատական ցուցահանդես անի: Եվ երևի դա էլ հենց սկիզբը հանդիսացավ:

Նկարչական տարբեր ուղղություններով էի հետաքրքրվում, բայց ի վերջո ընդունվեցի Ճարտարապետության և շինարարության համալսարան: Այնտեղ հանդիպեցի մի ֆանտաստիկ դասախոսի, որը շատ անսովոր ու զարմանալի բաներ էր սովորեցնում ու պահանջում էր շատ նկարել: Քաղաքում նկարելու սերս սկսվեց այդտեղից: Հետո գնացի Մադրիդ, բայց այստեղ աշխատում էի որպես ճարտարապետ ու էլ չէի նկարում: Մեջս անընդհատ ցավ էր, որ ես դա չեմ անում, չեմ հասցնում: Մեկ էլ մի օր էլ չդիմացա համակարգչի դիմաց նստելուն, ինչ-որ տարբեր բաներ համընկան, ու ես, բախտի բերմամբ, այդ աշխատանքը թողեցի: Բայց դեռ չէի հավատում, որ նկարելով կարելի է ապրուստ ապահովել: Բայց հետո եկավ 2020-ը, վրա եկավ քովիդը, և ես հասկացա, որ ոչ մի ուրիշ բան էլ չեմ ուզում անել, ուզում եմ միայն նստել տանն ու նկարել:

Ինձ հեչ տխուր չէր տանը փակված լինելը: Սկսեցի նկարել, մարդիկ սկսեցին գնել ու շատ հավանել նկարներս: Նախորդ ձմեռ գնացի ԱՄՆ, մնացի հինգ ամիս, ցուցադրություններ կազմակերպեցի, նոր ծանոթներ գտա: Հետո եկա այստեղ ու ունեցա 2 անհատական ցուցահանդես:

Փողոցներն ու պատշգամբները

Երբ համալսարանում սկսեցի նկարել, այդ ժամանակ էլ արթնացավ այդ սերը դեպի բակեր. գուցե դրանից է, որ հետո դառա քաղաքաշինության մասնագետ: Բայց ես սիրում եմ նկարել ամենատարօրինակ կառույցները, շենքերը՝ ավելացրած ու պակասեցրած պատշգամբներով: Շատ չեմ սիրում նկարել ճիշտ երեսպատված ու լավ կառուցված շենքերը: Հնության, սխալ ու անկանոն կառույցներով լի բակերի մեջ ենք մենք, դա է ազնիվը: Ամեն մարդ իր առաջ եկած տներով, ձեռքի տակ ընկած նյութերով երեսպատած, ամենատարբեր իրերից հավաքած ու սարքած, ապօրինի շինություններով...

Սիրում եմ նայել՝ ոնց են մարդիկ լվացք փռում, նստած նարդի խաղում, բուրդ լվանում: Ես վաղուց լսել էի, որ իսկական ճարտարապետը պիտի բակերով քայլի, այլ ոչ փողոցներով, իսկ մեր բակերում ամեն ինչ կտեսնես: Օրինակ, մեկը գիպսե ֆորմա է գտել, հունահռոմեական բազրիքի ոճով, բերել կպցրել է իր փակած պատշգամբի վրա: Ես դրա մեջ տեսնում եմ գեղեցկություն, որը գուցե սխալ է, երևի, ճարտարապետը քնել է իմ մեջ, բայց ինձ հաճելի է մարդկանց արտահայտումները տեսնել, հիշել, որ բոլորը տարբեր են:

Երևանն ու մյուս քաղաքները

Ես երեք տարի ապրել եմ Մադրիդում: Շատ սիրուն տեղ էր, բայց մարդկանց խոսելու թեմաներն ինձ հոգեհարազատ չէին, և այդ խոսակցությունից ես ջերմություն չէի զգում, ու դա ինձ չէր ոգեշնչում: Բայց, օրինակ, Նահագներում մարդիկ ավելի տարբեր էին, չնայած, միևնույն է, Երևանի հարազատությունը չկար: Օրինակ, այնտեղ մարդիկ լվացքն էլ դրսում չեն փռում, ու երբ իմ նկարները տեսնում էին, զարմանում էին, որ դեռ նման երևույթ կա: Իսկ Իտալիայում՝ Նեապոլում, որտեղ սարսափելի շատ են գողությունն ու ավազակությունը, ամեն ինչն այնքան մարդկային ու ջերմ է, փողոցները նեղ են, տները մոտ, ամեն մեկն իր տնից զրուցում է դիմացի հարևանի հետ: Այդպիսի բան Ամերիկայում չեմ տեսել ես, ամեն մեկն իր տանն ու իր գործերով է: Իսկ այստեղի բակերի թեմաներն ու մարդկանց տրամադրությունները չկան որևէ այլ տեղ:

Ինչ փոխել Երևանում

Երևանում շատ բան կփոխեի: Ես անվերջ քանակությամբ բարեկարգումների արդյունքում կստանայի մայթերի լայնացում, անպետք տարածքների վերացում, քաղաքն ավելի խնամված կդարձնեի: Քառակուսի բարձրահարկ տների արանքի բակերը շատ տգեղ են: Կարելի էր կանաչը շատացնել, այգիներ, հետաքրքիր տարածքներ ստեղծել: Մարդիկ պիտի մի քիչ փոխվեն ու սկսեն մտածել քաղաքի մասին, քիչ աղտոտեն, տան պես վերաբերվեն քաղաքին: Հին շենքերն էլ չէի քանդի, այլ կվերանորոգեի, կամրապնդեի և դրանց հետ կհամադրեի նորը, որի համար լավ ճաշակ և աշխարհից տեղեկացվածություն է պետք:

Վաճառք

Անցյալ տարի մի մեծ թղթի վրա իմ վառ նկարներից մեկը պրինտ էի արել ու ուրախ-ուրախ կանգնել էի, փռել էի մի քարի վրա, որ նայեմ: Մի աղջիկ մոտեցավ՝ վա՛յ, ինչ լավ նկար է, ուզում եմ գնել: Մի շատ լավ ռուս աղջիկ էր, զանգահարեց հետո, պայմանավորվեց ու գնեց նկարը: Ստացվեց, որ փողոցում նկար վաճառեցի: Հետո դառանք լավ ընկերներ:

Մի անգամ էլ՝ շատ վաղուց, երբ Իսպանիա գնալու համար գումար էի հավաքում, որոշեցի գնալ Վերնիսաժ ու նկարներս տարա վաճառելու: Բայց ունեի ընդամենը երկու նկար վաճառքի, երկու նկարով նստել էի Վերնիսաժում: Չվաճառվեց, բայց մարդիկ գալիս էին ու հավանում էին, հետո տխրում էին՝ ինչո՞ւ է այսքան քիչ: Կարծես եթե կողքից մի տաս հատ էլ լիներ, այդ հավանածը կառնեին:

Սերը (գուցե) կփրկի

Մարդ արարածն ագրեսիվ կենդանի է: Ես իմ ամենամեծ նկարի (կոչվում է “Make love, not war”) շնորհանդեսի ժամանակ պատմեցի, որ կան երկու տեսակի կապիկներ, որոնք նման են մարդուն. շիմպազեն, որը շատ ագրեսիվ է ու իր հարցերը կռվով է լուծում, և բոնոբոն, որ շատ հանգիստ է, հարցերը կանայք են լուծում, առաջարկում են սկզբում սիրով զբաղվել և հետո նոր կլուծեն խնդիրները: Մենք ավելի նման եղանք շիմպանզեներին: Մարդու համար ավելի կարևոր բաներ են փառքը, հարստությունն ու սիրուն հերթ չի հասնում: Այնինչ շատ կուզեի, որ բոնոբո տեսակին ավելի մոտ լինեինք:

Մարիամ Ալոյան
Կարիշոկ Դուլյանի արխիվ

Արի

ԵՐԵՎԱՆը ներկա է գտնվել Երևանի առաջին սթենդափ ակումբի՝ «Արիի» բացմանն ու աշխատանքային առաջին օրերին և շփվել հիմնադիրների հետ:

Լույսերն անջատվում են, սենյակը մթնում է այնքան, որ ինքդ քեզ էլ չես տեսնում, խոսակցությունները դառնում են շշուկ, բեմին վառվում է միակ լույսը. լույսի եռանկյունն ուղիղ այնքան է, որ մեջը ներգծված տեղավորվի բռնակի վրա ամրացված խոսափողն ու տղան: Երևի տետրի մեջտեղի մասից պոկած, արդեն մի քիչ ճմռթված ու կյանք տեսած թղթիկը ձեռքին, մի քիչ խառնված, մի քիչ ամաչած... Խորը շունչ, ու... սկսեցինք. Աստված գիտի՝ ով էր էն մարդը, որն առաջին անգամ մի խումբ հանդիսատես նստեցրեց ու սկսեց պատմություններով ծիծաղեցնել հավաքվածներին. միգուցե հին հույն էր, միգուցե սիրուն քթով մի հռոմեացի, միգուցե մի ալարկոտ չինացի, իսկ միգուցե, ինչու ոչ, կյանքից արդեն իսկ հոգնած մի հայ: Պատմությունն այդ մասին լռում է: Պարզ չի նաև՝ ինչպես ու ինչու մի քանի հազարամյակ անց բեմից տեքստերով ծիծաղեցնելու արվեստը հանկարծ ձևավորվեց որպես լիարժեք շարժում և ստացավ Սթենդափ քոմեդի անունը, անգլերենից թարգմանաբար մոտավորապես՝ կանգնած պատմողի կատակները:

Ասում են առաջին հոտնկայս կատակասացը միակ ու անկրկնելի Մարկ Տվենն էր: 1895 թվականին, վատ ֆինանսական վիճակից դրդված, նա նույնիսկ մեկնեց համաշխարհային շրջագայության հենց որպես սթենդափ կոմիկ: 19-րդ դարավերջի Երևանում Տվենին մեղմ ասած դժվար կլիներ գտնել հարմար տարածք ելույթի համար (լավագույն դեպքում Սպայի տունը), բայց եթե նա հայտնվեր այսօրվա Երևանում, այդ հարցը միանգամայն լուծելի կլիներ:

Հունիսի 20-ին իր դռները բացեց Երևանի առաջին և առայժմ միակ «Արի» սթենդափ ակումբը: Չնայած անվան մեջ «ակումբ» բառին, «Արին» տարբերվում է մեր իմացած ակումբներից:

← «Արիի» առաջին աշխատանքային օրը

Հոգով սթենդափ ակումբ

— Ես վախենում էի, որ ուղղակի բեմով բար կլինի, պարզապես անունը դրած սթենդափ ակումբ,– ասում է Աշոտը, որը չնայած իր վերջին մի քանի՝ Ռուսաստանում անցկացրած տարիներին, մեր հոդվածում կլինի հայաստանյան սթենդափի լիազոր ներկայացուցիչը,– բայց ակումբը ստեղծողներն ամեն ինչ արեցին, որ ինքը հոգով սթենդափ ակումբ լինի: Ես կասեի՝ «Արին» հիմա մի քանի մակարդակ բարձր ա Երևանի սթենդափի կարողություններից, առայժմ այդ բացը լրացնում են ռուսաստանցիների ելույթներով, մինչև մենք հասնենք:

«Արին» սթենդափ ակումբ է ոչ միայն հոգով, այլև կառուցվածքով: Ուղղանկյուն սենյակի ամենահետևում փայտից մի քանի հարկանի՝ ամֆիթատրոն հիշեցնող նստարաններն են, նստարանների կողքը՝ բարը, բեմից հնարավորինս հեռու՝ մեջտեղում՝ թատրոն հիշեցնող նստարանների շարքեր, դիմացի մասում՝ փոքրիկ սեղանիկներ՝ ավելի էլեգանտ ժամանց նախընտրողների համար: Ելույթ ունեցողին չխանգարելու համար ակումբի մուտքը հնարավորինս անտեսանելի է՝ սև վարագույրով քողարկված, լուսավորությունը՝ խորհրդավոր՝ անհատական ելույթների համար, ավելի հանգիստ ու հավասար բաշխված՝ խմբակայինների:

«Արիի» հիմնադիրներն իրենք իրենց բաժանում են երկու խմբի՝ ֆինանսական և գաղափարական: Գաղափարական ակունքներում երեքով են՝ Էդոն, Գարիկն ու Անդրեյը, երեքն էլ կոմիկ, երեքն էլ Հայաստան են տեղափոխվել Ռուսաստանից ոչ վաղ գարնանային անցյալում:

Հարցին, թե ինչու որոշեցին Երևանում հենց սթենդափ ակումբ բացել, Էդոն մի քիչ զարմացած պատասխանում է:

— Դե չէ՞ որ... չկար... Մենք տեղափոխվեցինք Հայաստան, ու ելույթ ունենալու տեղ շատ քիչ կար, որոշեցինք մեր ակումբը բացել, որ կարողանանք ինչքան ուզում ենք ելույթ ունենալ:

— Մեզ մոտեցան Կարենն ու Ռիտան, որ հիմա մեր ներդրողներն են,– շարունակում է Գարիկը,– ասեցին, որ ուզում են ակումբ բացել, որտեղ երբեմն սթենդափ երեկոներ կանցկացնեն ու առաջարկեցին գալ մի քանի խորհուրդ տալ: Եկանք, կարծիք հայտնեցինք, որ երևի այս անկյունում լավ կլինի բեմ լինի ու գնացինք: Մյուս անգամ երբ նորից եկանք, բեմն արդեն հավաքած էր: Այդպես հասկացանք, որ իրենք լուրջ են տրամադրված, և կարող ենք իրենց հետ համագործակցել:

Ցուցանակ-հպարտություն

Երկու ամիս վերանորոգման արկածներից հետո վերջապես Երևանն ունեցավ սթենդափի իր լիարժեք անկյունը: Այսօր անշլագներն այստեղ առօրյա են: Չնայած համարյա ամեն օր կայացող համերգներին, տոմսերը երբեմն վաճառվում են մի քանի ժամում: Հայկը սթենդափի վաղեմի սիրահար է, ասում է որ ակումբի բացվելուց առաջ էլ Երևանում երբեմն գնում էր տեղացի կոմիկների ելույթներին զանազան ոչ մասնագիտացված ակումբներում, բայց հիմա խոսք է տալիս հաճախությունը մեծացնել:

— Հիմա որ կա սենց տեղ, որը կոնկրետ սթենդափի մասին ա, որտեղ կարաս միշտ գաս, ես կարծում եմ ամեն շաբաթ կգամ:

«Արիում» իրադարձությունների ամեն օրվա անոնսը կարելի է տեսնել ինչպես այսօր արդեն համատարած դարձած սոցիալական հարթակներում, այնպես էլ վաղուց մոռացված և համենայն դեպս հոդվածի հեղինակին վերջին անգամ ամերիկյան կինոներում հանդիպած արտաքին ցուցանակին:

— Մուտքի վերևում գրվածքները տեսա՞ր,– հարցնում է Էդոն,– մեր հպարտությունն ա:

Էդոյի ու մնացածի հետ գնում ենք ցուցանակին գրված այսօրվա անունները փոխելու: Առաջին հայացքից հեշտ թվացող գործողության բարդությունը, պարզվում է, ահագին խաբուսիկ է: Հնաոճ ցուցանակը, դու մի ասա, ամեն օր լավ տանջում է հիմնադիրներին:

Մի քանիսը ներքևում պատրաստում են բառերն ու մասնակիցների անունները, Էդոն վերևում ընդունում է արդեն խմբավորված տառերը, հները հանում, նորերն ամրացնում: Պատմում է, որ ցուցանակն իր պնդմամբ են տեղադրել, քանի որ կարծիք կար, որ ամեն օր հանել-դնելը դժվար կլինի: Բայց ցանկությունն այնքան մեծ էր, որ համաձայնվել է պրոցեսն ամեն օր անձամբ ստանձնել, մենակ թե ցուցանակն իրականություն դառնա: Հարցնում եմ՝ խոստումից չի՞ փոշմանել: Ծանր աստիճանը մի կերպ դուրս հանելով՝ ժպտում է, ժպիտ, որը մոտավորապես նշանակում է՝ «փոշմանելուն մոտիկ եմ, բայց պարզ ա, որ երբեք բարձրաձայն դրա մասին չեմ ասի»:

— Էս կողմում հայերեն ենք գրում, էն կողմում՝ ռուսերեն,– ասում է Էդոն,– մենք հայերենը շատ ենք կարևորում:

↓ Ակումբի համահիմնադիր Գարիկ Օգանիսյանը

↑ «Արիի» մշտական հյուր Արթուր Հապարյանը

Տեղացի կոմիկների համար

— Հայաստանցի կոմիկների հետ էլ ենք արդեն ծանոթացել, մեծ պոտենցիալ ունեն, շատ բաներ հասկանում են հումորի և կատակների կառուցվածքի մասին,– ավելացնում է Գարիկը, որը ռուսաստանյան առաջատար Սթենդափ ակումբ N1 անդամներից է,– Շատ ուրախ եմ, որ կկարողանանք իրենց հարթակ տրամադրել ելույթների, պրակտիկայի համար, հույս ունեմ այստեղ միասին կհավաքվեն, իրար կօգնեն կատակները կատարելագործել, ինչպես մենք էինք անում Ռուսաստանի մեր ակումբում: Ուզում ենք ակումբը դառնա լավ երիտասարդական պրոգրեսիվ տեղ, հիմա շատ հետաքրքիր ժամանակ է, երբ տարբեր ոլորտների Հայաստան տեղափոխված ներկայացուցիչները կարող են այստեղ կիսվել փորձով, որը հավաքել են ավելի մեծ երկրում և շատ բաներ տալ Հայաստանին:

— Մեր նպատակն է, որ «Արին» ի վերջո դառնա ինքնուրույն աշխատող մեխանիզմ, որ այստեղի կոմիկներն օգտվեն ակումբից, մասնակցեն ոլորտի զարգացման մեջ,– պատմում է Անդրեյը:

↑ *Աստղային հավաք «Արիում». Գարիկ Օգանիսյանը, Արթուր Չապարյանը, Սերգեյ Օրլովն ու Էդո Հովսեփյանը*

← Այսպես է թարմացվում ակումբի ցուցանակը

Բաց խոսափող

Ամեն օր ակումբում տարբեր ֆորմատի միջոցառումներ են. մի օր արդեն իսկ կյանք տեսած կոմիկները հանդիսատեսի վրա փորձարկում են իրենց նոր տեքստերը, մի օր զանազան արտասահմանյան հյուրեր են ելույթ ունենում իրենց մենահամերգներով, մի օր Գարիկը հումորային հոգեթերապիա է անցկացնում (որը հիմա շատերիս է պետք), մի օր էլ բաց խոսափող է:

Բաց խոսափողները «բաց» են հենց այն պատճառով, որ այդ օրը խոսափողին կարող են մոտենալ բոլորը՝ հեռուստացույցի մեջի ամենահայտնի աստղերից մինչև այն արկածախնդիր մարդը, որը հենց նոր այս հոդվածը կարդալուց որոշեց գնալ ու փորձել զվարճացնելու իր հմտությունները: Միակ պայմանն է՝ գոնե 3 րոպեի նյութ բերել: Ծիծաղեցի՞ն: Լավ է: Չծիծաղեցի՞ն: Հոգ չէ, մյուս անգամ ավելի լավ տեքստ կգրես: Ասում են՝ կարևորն այս (ինչպես նաև մնացած բոլոր) գործում չհանձնվելն է:

Բաց խոսափողները, ի դեպ, երեք լեզվով են՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

— Երբեմն շատ հետաքրքիր է կատակներդ թարգմանել, տեսնել ուրիշ լեզվով կաշխատե՞ն, թե ոչ,– ասում է Գարիկը:

Երբեմն շատ հետաքրքիր է տեսնել՝ առհասարակ ցանկացած լեզվով կատակներդ կծիծաղեցնեն, թե չէ, կավելացնեմ ես: «Արիի» հիմնադիրները վստահեցնում են, որ չարժե ընկճվել, նույնիսկ եթե այդ երեք րոպեի ընթացքում դահլիճում ոչ ոք չծիծաղի:

— Փորձեք հասկանալ ինքներդ Ձեր կոմեդիան, վերադարձեք, նորից ելույթ ունեցեք, ու երբ առաջին անգամ ստացվի ծիծաղեցնել, կասեք՝ ըհը՜, ուրեմն սա է ուղղությունը, որով պետք է շարժվել:

— Կարևորը, որ ցանկություն լինի ինչ-որ բան հասցնել հանդիսատեսին, ոչ թե օգտագործել սթենդափը որպես նորաձևության հետևից ընկնելու կամ գումար աշխատելու ձև: Ես, որպես ռոմանտիկ անձնավորություն, վստահ եմ, որ եթե քո հիմնական նպատակը փող աշխատելն է, քո մոտ ոչինչ չի ստացվի,– փորձից եկած իր իմաստությամբ է կիսվում Գարիկը, ապա հանկած ոգևորված հարցնում,– ի դեպ, գիտե՞ք մեր ակումբի վայֆայի գաղտնաբառը: Չնայած չէ, մի րոպե, կարո՞ղ ենք հարցազրույցը հենց էդ հարցով ավարտել...

Բիայնա Մահարի

Սթենդափի տեսություն և պրակտիկա. **Աշոտ Դանելյան**

Ինչ են սովորում սթենդափ անել: Պարզվում է «Սուբյեկտիվ սթենդափ» ռուսալեզու բլոգի հեղինակ, սթենդափ ցուցադրությունների կազմակերպիչ, սթենդափեր Աշոտ Դանելյանը:

Իմ սթենդափի սկիզբը

Առաջին ելույթիս, որը 3 րոպե էր, պատրաստվել եմ մի ամբողջ ամիս՝ օրական 6-7 ժամ։ Դրանից առաջ վաճառքով էի զբաղվում։ Լավ էի վարձատրվում, բայց այդ՝ կոստյումով մեծ մարդու կյանքն իմը չէր։ Կնոջս աջակցությամբ թողեցի աշխատանքս ու ինչ-որ ժամանակ ընկղմվեցի սցենար գրելու գործի մեջ՝ այն, ինչ սովորել էի ու ինչն ինձ դուր էր գալիս։
Ընկերս, որի հետ սցենար էի գրում, անընդհատ սթենդափից էր խոսում, իսկ ես դեռ լավ չէի պատկերացնում, թե դա ինչ է։ Տեսել էի Էդդի Մըրֆիին, Բիլ Հիքսին, Կաուլինին, մեկ էլ, ինչպես հետո տեղը բերեցի, Դագ Սթենհոփին։ Բայց ինձ ուղղակի թվում էր՝ իրենք դերասաններ են ու բենեֆիս են անում։
Ընկերս այնքան հոգիս հանեց իր սթենդափով, որ որոշեցի երկուսիս գրանցել օփեն մայքի։ Մտածում էի՝ դրանից հետո մտքից կհանի ու կվերադառնանք մեր սցենարներին։ Այնպես ստացվեց, որ ես շատ լուրջ մոտեցա սթենդափի պատրաստություններին։ Մոսկվայում էինք, այնտեղ համ բաց խոսափողներ կային, համ ընկերներ, որոնք հումորի ինչ-որ փորձ ունեին ու կարող էին խորհուրդներ տալ։ Լսեցի բոլորի խորհուրդները, YouTube-ում նայեցի տեղական բոլոր հնարավոր բաց խոսափողները՝ հայտնի ու անհայտ կոմիկների։
Եվ իմ և ընկերոջս առաջին ելույթը շատ լավ անցավ։ Այդ օրվանից ես երկու ոտքով մտա սթենդափի մեջ, իսկ նա դուրս եկավ, էլ չզբաղվեց։
Ես շատ շուտ հասկացա, որ այդ առաջին ակումբի միջոցառումները՝ շաբաթը 2 անգամ, ինձ համար քիչ են։ Սկսեցի տարբեր տեղերում ելույթ ունենալ, ավելի շատ միջոցառումների գնալ, մարդկանց հետ ծանոթանալ։
Այդ ընթացքում էլ ձևավորվեց իմ ճաշակը։ Բացահայտեցի նոր դեմքերի (հիմնականում Stand-Up Club #1-ի տղաներն էին), որոնք փորձում էին հնարավորինս հեռանալ ծեծված կատակներից։ Նրանք սեքսիստ հումորներ չէին անում «կինս հիմար է» ոճով, այլ մտածելու տեղ էին տալիս թե՛ կատակի ձևով, թե՛ բովանդակությամբ։

Բլոգի սկիզբը

Ուզում էի շփվել նրանց հետ, բայց չգիտեի՝ ոնց։ Սկսեցի բլոգ վարել VKontakte-ում. Մոսկվայում բոլոր միջոցառումները, աֆիշաները, խմբերը, գրանցումները, ամեն ինչ այդ հարթակում է։ Մի քանի հոգի կար սթենդափի ոլորտից, որ արդեն գրում էր, բայց ես հասկացա, որ կարող եմ դա ավելի լավ անել։ Կինովերլուծությունների մեծ փորձ ունեի ու որոշեցի այստեղ էլ սթենդափ սփեշլների վերլուծություններ գրել։
Բլոգիս անունը դրեցի «Սուբյեկտիվ սթենդափ»։ Ուզում էի այդպես երկխոսություն ստեղծել՝ նայեք, եկեք խոսենք, ի՞նչն եմ սխալ ասում։ Ու ես վախենում էի, որ կասեն՝ նոր ես սկսել, ի՞նչ ես հասկանում, ի՞նչ գործ ունես, որ եկել ուրիշներին ես քննադատում։ Բայց դա այդպես էլ չեղավ։ Իմ բլոգ բացելը համընկավ «Սիթ-դաուն» փոդքասթի հետ, որտեղ հյուրերը սթենդափերներն էին, ու այնտեղ էլ մոտեցումն իմի նման էր՝ սուբյեկտիվ կարծիքներ սթենդափի մասին։ Ես իրենց մասին էի գրում, իրենք իմ բլոգից էին խոսում, բոլորս քիչ-քիչ սկսում էինք հասկանալ մեր անելիքը։
Սկզբի ժամանակներում Դոլգոպոլովը կիսվեց իմ բլոգով, ու միանգամից մոտ 200 հետևորդ ավելացավ։ Ես այդքան էլ պլանավորում էի՝ մոտ 200, բայց հիմա 2000-ի կարգի է թիվը։ Բլոգի շնորհիվ բոլորի հետ ծանոթացա, ինձ մոտենում, հարցեր էին տալիս։ Անգամ հիմա, երբ բլոգն ակտիվ չէ, Հայաստան տեղափոխվող ռուս սթենդափերները երբեմն ինձ ճանաչում ու կապի են դուրս գալիս հենց բլոգի միջոցով։

Պրակտիկան

Իմ նոր շրջապատը համարում էր, որ պիտի ինչքան կարող ես շատ ելույթ ունենաս ու ինչքան կարող ես վատ տեղերում։ Գնում էինք Մոսկվայի ծայրամասերով պտտվում, մի անգամ փորձեցի Վասյա Մեդվեդևի հետ ոտք գցել, ու այդ օրը 7 անգամ ելույթ ունեցանք։ Օրական 7 անգամը շատ-շատ է. դու արդեն գոյություն չունես, չես հասկանում՝ խոսում ես, չես խոսում, շատ դժվար է։ Վասյան դա ամեն օր էր անում։
Ես հանգիստ եմ զգում, երբ շաբաթական 7 անգամ ելույթ եմ ունենում։ Բայց դա բավարար չէ, փորձում եմ այնքան անել, որ մի քիչ բարդ լինի ինձ համար, տեղում չմնամ։ Փորձեցի նորմաս դարձնել շաբաթը 15 ելույթ։ Մի քիչ ծանր էր, բայց ինձ հենց դա էր պետք։ Գնալով շատացնում էի, հետո 2 տարի առաջ ստիպված եղա մշտական Հայաստան վերադառնալ։

Ակումբային սթենդափը Հայաստանում

Այս 2 տարում Հայաստանի սթենդափը շատ է փոխվել։ Երբ նոր էի եկել, ամիսը մեկ էր միջոցառում լինում։ Բաց խոսափողները գրեթե չէին տարբերվում շոուներից։
Ես տեսնում էի, որ այդ ֆորմատը երկար չի ձգի։ 15 րոպե նյութ գրելու համար կոմիկը պիտի մոտ մի ամիս ամեն օր ելույթ ունենա։ Սթենդափը կինոյի նման է։ Առաջինը հեշտ է ստացվում, որովհետև մինչ այդ մի ամբողջ կյանք ես ապրել, որ կարող ես ֆիլմիդ մեջ դնել։ Երկրորդ կինոն արդեն դժվար է։ Դրա համար բոլորս առաջին 15 րոպեն արագ հավաքեցինք։ Իսկ հետո առաջ շարժվելը դժվար է, երբ դու չունես բաց խոսափող, չես կարող նյութդ փորձարկել, չես կարող բառերդ մի քիչ տեղերով փոխել, հասկանալ՝ ոնց ավելի լավ կաշխատի։
Հիմա այստեղ սթենդափով զբաղվողները բոլորը գիժ են, ոչ մի նորմալ մարդ դրանով չի զբաղվի, քանի որ ոչ մի փորձված ճանապարհ, հստակ հեռանկար չկա։ Պիտի մի ուրիշ կարգի սիրես էս ամեն ինչը, որ զբաղվես։
Բայց իրենք առաջիններն են եղել, իրենք ճանապարհը կկառուցեն, որովհետև հեռուստատեսային կոմիկները, որ այստեղ կան, ուրիշ ճանապարհով են գնացել։ Իրենք չեն գնացել ինքնազարգացման ճանապարհով։ Իրենք առաջ են գնացել իրենց խարիզմայի հաշվին, պրոդյուսերների հետ, գրողների հետ, ովքեր ուղղակի սթենդափի ֆորմատով մի բան են սարքել, բայց դա հենց սթենդափ չէ։

Սթենդափի սահմանումը

Եթե հարցնեք՝ բա որն է իսկական սթենդափը, չգիտեմ։ Սթենդափը հստակ սահմանում չունի։ Ես երկար փորձում էի ինձ համար սահմանել, բայց ամեն անգամ, երբ ինձ թվում էր, թե գտել եմ սահմանումը, գտնվում էր մեկը, ով դուրս էր այդ սահմանումից։
Սթենդափն իր հայտնվելու պահից անընդհատ ստեղծում էր մի նոր ձև, ու անընդհատ հայտնվում էր մի նոր ուղղություն, որը կոտրում էր մինչ այդ եղած բոլոր սահմանումները։ Դրանով սթենդափը թատրոնին է նման, որ պիտի անընդհատ փոխվի, թե չէ կմեռնի։

Սովորել vs պատկանդ

Հարցնում են՝ սթենդափը հնարավո՞ր է սովորել, թե՞ պիտի միջից լինի։ Այսպես ասեմ՝ չես կարող չսովորել։ Սթենդափը պարտադիր պրակտիկա է պահանջում, ու պիտի էնքան անես, մինչև ստացվի։
Եթե անվերջ ելույթներ ունենաս ու ամեն անգամ նույն կատակի բառերը տեղերով փոխես, գոնե մի անգամ լավ կստացվի։ Դա կախված ա պատրաստակամությունից, թե ինչքան ես պատրաստ անհաջող ելույթներ ունենալ, մինչև հաջող ստացվի։
Իսկ ինչ վերաբերում է բնածին տաղանդին, չգիտեմ, այն կարող է խանգարել։ Առաջին անգամները ստացվում են, սովորում ես, որ մարդիկ ծիծաղում են, իսկ հետո համբերություն չես ունենում, որ փորձարկես նոր փոփոխություններդ, մինչև դրանք էլ ծիծաղելի դառնան։
Ինչ վերաբերում է գրքերով սթենդափ սովորելուն, իմ փորձից կարող եմ ասել, որ գրքերից ամենամեծ օգուտը մոտիվացիան ու ինքնավստահությունն է։ Եթե բեմ բարձրանալու համար քեզ պետք է գիրք կարդալ, խնդրեմ, կարդա, կարևորը՝ ելույթ ունենաս վերջում։ Պատկերացրու՝ բասկետբոլ ես խաղում։ Կարող ես անվերջ ուսումնասիրել, թե ֆիզիկայի տեսանկյունից ինչպես է գնդակն ընկնում զամբյուղի մեջ։ Բայց մինչև դաշտ դուրս չգաս ու գնդակը ձեռքումդ չբռնես, կյանքում խաղալ չես սովորի։ Սթենդափում լրիվ նույնն է։
Ինձ ավելի շատ օգնում է սթենդափերների ինքնակենսագրությունները կարդալը, նրանց պատմությունն իմանալը։

Ճանաչել մեծերին

Մ՛յ սթենդափ նայելը պարտադիր է։ Պիտի լավ ազդեցություն ունենաս, սիրած կոմիկներ, որոնցից դու սովորում ես, մատուցումից ոգեշնչվում ես։ Քո սեփական մատուցման ոճը կձևավորվի տասնհինգ տարի հետո։ Հաշվիր՝ քանի տարի որ բեմում ես, այդքան տարեկան ես։ Ու «դեռահաս տարիքում» նոր կարողանում ես հետաքրքիր մտքեր հայտնել։
Եթե լավ սթենդափ չնայես, մնալու ես քո շրջապատի կամ հեռուստացույցի մասսայական արտադրանքի ազդեցության հույսին։ Այդպես չի լինում, որ ոչ ոք չազդի, ոչ ոքի գոնե պատահաբար չընդօրինակես։ Ավելի լավ է՝ որակյալ կոմեդիա նայես։ Դեռ Մոսկվայում ապրելուս ժամանակվանից ցուցադրություններ էի կազմակերպում, որ հավաքվենք տեղի սթենդափերներով, նայենք, քննարկենք։ Պարզվեց՝ խմբով նայելուց ավելի բուռն ենք արձագանքում, քան առանձին։ Վերջերս Երևանում էլ սկսեցինք նման դիտումներ կազմակերպել։
Եթե ամենահայտնի սթենդափերներին չես հավանում, ոչ մի վատ բան չկա, դեռ հակառակը։ Մի քիչ էլ փորփրիր, երիտասարդների, պակաս ճանաչվածների մեջ կգտնես հենց քո ոճի մեկին՝ ամենասպիտակ հետերո տղամարդուց մինչև woke սթենդափերներ։

Անի Բարսեղյան
Հարություն Մալխասյան

«Սթենդափերը պիտի մազոխիստ լինի»

ԵՐԵՎԱՆԸ մի ամբողջ օր անցկացրել է «Արի» սթենդափ ակումբում և զրուցել հայկական (արդեն ոչ այդքան) անդերգրաունդ սթենդափ աշխարհի մի քանի ներկայացուցիչների հետ:

Անի Բարսեղյան

Միշտ զբաղվել եմ ու հիմա էլ զբաղվում եմ մարքեթինգով ու լրագրությամբ, իսկ սթենդափը կողքից որպես հոբբի է եղել: Մոտ ապագայում, որպես հիմնական աշխատանք, սթենդափը չեմ տեսնում, բայց մեկ էլ ու տեսար:

Մինչ այս երբեք մեծ սեր չէի ունեցել սթենդափի նկատմամբ, բայց հետո նայեցի Marvelous Mrs. Maisel հեռուստասերիալն ու հասկացա, որ սթենդափը կարող է լինել ոչ թե հռհռացնող, այլ հոգին տաքացնող: Սկսեցի փորփրել ու գտա այդպիսի մարդկանց նաև ժամանակակից սթենդափի մեջ:

Արդեն գիտեի, որ Հայաստանում անդերգրաունդ սթենդափ աշխարհ կա, որոշեցի մի անգամ գնալ տեսնելու, թե ինչ կա ու ավելի տաքացա: Տեսա Աշոտի ելույթը, որը բարձր նշաձող էր սահմանել և որին կարելի է ձգտել: Տեսա նաև մարդկանց, որոնցից միանշանակ ավելի լավ կարող էի ելույթ ունենալ: Դա վստահություն տվեց, որ ես էլ փորձեմ: Որոշեցի հենց հաջորդ օփեն մայքին էլ գնալ:

Այն ժամանակ դա այդքան էլ հաճախակի հանդիպող երևույթ չէր, մի քանի ամիսը մեկ էին անցկացվում: Այս անգամ կազմակերպիչը լսելու էր կոմիկներին, ֆիլտրեր լավագույններին ու շոու կազմակերպեր: Նախորդ օրն ավելի փորձառու կոմիկներով հավաքվել էին «ռազգոնի» ու ես էլ որոշեցի գնամ իմ հում կատակներով: Այնտեղ զգացի, որ դեռ շատ աշխատելու տեղ ունեմ ու որոշեցի այդ օրվա օփեն մայքին ուղղակի որպես հանդիսատես գնալ: Բայց կազմակերպիչը՝ Միեր Խաչատրյանը, ինձ համոզեց բեմ դուրս գալ: Ահավոր վախենալու էր: Տեսագրության մեջ երևում է, թե ինչպես եմ անդադար քայլում բեմով: Ամեն դեպքում, անցա հիմնական շոուին, բայց երբ շոուն պիտի լիներ, քովիդը սկսվեց ու ամեն ինչ չեղարկվեց: Որոշ ժամանակ անց նորից գնացի օփեն մայքի, նորից անցա, բայց այս անգամ սկսվեց պատերազմը: Անցած տարվա հունվարին «Մոյկայի» շոուին մասնակցեցի և այդտեղից սթենդափը կյանքիս մշտական մաս դարձավ:

Ամեն անգամ, երբ բացված չեմ լսարանի առաջ, դա դառնում է ձախողում: Հետո ընկնում եմ մտքերի մեջ, թոքերս եմ քաշում: Մի որոշ ժամանակ դադար եմ տալիս ու նորից վերադառնում: Գաղափար չունեմ այդ կապը ոնց է ստեղծվում, պարզապես պիտի զգամ մարդկանց:

Հումորներս հիմնականում վերաբերում են այն ամենին, ինչն ինձ ջղայնացնում է, առաջացնում է «what the fuck?» ռեակցիան: Այդ իրավիճակները երկար վերլուծում եմ, մտածում և հասնում ուրիշ տեսակետի, որն էլ արդյունքում զարգանում ու դառնում է հումոր:

Սթենդափը՝ որպես թերապիա: Կոպիտ բառեր շատ եմ օգտագործում սթենդափ անելիս: Իմ ասածը շատ է աչքի ընկնում, որովհետև բարի ժպիտով եմ ասում այդ ամենը:

Ներսիս ակտիվիստն ասում է, որ սթենդափերը չպիտի ինչ-որ հստակ ձև լինի, բայց կա մի քանի կարևոր բան, որը շատ կօգնի: Պետք է միշտ ուսումնասիրել թեման ու խոսել այն մասին, ինչից գլուխ ես հանում: Պետք է կարողանաս անջատել ինքդ քեզ բեմական կերպարից, որպեսզի ձախողումներդ անձիդ չվերագրես ու մտածես, որ կյանքով մեկ անհաջողակ ես:

Ալեքսանդր Նյու

Տան մի անկյունում գցած դիպլոմում գրված է, որ խաղարկային ֆիլմերի ռեժիսոր եմ: Ամբողջ ազատ ժամանակս ծախսում եմ սթենդափի վրա, իսկ ոչ ազատը՝ «Երակ» ՍՊԸ-ում եմ աշխատում, որտեղ միակ գործառույթս ամիսը մեկ հաշվիչները նկարելն ու մայրիկիս ուղարկելն է: Սթենդափով զբաղվում եմ մոտ վեց տարի: Ինձ ինչքան հիշում եմ, միշտ ուզեցել եմ ստեղծագործական ոլորտում լինել: Փորձեցի նկարիչ դառնալ, բայց թարգեցի: Ընդունվեցի Թատերական, այդտեղից էլ՝ կորած դիպլոմս: Երբ սկսեցի գովազդային ընկերությունում որպես սցենարիստ աշխատել, ընկերներիցս մեկից իմացա սթենդափի մասին: Հետաքրքրվեցի ու հասկացա, որ սա հենց այն է, ինչով ուզում եմ զբաղվել: Դուրս եկա աշխատանքից:

Մինչև առաջին սթենդափս ես երկու տարի միայն կատակներ էի գրում, քանի որ չգիտեի՝ Հայաստանում որտեղ կարելի է ելույթ ունենալ: Իսկ հետո անոնիմ չաթով ծանոթացա Սամարայից մի աղջկա հետ: Կես տարի շփվելուց հետո որոշեցի գնալ իր մոտ ու նաև մտածեցի, որ հաստատ այնտեղ օփեն մայքեր կանցկացնեն: Ռուսերեն բավական լավ խոսում եմ, այդպես գրանցվեցի ու գնացի Սամարա: Դուրս եկա բեմ, անկապ բաներ խոսեցի: Ի վերջո, այդ աղջկանից բաժանվեցի, իսկ սթենդափը մնաց: Ամենամեծ ձախողումը եղել է, երբ 40 րոպեանոց ելույթ էի կազմել, բավական շատ մարդկանց հրավիրել, բայց այդ ամենը տևեց 25 րոպե: Մարդիկ էլ էին վատը, ես էլ էի վատը: Առավելությունն այն էր, որ դրանից հետո ավելի վատ չէր կարող լինել, արդեն բոլոր տեսակ ելույթներին պատրաստ էի:

Սկզբում շատ էի նայում նրան, թե ինչն է մարդկանց ծիծաղեցնում: Հիմա կենտրոնանում եմ նրա վրա, թե ինչն է հետաքրքիր և ծիծաղելի հենց ինձ համար, ինչ է կատարվում իմ ներսում: Պարզ է, դրսի որևէ բան ևս կարող է ոգեշնչել կատակի, բայց կարևորն անկեղծ լինելն է: Երբ սթենդափերը ելույթը սկսում է «Ծափերով հասկանանք՝ ինչպես է մեր տրամադրությունը» արտահայտությամբ, հասկանում ես, որ մեկը ուզում է քեզ գցած լինի:

Ամիր Վաֆայի

Մասնագիտությամբ երաժիշտ եմ, բայց քանի որ Հայաստանում ենք ապրում, աշխատում եմ որպես ծրագրավորող: Սթենդափին իմ կյանքում շատ նոր բան է: Եթե անկեղծ, ինձ դեռ չէի անվանի սթենդափ կոմիկ:
Երկու հատկանիշ ունեմ, որոնք տրամաբանորեն բերում են սթենդափով զբաղվելուն: Մեկն այն է, որ շատ-շատ եմ խոսում, իսկ մյուսը՝ միշտ փորձում եմ բոլորին ծիծաղեցնել, լավ տրամադրություն ապահովել: Թեկուզ երբ նոր մարդկանց հետ եմ ծանոթանում, կամ ինչպես ընկերներս են ասում, թարմ ականջ եմ գտնում, ուզում եմ իրենց էլ ծիծաղեցնել:
Երկու տարի մտածում էի սթենդափի մասին, բայց կարծում էի, որ Հայաստանում չեմ կարողանա դա անել, քանի որ իմ հումորները հաճախ 18+ ոճի են: Իսկ հետո իմացա, որ դա հնարավոր է:
Մի քանի տարի առաջ շատ մոտիկ ընկերներիս հարսանիքի հանդիսավարն էի: Խոսափող, մարդիկ, մոնոլոգ, ես փորձում եմ բոլորին ծիծաղեցնել. դա կարելի է ասել սթենդափի նման մի բան էր: Բայց առաջին իրական ելույթս որպես սթենդափ կոմիկ տեղի ունեցավ մի չորս-հինգ ամիս առաջ: Անտանելի վախենալու էր, բայց պատկերացրածիցս լավ անցավ: Օփեն մայք էր, շատ մարդ չկար: Երբ երկրորդ ելույթս ստացվեց, որոշեցի, որ անպայման պիտի զբաղվեմ սթենդափով:
Վերջին ելույթս անտանելի վատն էր: Իջա բեմից, մի տղա մոտեցավ, ասում է՝ շատ լավ ելույթ էր, բայց TedTalk-ի համար: Նախավերջինի համար տեղի զուգարանում հումորներ գրեցի, մինչև ելույթի սկիզբը, մեկ անց քսան վերցրի խոսափողը և ոչ մեկ չծիծաղեց: Այդ պահին խառնվել էի իրար, իսկ հետո ինձ ասեցին, որ ուշ ժամ էր, մարդիկ հոգնել էին, դրա համար էլ չէին ծիծաղում:
Կարծում եմ այն, որ ես իրանցի եմ, որը ապրում է Հայաստանում և պատմում է իր կյանքից սթենդափով՝ արդեն ծիծաղելի է լսարանի համար: Փորձում եմ միշտ ինձ հետ պատահածների մասին պատմել: Օրինակ՝ այն մասին, որ մտածում էի պահպանակն ու պաղպաղակը նույն բանն է, ու զարմանում էի՝ էս հայերն ինչ տարօրինակ մարդիկ են: Վերջերս իմացա, որ տարբերություն կա: Ինձ համար կարևորը, որ ներկայացրածս հումորն իրականության վրա հիմնված լինի: Ամեն անգամ բեմ բարձրանալով մի նոր բան պիտի տանես և ուշադիր լինես արձագանքին: Եթե սկզբում արածիդ քսան տոկոսը հաջող ստացվեց, արդեն լավ է: Գնալով պիտի այդ տոկոսն ավելացնես: Եթե ինքդ քո և մարդկանց հետ անկեղծ լինես, կստացվի:

Սպարտակ

Այս պահին միայն սթենդափ եմ անում, իսկ մինչ այդ ռեժիսուրա էի սովորում: Սկզբում ուզում էի բաթլ ռեպով զբաղվել, բայց հասկանում էի, որ Հայաստանում դժվար կլինի դա անել: Հետո որոշեցի, որ իմ տեքստերն ավելի շատ համապատասխանում են սթենդափի ոճին: Այդպես մոտ երեք տարի առաջ սկսեցի զբաղվել:

Առաջին ելույթս «Բարկոդում» տեղի ունեցավ 2020-ի հունվարին: Ելույթ էի ունենում սթենդափի աշխարհում իմ սենսեյներ Հայկ Գրիգորյանի ու Միկա Սամսոնյանի հետ: Չնայած որ սպասում էի վատ կանցնի, բայց շատ լավ եղավ ամեն ինչ: Այդ օրվանից էլ հասկացա, որ պիտի զբաղվեմ սթենդափով: Կատակներն իրենք իրենցով են գրվում: Ուղղակի ապրում ես, նայում շուրջդ, եթե մի բանի մասին երկար մտածում ես, կատակներն արդեն իրենք իրենցով գալիս են: Նույնիսկ մտածել շատ պետք չի: Իմ հումորները միշտ հենց իմ կյանքի մասին են, այն, ինչն ինձ է հետաքրքիր: Թեմաները կարող են մեծ իմաստ չունենալ, չկա որոշակի ցենզուրա կամ կանոններ: Սթենդափ կոմիկի միակ հատկանիշն այն է, որ պիտի ծիծաղալու լինես, ուրիշ բան չկա: Ցանկացած մարդ, որը ծիծաղալու է, կարող է ընտիր կոմիկ դառնալ:

Լեո

Կրթությամբ արվեստաբան եմ: Համոզված էի, որ նկարիչ եմ դառնալու կամ հենց արվեստաբան, հետո մտածում էի տատու արտիստ դառնալու մասին, բայց ձեռքս դողում էր, չստացվեց: Մինչև սթենդափով զբաղվելը չգիտեի՝ ինչ եմ անելու, հիմա էլ չգիտեմ, պարզապես վայելում եմ:
Կյանքում սթենդափ չէի նայել, միշտ մտածում էի, որ անկապ բան է: Աշխատանքի վայրիս կորպորատիվի ժամանակ ԿՎՆ-ի նման մի բան էին կազմակերպել: Ստիպեցին ելույթ ունենամ: Լավ անցավ, թեև չէի հասկանում՝ ինչի հենց ես: Հետո ընկերներիցս մեկն առաջարկեց «Վան Գոգի» օփեն մայքին մասնակցեմ: Մտածեցի կգնամ, լավ չի ստացվի ու ինձ վերջապես հանգիստ կթողեն: Կյանքիս այն փուլում էի, որ առաջին անգամ բաց էի թողել ղեկը, չգիտեի՝ որտեղ եմ գնում: Այդ անգամ ելույթը լավ ստացվեց ու արդեն մեկը մյուսի հետևից սկսվեց:
Հիշում եմ առաջին ելույթիցս առաջ ընկերոջս հետ նստել գրել էինք կատակները, ցենզուրային ենթարկել: Մինչև ելույթ ունենալս զգացի, որ բոլորը ոնց կա ասում են ու հաջորդ անգամ որոշեցի, որ առանց ֆիլտրի, ես էլ ինչ կա՝ ասելու եմ:
Ինչքան շատ բացվեցի, սկսեցի անձնական թեմաներից խոսել հետաքրքրությունը շատացավ, մարդիկ սկսեցին ավելի շատ գալ: Հիմնականում խոսում եմ իմ կյանքից և տրավմաներից՝ մի քիչ ճոխացրած և դրամատիզացրած տարբերակով: Չեմ կարող խոսել մի բանի մասին, որն ինձ հետ չի եղել կամ որի մասին պատկերացում չունեմ: Բացառություն են կանանց մասին թեմաները, որոնք միայն իրենց հետ կարող են պատահել: Նաև խոսում եմ այն թեմաներից, որոնց արգելված են մեր հասարակության մեջ՝ սեքս ցանկացած ձևով, հարաբերություններ ցանկացած տեսակի մարդկանց հետ, ազգային ողբերգություններ, դժբախտություն: Իմ միջոցով հանդիսատեսն արտահայտում է այն ամենը, ինչն ամենամոտիկ մարդուն չի ասի: Աշխատում եմ կոպիտ բառեր չկիրառել, դրանց ժողովրդական տարբերակներն եմ ասում, բայց մեկ-մեկ փստացնում եմ: Շոուներից մեկի ժամանակ մարդկանցից մեկը որոշեց գա, կանգնի առջևում ու խոսի հանդիսատեսի հետ: Պարզ է, խմած էր, ինձ ասեց դեպրեսիվ բաներից ես խոսում, ես էլ ինձ չկորցրի ու սկսեցի իրեն կծել: Մարդկանց դա դուր եկավ, բայց իմ մոտ հետո երկար ժամանակ ֆոբիա էր առաջացել ելույթներից: Այդ պատճառով սթենդափերը պիտի մազոխիստ լինի, որովհետև բոլորը չեն, որ կարող են կանգնել ու ասել՝ խնդրում եմ, ծիծաղեք ինձ վրա:

Սոֆի

Ամբողջ կյանքս սովորել եմ երաժշտական դպրոցում ու ամբողջ կյանքս մտածել եմ, որ կշարունակեմ ուսումս կոնսերվատորիայում, բայց գնացի Սլավոնական համալսարանի զբոսաշրջության բաժին, որտեղ արվեստի պակաս էի զգում:
Միշտ սիրել ու նայել եմ սթենդափ, հատկապես անդերգրաունդ: Երբ նայում էի, պարբերաբար ինձ բռնացնում էի այն մտքի վրա, որ ես այս մի կատակն ուրիշ ձև կասեի, այս մի բանն այլ կերպ կանեի: Առաջին ելույթս Սլավոնականի բեմից էր: Սկզբում շատ էի անհանգստանում, չէի ուզում դուրս գալ բեմ, բայց ընկերներիցս մեկն ինձ համոզեց, որ ամեն ինչ կստացվի: Հայտնվեցի բեմում և այդ պահից ինձ զգում էի ինչպես ձուկը ջրում:
Սկսեցի գնալ «Վան Գոգ», որն այդ ժամանակ միակ տեղն էր, որտեղ օփեն մայքեր էին կազմակերպվում, իսկ հետո երբ բացվեց «Արին», սկսեցի գալ այստեղ նույնպես: Սրանք դարձան հիմնական վայրերը, որտեղ պարբերաբար ելույթ եմ ունենում: Դեռ ութ-ինը ամիս է, ինչ զբաղվում եմ սթենդափով: Առաջին անգամը չհաշված՝ բեմից մեծ վախ չեմ ունեցել, քանի որ նախկինում երգել ու նվագել եմ ու դա ինձ օգնել է վստահ դուրս գալ բեմ: Ինչքան էլ ծնողներս դեմ են, մոտ ապագայում ես ինձ լիովին տեսնում եմ սթենդափի մեջ:
Թեմաները շատ պատահական են ծնվում: Կարող եմ ավտոբուսում երգ լսել, մտքերով ընկնել, մեկ էլ մի բան հիշել, որ իմ կյանքում տեղի է ունեցել ու դա դառնա հումորի թեմա: Այդ պահին մի տեղ գրում եմ որպես վերնագիր, որ չմոռանամ, իսկ հետո գնում տուն ու շարունակում զարգացնել թեման: Հիմնականում խոսում եմ ընտանիքիս մասին, կյանքի, մարդկանց, այն ամենի, ինչի մեջ ապրում եմ: Պարզապես ինքնավստահ պիտի լինես ու եթե ասելիք ունես, հաստատ կստացվի:

Կարիճ ու Անդո

Կարիճ. Բեմական անունս երկար պատմություն ունի, բայց կոմեդիայի տեսանկյունից՝ որովհետև խայթում եմ հումորով: Չիմա սթենդափից բացի ոչ մի բանով չեմ զբաղվում: Ժամանակին փորձում էի երաժշտությամբ ու նկարչությամբ զբաղվել, բայց դրանից բան դուրս չեկավ: Ավարտել եմ Ֆիզտեխն ու Ազգարային համալսարանը: Բավական տարօրինակ ճանապարհով եմ հայտնվել սթենդափում: Առաջին ելույթս լավ եմ հիշում: Գնացել էինք Կիպրոսում հանգստանալու և այնտեղ սթենդափ երեկո էին անցկացնում: Կոմիկներից մեկը չէր եկել: Կազմակերպիչները ծանոթ էին և խնդրեցին փոխարինեմ: Այնտեղ հայտնի էի որպես ուրախ մարդ և խնդրեցին, որ մի բան անեմ: Համաձայնեցի, քանի որ այստեղ ինձ ոչ մեկ չէր ճանաչում: Մի անգամ տեսա Անդոյի ելույթը, հասկացա, որ նման են մեր հումորները, նույն ձև ենք մտածում: Առաջարկեցի ու համաձայնեց միասին ելույթ ունենանք: Մեր հումորներն ինտելեկտուալ ոճի են ու առհասարակ անխելք մարդը չի կարող սթենդափեր լինել, ժամանակի ընթացքում հաստատ դուրս կմնա: Կոպիտ բառեր աշխատում ենք չօգտագործել: Հումորը մաքսիմալ մաքուր պիտի լինի: Կոպիտ արտահայտություններով ծիծաղեցնելը բավական հեշտ է, ավելի դժվար է բարի ու լավ հումորներ անել: Ես ինքս նայում եմ ամերիկյան, ռուսական սթենդափներ, տեսնում եմ՝ ինչպիսի մոտեցումներ են այնտեղ աշխատում և փորձել եմ տեղայնացնել: Զախողումներ միշտ էլ լինում են: Շատ անգամ դահլիճում կռիվ է սկսվել ելույթի ընթացքում կամ հետո: Հաճախ հենց արված հումորի հետ է կապված եղել, բայց կռվողները երբեք կոմիկները չեն եղել:

Անդո. Ես սցենարիստ, կինոդրամատուրգ եմ: Սթենդափով սկսեցի զբաղվել մի քանի տարի առաջ: Երբ կյանքն ինձ հնարավորություն տվեց ընտրել, թե ինչով եմ ուզում զբաղվել, այս աշխարհում ամենահաճելի, հարմար ու դուրեկան բանը սթենդափն էր: Առաջին անգամ 16 տարեկանում էի փորձել և լավ չէր ստացվել: Ըստ իս՝ կոմիկներն ամենախելացի մարդիկ են: Պարզ է՝ նայած մարդ, բայց մեծ հաշվով կոմիկները զարգացած են, սեփական տեսանկյունն ունեն աշխարհի մասին: Պիտի պարզապես փորձես անկեղծ լինել, այլ ոչ թե հենց ծիծաղալու: Իմ կատակները հիմնականում կարճ են և ոչ իմ մասին: Ուղղակի թեմա՝ կատակ: Եթե քֆուրներ օգտագործելու կարիք շատ է լինում, կիրառում եմ, բայց միայն, եթե այն ուժեղացնում է հումորը:

Մարգարիտ Միրզոյան
Հայգայլ Կրոպենյան

Մոսկվա-Երևան-սթենդափ

Comedy Club-ի 200 հոգանոց դեսանտը, Ռուսլան Բելիի հայաստանցի հանդիսատեսը և հետաձգված ծրագրերը. այն մասին, թե ինչպես է ռուսական կատակերգական ոլորտը թափանցում Հայաստան ու ինչ ազդեցություն է թողնում տեղական շուկայի վրա, պատմում է իվենթ-մենեջեր, Sounds Good ընկերության հիմնադիր Հակուկ Եղիազարյանը:

→ Գարիկ Մարտիրոսյանն ու Ժան-Կլոդ Վան Դամը՝ Comedy Club-ի երևանյան համերգի ժամանակ

Comedy Club-ը գալիս է տուն

2018 թվականի ամառն էր. ես, հայտնի դեպքերից ոգևորված, արդեն պատրաստվում էի մշտապես տեղափոխվել Երևան, երբ ընդհանուր ծանոթների միջոցով Comedy Club Production-ը դուրս է գալիս ինձ վրա. փնտրում էին տեղական պրոդյուսեր/փիառ-մասնագետի, բայց նաև ինչ-որ իմաստով «մոսկվացի լոկալի», որը կարող է իրենց հետ աշխատել, հեշտությամբ լեզու գտնել: Ինձ դիմել էին որպես անհատի, բայց քանի որ արդեն ծրագրում էի ապագայում տարբեր տեսակի միջոցառումներ կազմակերպել, ստեղծեցինք Sounds Good անվանումով կազմակերպությունը, հնարավորինս անդեմ, որպեսզի դրա հետևում երևա ոչ թե անհատը, այլ՝ արված աշխատանքը:

Ես, բնականաբար, Comedy-ի ժողովրդից շուտ եկա, որպեսզի սկսեմ աշխատել: Եկա ամռանը, իսկ փառատոնը պլանավորված էր սեպտեմբերի կեսին: Մինչև օրս առիթի դեպքում խոսում եմ նրանից, թե ինչ ահռելի մեխանիզմ է Comedy Club Production-ը, որն աշխատում է առանց որևէ ուշացման, առանց ամենը վերջին օրվան թողնելու, ուղղակի որոպեներով: Ոչ մի տեղ, ոչ մի երկրում ես նման աշխատանք ու աշխատելաոճ չեմ տեսել: Եկել էին բոլորը՝ հավաքարարից սկսած մինչև անվտանգության աշխատակից: Մոտ 200 հոգի էին, որոնցից 50-ը միայն արտիստները, եկել էր ամբողջ տեխնիկական անձնակազմը, բոլոր դեկորացիաներն ու ամեն մի ագույցը բերված էր Մոսկվայից:

Մեզ համար Երևանում նման ժանրի և ոլորտի միջոցառումների համար անգերազանցելի մակարդակ էր: Ուղղակի կասեմ երկու բառ՝ Անդրեյ Լևին, ով փրոդաքշնի գործադիր տնօրեն է, ու երևի իրենից այն կողմ ես ուրիշ մեդիամենեջերի այլևս չտեսնեմ: Բոլոր աշխատողներին, ամենացածր օղակից մինչև ամենավերևներում կանգնած մարդկանց գի-

← Comedy Club-ի հիմնադիր Արթուր Ջանիբեկյանը՝ կնոջ հետ

տեր անուններով, նկատում էր ամեն ինչ՝ գովելով լավն ու սիրունագույն, կոնստրուկտիվ քննադատության արժանացնելով բացասականը: Երբ ես կողքից հետևում էի այդ ամենին ու բացականչում՝ «Աստվա՛ծ իմ», աշխատակիցներն ասում էին՝ «այո՛, ինքը մեր Աստվածն է»:
Անձամբ իմ աշխատանքի մեջ մտնում էր ամենը, ինչ կապված էր տեղական շուկայի ու մեդիայի հետ՝ գովազդը, ինֆլուենսերների հետ աշխատելը, հեռուստատեսություն այցեր կազմակերպելը, լրագրողների հետ աշխատանքը և ընդհանուր առմամբ ունեի 2,5 ամիս: Մինչև փառատոնի մեկնարկը նկարում էինք ինտրոներ քաղաքի տարբեր վայրերում. օրինակ՝ Տիմուր Բատրուդինովին կայարանում էինք նկարում, զբոսաշրջիկների համար նախատեսված երկհարկանի ավտոբուսում՝ էքսկուրսավարի կարգավիճակում, Դեմիս Կարիբիդիսին՝ Կասկադում, այսինքն՝ բացի այն, որ ծրագիրը հայերի մասին էր, նաև մի քիչ Երևանն էին ցույց տալիս, մտածում էինք՝ ինչպես ներկայացնել ու գեղեցիկ ցույց տալ քաղաքը:
Այդ ամենը Երևանին տվեց երկօրյա տոն, բացի այդ այսօր շատ արտիստներ գալիս են Երևան ու մոռանում, թե որտեղ են եկել, Comedy Club-ի փառատոնի պարագայում ամբողջ ծրագիրն ադապտացված էր Հայաստանին ու տեղական օրակարգին: Բացի այդ երկար տարիներ հայերի ու հայկականի մասին կատակներ անելուց հետո իրենք վերջապես հասան Հայաստան ու կատակում էին, որ «Comedy-ն գնում է տուն»: 2018 թվականին, հեղափոխության շուրջ էյֆորիայի ֆոնին իրենք անգամ կատակում էին վարչապետի մասին, բայց դա, ինչպես և մյուս բոլոր կատակները, արվում էր շատ բարի:

Ռուլան Բելիի մասին

Դեռ Covid-ից առաջ ես, այցելելով Մոսկվայի StandUp Store-ը, մտածում էի ռուսաստանցի սթենդափ կոմիկներին Երևան բերելու մասին, գնում էի ինչպես սեփական հաճույքի, այդպես էլ սկսնակ կամ արդեն հայտնի կոմիկների ելույթները տեսնելու համար, երկար պատրաստվում: Դե իսկ համավարակից հետո պարզ էր, որ շուկային երկար ժամանակ է անհրաժեշտ վերականգնվելու համար, բացի այդ՝ պետք է ինքդ քո գրպանից ներդնես և հասկանալի չէ՝ հետ կբերես այդ գումարը, թե չէ, հավանաբար, հետ չես բերելու: Այսինքն՝ պետք է հասկանաս՝ ինչին ես պատրաստ գումար հատկացնել, որ այդ գումարը հետ չգա, չէ՞ որ անում ես այդ թվում նաև սեփական հաճույքի համար:
Ու 2021-ի նոյեմբերն էր, խոսեցի Ալեքսեյ Խլիստովի հետ, որը Ռուլան Բելիի մտերիմ ընկերն ու համերգային տնօրենն է. պայմանավորվեցինք համագործակցության մասին, շեշտեմ, որ դա եղել է մինչև ռուս-ուկրաինական պատերազմն ու ռելոկացիան: Որոշել էինք անել Նոր

Comedy Club-ի փառատոնի պարագայում ամբողջ ծրագիրն ադապտացված էր Հայաստանին ու տեղական օրակարգին

տարուց և ցրտերից հետո, երբ արդեն բացվում է ակտիվ ժամանցային շրջանը՝ տաք օրերին, ապրիլի 15-ին, բայց... փետրվարին բոլորս միայն ենթարկվեցինք կոլեկտիվ շոկի և միանգամից չեղարկեցինք համերգը: Հետո սկսվեց ռելոկացիան, ռուսաստանյան կոմիկների մի զանգված տեղափոխվեց Երևան, սկսեց ելույթ ունենալ փոքր բարերում ու փաբերում, հետո եղավ Տիկնիկային թատրոնի մեծ համերգն ու բզոց ստացա Սարգսյան Տաշից, ով քաջալերեց Բելիի համերգի միտքը՝ ասելով, որ դրա կարիքն ունեն, ինչպես մարդիկ, այդպես էլ անձամբ ելույթ ունեցող արտիստները: Այդպես շփվեցի Լյոխայի հետ, որպեսզի հասկանանք՝ արժե-չարժե, ու արդյունքում Բելիի մենահամերգը տեղափոխեցինք հունիս:
Ի զարմանս ինձ՝ տոմսերը բավական արագ սկսեցին սպառվել, թեև Սունդուկյանի անվան թատրոնն ամենամեծն է Երևանում, և քանի որ ֆիզիկապես դա հնարավոր էր՝ որոշեցինք դնել երկրորդ համերգը, արդեն հավելյալ՝ երկրորդ համերգից գոյացած հասույթն էլ ուղղել բարեգործության: Քանի որ ես կարող էի հետևել հանդիսատեսին, զարմանալիորեն հաճելի էր, որ տոմսերը գնում էին տեղացիները՝ հայերը, հանդիսատեսի մեջ համարյա ռուս չկար: Ինձ նաև տեղեկություն հասավ այն մասին, որ ոմանք պատրաստվում էին Բելիի երևանյան համերգին անել այն, ինչ-որ արվեց Նուռլան Սաբուրովի ամերիկյան համերգի ժամանակ (հանդիսատեսներից մեկը հրապարակավ պահանջեց Սաբուրովից իր կարծիքն արտահայտել պատերազմի մասին, իսկ մի այլ ակտիվիստ դուրս եկավ բեմ՝ կարմիր ներկով պատված շորերով – *խմբ.*), նման խոսակցություններ կային նաև Իվան Աբրամովի մենահամերգի հետ կապված: Փառք Աստծո, իրենց մեջ գտնվեցին մարդիկ, որոնք ասեցին՝ «դուք ձեր երկրում չեք, հանգստացե՛ք...»: Նույն Ռուլանն անցած տարի YouTube-ում հրապարակված համերգի ժամանակ ինչեցրած մեկերկու «ոչ ճիշտ» արտահայտության համար սկսվեց չեղարկվել որպես

← Ռուլան Բելին Երևանում

արտիստ, ընդհուպ մինչև իրեն արգելեցին ելույթ ունենալ սեփական իսկ ակումբում՝ StandUp Store-ում: Այնպես որ ես ուրախացել էի, որ համերգին հայերն են գալիս, չէ՞ որ նախնական այս ամենը տեղացիների համար էր, հայերի համար:
Շատ հավես էր, որ Բելիից առաջ ելույթ էին ունենում հայ կոմիկները՝ Աշոտ Դանելյանը, Բագրատ Ղազարյանը, ArmComedy-ի Նարեկն ու Սերգեյը. Աշոտի ու Բագրատի պարագայում էլ իրենք նորություն էին հանդիսատեսի համար, նոր, թարմ նյութով: Եվ առհասարակ՝ սթենդափի նպատակը հանդիսատեսին ոչ միայն ծիծաղեցնելն է, այլ մտածել ստիպելը. Բելիի մոտ մի հատված նվիրված էր ծնողներին, ծնողների հետ հարաբերություններին, և համերգից հետո մի աղջկանից նամակ ստացա, ում մայրը համերգից հետո լուռ մնաց-մնաց ու արդեն տաքսիի մեջ պտտվեց ու ասեց աղջկան՝ «Ես էլ՝ եմ քո հետ այդպես վարվում...»: Ինձ այդ պատմությունը շատ հուզեց, հենց դա է սթենդափի գլխավոր նպատակներից մեկը:
Շատ եմ ցավում, որ այս ամենը տեղի է ունենում պատերազմական և հետպատերազմական ժամանակաշրջանում, քանի որ իմ թիրախը ռուսական կոմիկներն էին, ու այսօրվա իրականության մեջ կարող է դիտվել, որ ռուս արտիստները գալիս են Երևան ռուս հանդիսատեսի համար: Մյուս կողմից էլ կասեն՝ իրենց առջև ամեն ինչ փակվել է, գալիս են այստեղ՝ «խոպանի»: Բայց այն արտիստները, որոնց հետ որ ես եմ աշխատում, չեն դիտարկում Երևանն այդ կերպ, և, առհասարակ, մենք շատ ավելի նախօրոք էինք սկսել համագործակցել:

Մոսկվան Երևանում

Նախապատերազմական ծրագրերը հետաձգվեցին, բայց չեն չեղարկվել: Հաջորդ տարի անպայման կշարունակենք ռուսական սթենդափի արտիստներին հրավիրել Երևան, վստահ եմ, որ հանդիսատեսն էլ այս ընթացքում էլ ավելի պարտաստված կդառնա:
Ընդհանրապես, ոլորտը կամաց-կամաց զարգանում է: Բացվեց «Ari» սթենդափ ակումբը, որտեղ որ պարբերաբար ելույթ են ունենում Stand-Up Club #1-ի ժողովուրդը, բայց իրենք ոնց որ չհասկանան, որ գտնվում են Երևանում. այդտեղ բեմից հնչում են ներքին ռուսական կատակներ, ռուսական օրակարգ, ոչինչ չի խոսվում Երևանի մասին, չկա ոչ մի ինտեգրացիա, թվում է, թե գտնվում ես Մոսկվայում: Արդարության համար նշեմ, որ ընդամենը մի անգամ եմ եղել, չգիտեմ՝ հետո ինչպես է զարգացել, բայց տպավորություններս այդպիսինն էին:
Լավ կլիներ՝ իրենք մտցնեին երևանցիներին այդ ամենի մեջ, որովհետև Երևանին շատ են պակասում ժամանցի վայրերը, ու եթե արդեն կա մի վայր, որտեղ կարող ես գնալ էմոցիա ստանալու, ինչի՞ չանել այնպես, որ մարդկանց ձգի գնալ այդտեղ...

Ուրախացել էի, որ համերգին հայերն են գալիս, չէ՞ որ նախնական այս ամենը տեղացիների համար էր, հայերի համար

Էվոլյուցիայի սկզբում գտնվող հայկական սթենդափը

Սթենդափը պարզապես ծիծաղեցնելը չի, նախևառաջ հոգեթերապիա է. դուրս ես գալիս բեմ ու հանրայնացնում խնդիրներդ այդքան մարդու առաջ: Հայաստանում առայժմ շատ մեծ դահլիճներ հավաքող արտիստների ծրագրերը գրում են ոչ թե իրենք, այլ ուրիշները: Գուցե այդ արտիստները պատրաստ չեն անձնական բաներից խոսել, դեռևս այդքան վարժ չեն, որ անձնական խնդիրները դարձնեն սթենդափի նյութ, լավ մատուցել, որպեսզի դա և՛ հետնահամ թողնի, և՛ մտածելու տեղիք տա:
Երևի պետք է, որ հայկական սթենդափն անցնի այս էվոլյուցիան, որ հասնի այն մակարդակին, որին որ նոր-նոր հասնում է ռուսական սթենդափը: Իսկ Հայաստանն առհասարակ անմշակ դաշտ է. մեր խնդիրները թե՛ անձնական, թե՛ կոլեկտիվ, թե՛ մեր հասարակության մակարդակով այնքան շատ են, որ այդ ամենից կարելի է այնքան շատ նյութ ունենալ, հասկապես, որ այս երկրում բոլորիս մոտ ամեն ինչ ցավում է, և նշանակետին խփելը կարող է լինել 10-ից 10:
Շատ կուզեի հայերենն ադապտացվեր սթենդափին, ինչպես որ ժամանակին ռեպն ադապտացավ: Չէ՞ որ ամենասկզբում նույնն ասում էին ռեպի մասին, իսկ հիմա, երբ տեսնում ենք, թե ինչ տեքստեր են գրում Միշոն ու Ֆելոն, հասկանում ենք, որ իրավիճակը փոխվել է: Միգուցե պետք է լինել ավելի տեսած, կարդացած, վարժ, որ նույնիսկ ամենաանմարքեթինգային լեզվով դա կարողանաս մատուցել:
Կուզեի, որ սթենդափը չլիներ այդքան անդերգրաունդ, ինչպիսին որ այսօր է՝ իր փաբերով ու հակահիգիենիկ վայրերով, որովհետև այսօրվա 30-ից 40 տարեկաններն առաջվա 30-ից 40 տարեկանները չեն: Շատերը նրանք են, որոնք 20-ից 30 կյանք չեն ունեցել, հիմա տեղը հանում են: Իրենք, այո, ուզում են իրենց ոտքով գնալ սթենդափ լսելու, բայց դրա հետ մեկտեղ չեն ուզում փնթի միջավայր ու կեղտոտ զուգարաններ, պատրաստ են նորմալ վճարել՝ փոխարենն ինչ-որ բան ստանալու, այնպես որ՝ անդերգրաունդը կարող է լինել նաև մաքուր:

Դիանա Մարտիրոսյան
Comedy Club Production, Հարություն Մալխասյան

spell

creative marketing agency

let us spell it out for you

SOCIAL MEDIA MARKETING

SEO & PPC

WEB DEVELOPMENT & MOBILE APPS

UI/UX

BRANDING

DESIGN SERVICES

PRINT & DIGITAL MEDIA

CONTENT WRITING

PODCAST PRODUCTION

CONSULTING

PUBLIC RELATIONS

E-COMMERCE

SPELL.AM +374 55 387887



10 ԽՈՐՀՈՒՐԴ ՍԿՍՆԱԿ ՍԹԵՆԴԱՓԵՐՆԵՐԻՆ

Սթենդափեր Անի Բարսեղյանը լսել է մեծերին ու հավաքել խորհուրդներ ոլորտում հաջողության հասնելու (և այդ ճանապարհը վայելելու) մասին:

1. Նայիր ամեն օր, գրիր ամեն օր

Առաջին բանը, որ կլսես համաշխարհային սթենդափի մեծերից՝ ուղղակի եղիր սթենդափի մեջ: Ջերրի Սայնֆիլդը նեղ շրջապատում հայտնի է իր օրացույցով, որտեղ ամեն օր նշում է, որ գոնե մի բան այսօր գրել է:

Շատերը պարտադիր են համարում սթենդափին լիարժեք աշխատանքի նման վերաբերվելն ու օրական մի քանի ժամ տրամադրելը: Բայց հասկանում ենք, որ դա իրատեսական չէ. դեռ պետք է հասցնես քո առօրյա աշխատանքն անել, քանի որ սթենդափից եկամուտ չունես:

Ավելի իրատեսական է օրվա մեջ կես ժամից մի ժամ նոր զբաղմունքին տրամադրելը: Գնա շոուների, նայիր դասականների սփեշլներն ու ամենակարևորը՝ անընդհատ գրիր: Այսպես լավ պատկերացում կունենաս, թե ով ինչ է անում աշխարհում, չես կրկնի հին սխալները:

Իսկ մի ամիս շարունակ ամեն օր գրել-ջնջելով ավելի շատ պիտանի նյութ կունենաս, քան ամբողջ ամիսը մուսային սպասելով և 2-3 նշում անելով: Հա, մեկ էլ նշումներդ արա հենց այն պահին, երբ լավ կատակ է մտքովդ անցնում, թե չէ հինգ րոպեից ամենակարևոր մասը մոռանալու ես:

2. Սկսիր հենց հիմա

Ինչ-որ սևագրեր ես խզբզել, բայց դեռ վստահ չես, որ պիտանի կատակներ ունես: Պիտի դեռ աշխատես, տեքստը պլպլացնես, հետո տրամադրվես բեմին, մեդիտացիա անես... Դե լավ, վերջացրու, իդեալական պահը երբեք չի գալու: Գրանցվիր մոտակա բաց խոսափողին ու ելույթ ունեցիր: Այդ ժամանակ արդեն հենց բեմից կտեսնես քո ուժեղ ու թույլ կողմերը, կծանոթանաս լսարանի հետ, կկարողանաս ֆիդբեք ուզել ավելի փորձառուներից:

4. Կրկնիր կատակն այնքան, մինչև ստանաս քո ուզածը

Բոլորս էլ կուզեինք, որ մուսան գար, կատակը միանգամից գրվեր վերջնական տարբերակով, մենք էլ ամեն ելույթի ժամանակ նոր կատակներ ունենայինք: Բայց դա այդպես չի աշխատում, կատակները մեզ հետ ապրում են ու զարգանում: Թրեվոր Նոայի վերջին սփեշլներից մեկում հանդիպեցի իր 10 տարեկան կատակի զարգացրած, կատարելագործված տարբերակը: Ու դա բոլորն են անում:

Հայաստանում սա մի քիչ դժվար է, քանի որ հանդիսատեսը քիչ է, հաճախ նույն մարդիկ գալիս են բոլոր շոուներին: Բայց կարող ես փորձել կատակը տարբեր բեմերում կամ թողնել որոշ ժամանակ, աշխատել վրան, հետո կրկնել:

3. Միշտ ձայնագրիր ինքդ քեզ

Պարտադիր չէ հրապարակել տեսանյութերը (թեև խիստ ցանկալի է. հանդիսատեսը քեզնով ավելի շուտ կհետաքրքրվի, եթե կատակներդ ինտերնետում տեսնի ու հավանի ոճդ): Կարևորն այստեղ ինքդ քեզ կողքից տեսնելն է: Միացրու տեսագրությունդ ու հետևիր քո շարժուձևին, դիմախաղին: Ամեն դետալ կարևոր է՝ որքան ես բեմի վրա շարժվում, քայլում, մեջքդ ձի՞գ է, դեմքիդ արտահայտությունն ասածիդ համապատասխանո՞ւմ է, հանդիսատեսի՞ն ես նայում, թե՞ առաստաղի ինչ-որ կետի:

Կարող ես նաև առանց վիդեոյի միայն մաքուր ձայնագրություն ունենալ, որ աշխատես տեքստի հետ՝ հետևելով քո մատուցման ձևին, արագությանը, պաուզաներին, հանդիսատեսի արձագանքին:

5. Մի վախեցիր անհաջողությունից

Դու ֆեյլելու ես: Դու ունենալու ես անհաջող ելույթներ, դա անխուսափելի է: Բոլորն են ունենում: Թուլացիր ու հաճույք ստացիր:
Պիտի սովորես առանձնացնել մեկ կամ մի քանի անհաջող ելույթը քո անձից, թե չէ խոր դեպրեսիան երաշխավորված է: Պիտի ուղղակի վերլուծես, թե որ պահին քո կապը լսարանի հետ չստացվեց, ինչն էիր պակաս արել տնային աշխատանքումդ, որ աստղերն էին այդ օրը թարս շարվել: Աշխատիր առանձին խնդիրների վրա, բայց քեզ մի քարկոծիր:
Լուի Սի Քեյը վերջերս պատմում էր իր առաջին ելույթի մասին: Իր ասելով՝ այնքան ահավոր էր, որ չնայած կյանքում ունեցած լիքը խնդիրներին՝ այդ օրը համարում է իր կյանքի ամենավատ օրը: Բայց գիտե՞ք ինչ, հիմա Լուին բազմահազարանոց դահլիճներ է լցնում: Ես Լուի Սի Քեյի ֆանատը չեմ, հազարավոր մարդիկ նրան տանել չեն կարողանում, ու դա իրեն ընդհանրապես չի հուզում: Նա կառուցել է իր լսարանն ու աշխատում է իր լսարանի համար: Մարդիկ անգամ տոմսեր են առնում, որ գնան իր կատակների ստուգմանը, որտեղ Լուին ընդամենը թղթից կարդում է կատակները, լսում արձագանքը, նշում, թե ինչ պիտի փոխի գալիք մեծ շոուների համար:

6. Դարձիր համայնքի մաս

Կողքից գուցե չի նկատվում, բայց սթենդափը «միայնակ գայլերի» ոլորտ չէ: Սթենդափ համայնքում լինելը քեզ մի քանի առավելություն է տալիս: Նախ, կարող եք ընկերներով միասին նստել ու զարգացնել հում կատակները: Երկուսով, թե մեծ խմբով՝ արդեն ճաշակի հարց է: Բայց կողքի աչքով նայողներն օգտակար են:
Հետո, դու առաջիններից ես իմանում բոլոր բաց խոսափողների մասին ու հասցնում գրանցվել: Լինում է, որ ժամը 10:00-ին հայտարարում են միջոցառման մասին, իսկ 10:01 արդեն բոլոր տեղերը լցված են: Չէ, նախնական գրանցում չկա, հենց այդ մի րոպեում են հասցնում:
Ու, իհարկե, համայնքում իրար աջակցում են: Կազմակերպում են խմբային միջոցառումներ, հրավիրում են հայտնիների միջոցառումը բացելու, այսպես ասած՝ «տաքացնելու», տարածում են միմյանց պաստառները, ծանոթացնում լրագրողների ու տարբեր կարևոր մարդկանց հետ:

7. Ծանոթացիր կատակ գրելու կանոններին, բայց դրանցով մի ապրիր

Ցանկացած գործ բռնելիս պետք է ծանոթանալ տեսությանը, տեխնիկային, «կանոններին»: Մեր դեպքում պետք է կարդալ գրքեր, լսել փոդքասթներ, նայել ու վերլուծել տարբեր շոուներ: Բայց կատակ գրելու բանաձևերը սահմանափակ են, իսկ կատակները՝ անվերջ:
Համարիր, որ նկարիչ ես, գնում ես նկարչական դպրոց, կանոնները լավ սովորում, որ հետո քեզ ազատություն տաս ու ինչու ոչ, մի նոր մոտեցում ինքդ ստեղծես:
Բո Բըրնըմն իր քովիդյան սփեշլում՝ «Inside»-ում, սթենդափը խառնում է երաժշտության ու դոկումենտալ կինոյի հետ: Նա գիտի՞ սթենդափի կանոնները: Միանշանակ: Բայց կանոններո՞վ է խաղում: Միայն երբ ինքն է ուզում:

8. Մի մոռացիր ծիծաղեցնել

Հաճախ նայում ես սթենդափ ու տեսնում, որ ծիծաղելը երկրորդ-երրորդ պլան է գնացել, իսկ առաջին տեղում գաղափարն է: Դասական Ջորջ Քառլինը, Մերօրյա Հաննա Գեդսբին իրենց վերջին շոուներում կարծես ավելի շատ լուրջ ելույթ ունենան, առաջին հերթին քեզ մտածել տան ընդամենը մի քանի տեղ ծիծաղեցնելով:
Ցավոք, սա սկսնակների մոտ չի աշխատում: Քեզ տրվելու է սահմանափակ ժամանակ՝ 5-15 րոպե, որի ընթացքում դու պիտի նվաճես հանդիսատեսի սիրտը հենց ծիծաղով: Տարիներ անց, երբ ապացուցած կլինես, որ կատակել գիտես, կունենաս քո լսարանը ու ժամանոց շոուներ կանես, այ այդ ժամանակ կարող ես մտածել մի քիչ լրջանալու մասին:

9. Քեզ հավատարիմ մնա

Մի վախեցիր քո ոճից ու քո ճաշակից: Մի փորձիր ճկվել ինչ-որ ստանդարտների տակ:
Սթենդափը հումորի ամենաանձնական ժանրն է: Պարտադիր չէ, որ բոլոր կատակները քո մասին լինեն կամ քո կյանքից, բայց սուտը, ձևականությունը սովորաբար երևում է:
Հայ անդերգրաունդ սթենդափի պապաներից մեկը միշտ ասում էր՝ եթե դու անում ես կատակ, որը ես էլ, դու էլ, Պողոսն էլ կարող ենք անել ու նույնքան լավը կլինի, դա քո կատակի արժեքը գցում է: Քո կատակը, կերպարը, բնավորությունը, արտաքինը, ձայնը մի ամբողջություն են, քո մի մասը:

10. Մի գողացիր

Կարծես թե պարզ է, բայց արի ու տես, որ շատերն այս կանոնը բանի տեղ չեն դնում: Տեսե՞լ ես The Marvelous Mrs Maisel սերիալը, որտեղ Ջոելը գողանում էր իր կատակները: Եթե դեռ չես տեսել, նայիր ու համոզվիր, որ չես ուզում Ջոել դառնալ:
Ուղղակի մի վախենալու պահ կա. դու կարող ես կրկնել ուրիշի կատակն առանց հիշելու, որ տարիներ առաջ դա արդեն լսել ես, կարծելով, թե դա քո սեփական միտքն է: Սրանից խուսափելու համար Ռոյ Վուդ Ջունիորը ժամանակին ահռելի քանակի տետրեր էր պահում, որտեղ աղյուսակով նշում էր հեռուստացույցով իր տեսած բոլոր սթենդափների թեմաները, որպեսզի հանկարծ չկրկնվի ու բոլորովին նոր բան ստեղծի:

Անի Բարսեղյան
Վալենտինա Պալպուրյան

Թույն սթենդափ ակումբներ

Մասնագիտացված սթենդափ ակումբները վաղուց արմատավորված ավանդույթ են ԱՄՆ-ում, բայց միայն վերջերս է այդ ճևաչափը սկսել տարածվել աշխարհով (օրինակ՝ Երևանում առազինը բացվել է 2022 թվականին)։ Ընտրել ենք մի քանի ականավոր ակումբներ ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Մեծ Բրիտանիայում ու Հոնկոնգում, որտեղ արժե այցելել, եթե մոտակայքում էք։

Comedy Cellar, Նյու Յորք

Ինչպես փոփ մշակույթի այլ բազում ճյուղեր, սթենդափի համաշխարհային կենտրոնն էլ ԱՄՆ-ն է, իսկ ամերիկյան սթենդափի կենտրոնը՝ Նյու Յորքը։ Նյու Յորքի գուցե ամենահռչակավոր սթենդափ ակումբը 1982-ին իր կիսանկուղային դռները բացած Comedy Cellar-ն է՝ «կոմեդիայի նկուղը»։ Այս ակումբում պարբերաբար ելույթ են ունում հնարավոր բոլոր ամերիկացի հսկաները՝ Լուի Սիքեյը, Դեյվ Շապելը, Ազիզ Անսարին, Ջոն Սթյուարտը, Քրիս Ռոքն ու Բիլ Բուռը։ Պատահական չէ, որ Լուի Սիքեյի Louis սիթքոմում ակումբը կարելի է տեսնել բացման հոլովակում, իսկ էպիզոդներում ներառված են կոմիկի ելույթները Comedy Cellar-ում։ Նույն սերիալում կարելի է տեսնել նաև վերևի հարկում գտնվող The Olive Tree Cafe սրճարանը, որտեղ հաճախ ժամանակ են անցկացնում կոմիկները։ Մուտքի տոմսը տատանվում է 14-ից 25 դոլարի սահմաններում (կախված շաբաթվա օրից)։

The Comedy Store, Լոս Անջելես

Այս շենքում 1935 թվականից գործել են Լոս Անջելեսի մի քանի հռչակավոր գիշերային ակումբներ, իսկ 1972-ից կոմիկներ Սեմմի Շորի և Ռուդի Դե Լուկայի հիմնած The Comedy Store-ը: 450-տեղանոց հիմնական դահլիճով ակումբը 1970-ականներին դարձավ սկսնակ կոմիկների երանելի հարթակը: Այստեղից են սկսել իրենց ճանապարհը, օրինակ՝ Ջորջ Քարլինը, Ջիմ Քերին, Վուփի Գոլդբերգը, Նորմ Մաքդոնալդը, Էնդի Քաուֆմանը, Ռիչարդ Փրայորը և այլ հռչակավոր կատակերգակներ: Նոր աստղերին լեգենդար ակումբի բեմից բացահայտելու համար այն կարելի է այցելել ամեն օր, տոմսերը սկսվում է 25 դոլարից:

Stand-Up Club #1, Մոսկվա

Համարվում է առաջին ռուսաստանյան մասնագիտացված սթենդափ ակումբը (այստեղից էլ անվանումը), բացվել է 2015-ին: Ի սկզբանե այնտեղ պետք է ելույթ ունենային ТНТ-ի բազմաթիվ կատակերգակները, բայց վերջին պահին ակումբի ու հեռուստաալիքի ղեկավարություններն ինչ-որ բան չեն կիսել, ու Stand-Up Club #1-ը ստիպված սեփական տաղանդներին է առաջ բերել՝ ստեղծելով այլընտրանքային սթենդափի մի մեծ ալիք: Ակումբի աստղերից են Ալեքսանդր Դոլգոպոլովը, Սերգեյ Օռլովը, Իդրակ Միրզալիզադեն, ինչպես նաև Արթուր Չապարյանն ու Գարիկ Հովհաննիսյանը: Վերջինս բոլորովին վերջերս ընկերների հետ հիմնել է Երևանի առաջին սթենդափ ակումբը՝ «Արին»:

StandUp Store Moscow, Մոսկվա

Այս ակումբը բացվել է Stand-Up Club #1-ից երկու տարի անց: Հիմնադիրները Ռուսլան Բելին (որը վերջերս Երևանում երկու համերգ տվեց), Յուլիա Ախմեդովան ու Տիմուր Կարգինովն են: StandUp Store-ն ակտիվ համագործակցում է ТНТ-ի հետ, այստեղ են տեղի ունենում ալիքի սթենդափ նախագծերի նկարահանումներ: Ռեզիդենտների թվում բացի հիմնադիրներից կան նաև Նուրլան Սաբուրովը, Գարիկ Մարտիրոսյանը, Ալեքսեյ Շչերբակովը, Գուրամ Ամարյանը և այլ աստղեր: Ընդհանրապես, ելույթներն ամեն օր են՝ ամենատարբեր ձևաչափերով (այդ թվում առանձին ելույթներ այլ լեզուներով, օրինակ՝ անգլերեն կամ ֆրանսերեն): Կիրակի օրերին ակումբում անցկացվում է Մոսկվայի ամենահայտնի բաց խոսափողներից մեկը, որին սովորաբար մասնակցում է 10-15 հոգի:

Comic Strip Live, Նյու Յորք

Նյու Յորքի հնագույն գործող սթենդափ ակումբն է, բացվել է 1976-ին: Սկզբնական շրջանում բացի կոմիկներից Comic Strip Live-ում ելույթ էին ունենում նաև երգիչներ ու աճպարարներ: Սակայն շատ չանցած տարածքը դարձավ զուտ կատակերգական հավաքատեղի: Comic Strip Live-ի բեմից ելույթի հնարավորություն ստանալու համար երիտասարդ Քրիս Ռոքն աթոռներ էր շարում դահլիճում: 2008 թվականին ակումբը Գինեսի ռեկորդ է սահմանել՝ ամենաերկար շարունակվող կոմեդիկ շոուի համար. միջոցառումը տևել է ավելի քան 50 ժամ: Այսօր Comic Strip Live կարելի է այցելել ամեն օր, մուտքի տոմսի արժեքը 22 դոլար 62 ցենտ է:

Banana Cabaret, Լոնդոն

Միացյալ Թագավորության ամենահայտնի սթենդափ ակումբներից մեկը բացվել է 1983-ին, բայց տարածքը, որտեղ այն գործում է, ունի էլ ավելի վաղեմի պատմություն: Ակումբի արդեն նշանավոր դարձած կլոր դահլիճը գտնվում է 1931-ին կառուցված Bedford թատրոնում, որտեղ տասնամյակներ շարունակ տեղի են ունեցել կատակերգական ու երաժշտական երեկոներ: 1980-ականների ձևափոխումից հետո այստեղ բացի Banana Cabaret-ից գործում են նաև փաբ, ռեստորան, ակումբ ու փոքրիկ հյուրանոց. ամեն ինչ մի տեղում:

The TakeOut Comedy Club Hong Kong, Հոնկ Կոնգ

Հոնկոնգի կենտրոնում գտնվող այս ակումբը բացվել է 2007 թվականին՝ դառնալով ամբողջ Ասիայում առաջին մասնագիտացված կոմեդիայի ակումբը: Հիմնադիրը չինական արմատներով ամերիկացի (ծնվել ու մեծացել է Նյու Յորքի Չայնաթաունում) կոմիկ Ջեյմի Գոնգն է, այնպես որ TakeOut-ն էլ երկլեզու է. ելույթ են ունենում ինչպես անգլիախոս, այնպես էլ կանտոներենի կրող տեղացի կոմիկներ:

ԿԱՐԳԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

21-րդ դարի հայկական հումորը դժվար է պատկերացնել առանց «Կարգին հաղորդման» սքեթչերի, որոնք ժամանակին հաջողացրել էին հավասարաչափ սիրվել ամենատարբեր ճաշակի ու հումորի զգացման տեր մարդկանց կողմից: ԵՐԵՎԱՆԻ խնդրանքով բանաստեղծ Կարեն Անտաշյանը վերանայել է Հայկո-Մկոյի ժառանգությունը բանից անտեղյակ մատաղ սերնդի՝ երկու դպրոցական զավակների հետ և պատմել փորձի արդյունքների մասին:

ՋՈՆՆԻ, ՕՕՕ ՅԵԵԷ...

Էս վերջերս ինձ թվաց, որ տարրական դասարաններում սովորող տղաներս, ինչպես մեդիաջերմոցի ստերիլ միկրոկլիմայում աճող իրենց տարեկիցներից շատերը, իրենց ապրած տեղի ու ժամանակի իրական զգացողությունից մի տեսակ կտրված են: Չգիտեմ, դա իրական ռիսկի զգացողություն էր, թե գոյաբանական շեղբի վրայով 1980-ականներից 2020-ականներ հասած միջին տարիքի՝ ֆոնային անհանգստությամբ տառապող շարքային մարդու խանդ՝ սպառողական երկչափության, կամ ինչպես մեր տատերն էին ասում՝ բամբակի մեջ մեծացող նոր սերնդի հանդեպ, ամեն դեպքում ինձ թվաց, որ մի բան պետք է անել: Դե հա, որն է ծնողավարության հիմնական տեխնիկական առաջադրանքը, եթե ոչ իրական կյանքի համար իրական մարդկանց պատրաստելը: Ես ինձ հարց տվեցի՝ որտե՞ղ է մեր ապրված և ապրվող մշակութային կոդերի, կարծրատիպերի, խոսույթի, սոցիալական հիերարխիայի, միջինացված մարդաբանության, քաղաքական համատեքստի ու պատմական նարատիվի ամենամեծ ու կենդանի շտեմարանը, որը կարելի է պատվաստել իմ քաջարի, բայց միամիտ պատանիներին իբրև իմունիտետ ցուրտ ու խաբուսիկ իրականության դեմ – «Մատյան ողբերգության», «Վերք Հայաստանի՞», «Երկիր Նաիրի՞», «Վարդանա՞նք», իհարկե չէ՝ միայն ու միայն «Կարգին հաղորդում»:

ԹՈՐԳՈՄ ՋԱՆ, ԹՈՐԳԻ:

ՏԻԿԻՆ ՋԱՆ, ՆԱԽ ԷՍԻ ՈՎ ՉԻ, ՈՎ ՈՐԱՅԱ ՈՒ ԷԼԻ ԵՄ ԱՍՈՒՄ, ՏԻԿՆԱ՛ՅՔ, ԴՈՒՔ ՍԽԱԼՎԵԼ ԵՔ:

ԼԵՆԱ, ԻԴԻ ՋԴԵՍ:

***

Նկատենք՝ բավական կասկածելի որոշում ինտելեկտուալ և առաջադեմ դիսկուրսի մարգինալ ջատագովիս կողմից՝ հասու դարձնել մատաղ սերունդներին դրան հակընդդեմ թվացող մի բանի: Ոդիսևսի, Շեքսպիրի, Սերվանտեսի անմահ գործերի փոխարեն Կարգին հաղորդո՞ւմ, այո՛: Փորձեմ արդարանալ: Ժողովրդական իմաստությունը հուշում է, որ չկա իրական կյանքի իրավիճակ, որին համապատասխան Կարգին հաղորդում չգտնվի:

ԿԱՆԱԴԱ, ԿԱՆԱԴԱ, ԳՆԱ ՓՈՂ ԱՇԽԱՏԻ, ԱՅ ԳՅԱԴԱ:



Սա օգնում է կյանքի տարբեր իրավիճակներում տեսնել դեպքերի զարգացման հնարավոր դրամատիկական մոդելը և թեավոր դարձած մեջբերումներով մարսել, հումորով վերաբերվել քվանտային անորոշությանը:
Հետո, չկա միջինացված մարդկային տեսակ, որի անալոգ հերոսի մասնակցությամբ չլինի կարգին հաղորդում՝ սևավոր գողականը, տխմար և մեծամիտ հարուստը, ծույլ և փնթի բանվորը, սուտի բիթիների մի ամբողջ վաշտ, կոռումպացված քաղգործիչը, բռնարար ոստիկանը, լաչառ լրագրողը, միամիտ գյուղացին, պարզունակ ու թշվառ մտավորականը և այլք, և այսպես շարունակ: Իրականության գործող անձանց այս կատեգորիկ դասակարգումը որքան էլ կարծատիպային լինի, մեկ է, որոշակի բազային ընկալում է տալիս պատանուն գնահատելու, ընկալելու և հասկանալու համար իրեն պաշարող իրականությունը:
Նաև՝ չկա ծեծված, հյութաքամ արած անեկդոտ, հումորային թափառող սյուժե էս հին աշխարհի տակին, որի վրա չլինի կարգին հաղորդման թողարկում: Սյուժեների ու արքետիպային տեսարանների այս ահռելի հանրագիտարանն օգնում է հումորի տարրական զգացման զարգացմանը, ինչը դառնում է սոցիալիզացիայի ուժեղ գործիք բալիկների համար: Գիտենք, որ հումորը տասնապատիկ ազդու է, եթե արված է ճիշտ պահին և ճիշտ կոնտեքստում, իսկ կարգինի կանոնիկ հումորային բազան իրոք քրեստոմատյանային ընդգրկում ունի: Կարծում եմ՝ բոլոր ժամանակների բոլոր մարդկանց համար հումորի զգացումը՝ հումոր անելու և հումորը ընկալելու կարողությունը, լուրջ էվոլյուցիոն առավելություն է եղել, ոչ միայն իբրև սոցիալիզացիայի, այլ նաև ընդհանրապես գոյապահպանման ու գոյաբանական սուպերկարողություն:

ՎԱՂ,
ՎԱՂՈ ՋԱՆ,
ԻՄ ՎԱՂԻՆԱԿ
ԱԽՊԵՐ,
ԻՄ ՎԱՂԵՄԻ
ԸՆԿԵՐ:

ԼԱՎ ԹԱՏՐՈՆԸ ՍԿՍՎՈՒՄ Ա ՎԵՇԸԼԿԻՑ, ԻՍԿ ԼԱՎ ՍԵՔՍԸ՝ ՄԵՐ ԳՈՌՈՅԻՑ:

***

Մյուս կարևորագույն հատկանիշը, որ ունի Կարգինը և ինչը որ հրաշալիորեն իրացրել է տարիներ շարունակ՝ բանավոր կենդանի խոսվածքի ահռելի արխիվագրումն է: Տարբեր սոցիալական և ենթամշակութային շերտերի խոսույթը, բառամթերքը, պատումային և իմաստային կոնտեքստն այնքան օրգանիկ են փաստագրված ու խաղարկված, որ հավաստիության կասկած իսկ չեն հարուցում, ինչը, օրինակ, չի կարելի ասել վերջին տասնամյակների լայն սպառման այլ հեռուստա և կինոարտադրանքի լեզվի մասին, այդ թվում և Կարգինի ստեղծագործական կազմի թողարկած ֆիլմերի, սիթքոմների, սերիալների, որտեղից մեզ վրա սովորաբար հորդում է իրականության հետ աղերս չունեցող սնոբիստական, անբնական, կեղծ ու ագրեսիվ մի լեզու: Բակային կյանքի մեռնող մշակույթի հետ մեռնելու վտանգի տակ է նաև բանավոր հաղորդակցության՝ խաղերի, խաղիկների, ասել-խոսելու, պատմել-լսելու, կռվել-մերվելու մի կենդանի խոսույթ, որը, ահա կարելի է գտնել Կարգինի սերիաներում:
Լավ, ակադեմիական դեդուկցիան թողնելով մի կողմ՝ միանգամից անցնեմ իմ սոցիալ-մշակութային էքսպերիմենտի արդյունքների ամփոփմանը:

***

Նախ, Կարգինի ռետրոսպեկտիվ դիտումը, բացի զուտ խնդիկներ կորզելու պրակտիկայից, նաև մի տեսակ նոստալգիկ երանգ ունի, որ հղում է մեր անկապ, բայց ջահել օրերին: Երկրորդը, ֆուլէյջդիների և չորսկայերի մեր օրերում վատ տեխնիկական որակը մի տեսակ ներքին դիմադրություն է առաջացնում, թեպետ բովանդակությունը մի քանի սյուժե հետո սկսում է հաղթել մեր մեջի տեխնոբուրժուային: Մյուս դիտարկումը՝ միշտ պարզվում է կան սյուժեներ, որոնք առաջին անգամ ես

— ՎԵՐՋԵՐՈՒՄ ԱՀԱԳԻՆ ՄԱՐԴ ԵԿԱՎ, ԷՆ ԲԱՆԳԼԱԴԵՇՅԻ ՎՍՅՈՆ, ՓԱՐԱՔՅԱՐՅԻ ՆԱԿԱՆԵՑՏԸՆ, ԱՆԱՍՏԱՍՎԱՆՅԻ ԻՏՈԳԻԿԸ:

— ԲԱ ԳԴԵՏԸՆ:

դիտում, ինչը շատ կայֆ է, բայց նաև պարզվում է՝ կան լիքը միջակ ու ոչ էնքան տպավորիչ սյուժեներ, որոնք միայն 10% ճշտությամբ են ընդհատվում արդեն կանոնիկ դարձած ոսկե ֆոնդի սյուժեներով, որոնցից թռած ցիտատները վաղուց մեր բանավոր հաղորդակցության համատեքստի մասն են դարձել:
Բայց, իմ դեռահաս տղաներին մատուցելու դիտանկյունով նայելիս, ամենամեծ խնդիրը, իհարկե, տարիքային ցենզուրան է, որի տակ միանգամից ընկնում են սեռական բնույթի հումորներով սյուժեները, որոնք էլի, 20% հաճախականություն ունեն, եթե ոչ ավել: Այս ֆիլտրն էլ կիրառելուց հետո ինչ վերջնարդյունք ունեցանք: Նախ, իհարկե, իրենց ճանաչած իրականությունից էականորեն տարբեր, ուրիշ հայկական իրականության հետ առերեսում, անսովորության ու դիմադրության զգացում, մի տեսակ համ անտարբերություն, համ էլ ուրիշ բանի հանդեպ ծագող բնական հետաքրքրասիրություն:
Հետո, հումորային իրավիճակների ընկալում, խնդալու և ոչ խնդալու բաների ճանաչողություն, որը ոչ միայն բնածին կարողություն է, այլ նաև, անշուշտ վարժեցնովի: Այսպիսով, ժամանակ առ ժամանակ իբր պատահական էկրանին հայտնվող Կարգինի սյուժեների արդյունքում, ես նկատեցի, որ տղերքը սկսել են էդ անեկդոտներն այս կամ այն միջավայրում վերապատմել, ու հատկապես՝ հենց իրավիճակի ու կոնտեքստի թելադրանքով: Հաջորդ անսպասելի կայֆոտ էֆեկտը՝ տղերքն իրենք անձամբ սկսեցին նկատել իրական կյանքում տեղի ունեցող խնդալու իրավիճակներն ու հետո դրանց վերածել կիսահորինովի ու կիսահիրականի վերապատմության՝ հանուն լսողներից խնդիկ կորզելու: Դոֆամինային կախվածությունն աշխատեց:

ԷՍ ԳՅՈՒՂԻ ԱՆՈՒՆԸ ԿՏԱՋԻՆ Ա, ՈՐՏԵՎ ՍԱՂ ԿՏՅՐԱԾ ԵՆ ՈՒ ՁԻՆՎԱԾ:



Անշուշտ, տեղի ունեցավ բառամթերքի մի քիչ «աղտոտում» ռուսերենացված և սլենգային բառերով ու արտահայտություններով, բայց դա ես ընկալում եմ ոչ թե որպես նահանջ մաքրակենցաղ ու գիտակցված ինտելեկտուալությունից, այլ հակառակը՝ պայքար սնոբիզմի և ինքնահավանության դեմ, որպես լեզվաշերտի ու լեզվամտածողության ընդլայնում, լեզվական ընկալունակության մեծացում: Հուսով եմ, երբ մեծանան ու այս էքսպերիմենտի նկարագրությանը ծանոթանան, կներեն իմ գործած կարգին անկարգությունը, որը հնարավոր է մեկնաբանեն իբրև իրենց՝ ինձ նմանեցնելու կամ իմ՝ իրենց ժամանակը դեպի իմը հետ քաշելու հուսահատ ձեռնարկ հայրեր և որդիներ հավերժական պայքարի ծիրում:

Կարեն Անդրաշյան
Նոնա Իսազանյան

Կատակին չդիմացան

Քաղաքական երգիծանքով զբաղվող միակ հայկական հաղորդաշարը՝ «ԱրմՔոմեդին», շուրջ կեսը կարի է, ինչ ներկայացնում է քաղաքական իրադարձությունների հումորային անդրադարձը: Իսկ քաղաքականությունը Հայաստանում, ինչպես վաղուց հայտնի է, լի է շատ կավեշտալի դեպքերով ու դեմքերով: Խոսել ենք նախագծի հիմնադիր հայրեր Նարեկ Մարգարյանի ու Սերգեյ Սարգսյանի հետ այն մասին, թե ինչպես են Հայաստանում ընդունում կատակները:

Զոհային նամակներ ու ֆայնային հաղորդագրություններ

Ինչպես և կարելի էր ենթադրել, այս տարիների ընթացքում շատ են եղել դեպքերը, երբ հաղորդման ժամանակ հնչեցված հումորը դժգոհություններ է առաջացրել քաղաքական գործիչների շրջանում: Այժմ դժգոհություններից շատերն են միասին հիշում ու մի կարգին զվարճանում: Ընդ որում, կան դեպքեր, որոնց մասին իմացել են տարիներ անց: Օրինակ, միայն վերջերս են տեղեկացել, որ ArmComedy-ի մասին դգժոհությունը ժամանակին հասել է այն ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանին, ընդ որում բավականին ազդեցիկ քաղաքական գործչից:

«Մեզանից բողոքել են հեռուստաընկերությանը կամ ուղղակիորեն մեզ: Վերջերս գործող իշխանությունների թիմակիցներից մեկից աշխարհի ամենաժիծաղելի voice-ը ստացա, որը մեկ-մեկ միացնում եմ ընկերներիս մոտ, անհնար է նկարագրել՝ որքան ծիծաղելի է»,– պատմում է Նարեկը:

Բայց, որքան էլ զարմանալի թվա, դժգոհություններն արտահայտվել են նաև արտերկրից: Ավելի ճիշտ՝ հայաստանյան դեսպանատներից՝ «առնվազն երեք պետությունների դեսպանատուն է բողոքել»: Դրանցից մեկը խոսքի ազատության և Charlie Hebdo երգիծական թերթի հայրենիք Ֆրանսիայից: Սերգեյը հիշում է. «Նորանշանակ դեսպանի ազգանունը Լակոտ էր: Եթերում մի փոքր բառախաղ տեղի ունեցավ, որի համար զանգել էին տնօրինություն»: Նարեկի կարծիքով ազատամիտ Ֆրանսիայից նման քայլը շատ ավելի ծիծաղելի էր, քան տեղացի շատ ազդեցիկ մարդկանց բողոքները:

Տղաներն ընդհանուր առմամբ այս պատմություններին վերաբերվում են որպես սովորական ընթացիկ երևույթների: Տարիներ առաջ, երբ դեռ ԱրմՔոմեդին նոր էր մուտք գործում հայկական հեռուստաեթեր, անորոշությունն ու ռիսկերն ավելի մեծ էին, քանի որ քաղաքական երգիծանքն այդքան էլ զարգացած չէր և եթե որևէ դեպք լիներ, որը կվնասեր և՛ իրենց, և՛ հաղորդմանը, ավելի քիչ հավանական էր, որ մեծ աղմուկ կբարձրանար: Այսօր պատկերն այլ է, ինչպես նշում են տղաները. ի տարբերություն 2010-ականների, երբ դեռ նոր էին զարգանում Ֆեյսբուքն ու Յութուբը, համացանցն այսօր հնարավորություն է տալիս պաշտպանված զգալ, իսկ կոնֆլիկտային դեպքերը շատ հեշտությամբ կարելի է բարձրաձայնել սոցիալական հարթակներում և խնդիրը կկարգավորվի:

Շուտ նեղվողները

ArmComedy-ի հաղորդաշարերից գրեթե ոչ մի քաղաքական գործիչ անմասն չի մնացել: Այս տարիների ընթացքում հասցրել են անդրադառնալ գրեթե բոլորին՝ Աժ պատգամավորներից մինչև կառավարություն: Մինչդեռ նեղացողները սովորաբար եղել են առաջին շարքից բավական հեռու գտնվող անձինք:

ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՊԱՆԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ ԼԱԿՈՏ ԷՐ: ԵԹԵՐՈՒՄ ՄԻ ՓՈՔՐ ԲԱՌԱԽԱՂ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԵԼ ԷԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

«Եղել են դեպքեր, երբ մեզ փորձել են ուղղորդել՝ չբոցվելու այս կամ այն քաղաքական գործչի վրա,– չի թաքցնում Սերգեյը, բայց հստակեցնում,– դրանք երբեք չեն վերաբերվել հայտնի քաղաքական գործիչներին: Օրինակ՝ կարող է ինչ-որ մի վարչական շրջանի փոխթաղապետի 3-րդ տեղակալից լիներ կամ ինչ-որ ավագանու անդամի քեռակնոջից: Ցածր պաշտոնյաների համար երևի ինքնահաստատվելն ավելի կարևոր է»:

Կապրակն ընդունողները

Բայց արդարության համար պետք է հատուկ նշել, որ եղել են նաև դրական դեպքեր, երբ հեռուստանախագծի քաղաքական թիրախներն արձագանքել են միանգամայն աղեկվատ ու հավասարակշռված: Իսկ որոշ դեպքերում կատակների արդյունքում ձևավորվել են ջերմ ու ընկերական հարաբերություններ:

Հաստատ կհիշեք այս տարվա մարտիության Թողարկումը, որտեղ Նարեկի փոխարեն Սերգեյի հետ ողջ հաղորդումը վարեց Նարիա Զոհրաբյանը: Սա, տղաների կարծիքով, կատակներն առողջ ընդունելու ամենալավ օրինակն է: Հիշում են՝ տարիներ առաջ նմանակման համար անգամ գնել էին հատուկ կեղծամ eBay-ից և երբ Նաիրա Զոհրաբյանը փոխել էր իր սանրվածքը, ստիպված նոր կեղծամ էին պատվիրել: Բայց նախկին պատգամավորն այդ ամենից հետո էլ հաճույքով ընդունել էր հաղորդման համավարողը լինելու հրավերը: «Նաիրա Զոհրաբյանը 10 տարի շարունակ եղել է մեր հաղորդումներում և դրական օրինակներից է, թե ինչպես կարելի է հաղորդմանը վերաբերվել հումորով: Ընդհանրապես շատ քաղաքական գործիչների ենք տեսնում մեր ամենատարբեր սթենդափներին, օրինակ՝ Ռաֆֆի Հովհաննիսյանն է հաճախ գալիս, թեև երբեք անմասն չի մնացել մեր հաղորդումներից: Թերևս ամենաանհումոր ԱԺ-ն գործողն է»,– նշում է Նարեկը:

Ավելի անվրանգ Երևան

Հիմա քաղաքական հումորն ավելի հեշտ են տանում: Տղաների կարծիքով դա կարելի է բացատրել նրանով, որ և՛ հանդիսատեսն է մեծացել, և՛ հումորի տեսակներն ու որակներն են ավելացել, փոխվել:Ամենադրական զարգացումն այն է, որ Երևանը դարձել է աղմկոտ քաղաք: Մարդիկ էլ չեն վախենում քաղաքական թեմայով կատակել՝ ֆեշն բլոգերներից մինչև տիկտոկեռներ, բոլորն էլ անում են ու դա, ըստ Արմ-Քոմեդիի հիմնադիրների, շատ առողջ երևույթ է: Բայց դեռ աշխատելու տեղ կա, քանի որ հաճախ հասարակությունը չի տարբերում հումորի և վիրավորանքի սահմանը:

Չպետք է կարծել, որ Հայաստանն այս մասով առանձնանում է աշխարհի մնացած պետություններից, սակայն կատակն ընդունելու մշակույթի զարգացման հետ դրական փոփոխություններն ավելի նկատելի կլինեն. «Քաղաքական հումորն ամբողջ աշխարհում ծանր է տարվում: Մարդիկ իրենց սիրված քաղաքական գործչին ուղղված կատակն ամենուր ընկալում են որպես կատակ իրանց դեմ, իրենց ինտելեկտի ու արժեհամակարգի դեմ: Դրա համար էլ ծանր են տանում, բայց ողջ աղը նրանում է, որ այս 10 տարվա ընթացքում այդ մարդկանց շրջանակներն էնքան են փոխվել, որ մի քանի անգամ 360 աստիճան պտույտ են տվել»,– պատմում է Նարեկը: Սերգեյի կարծիքով հումորը՝ քաղաքական և ոչ այնքան, ինչպես նաև դրա ընկալումը մարդկանց կողմից միայն դեպի լավն է գնում: «Կարծում եմ իրավիճակն ավելի լավ է լինելու: Երիտասարդներին հիմա հասանելի են բազմաթիվ որակյալ շոուներ, սերիալներ, որոնք աշխարհում լավագույնն են, իսկ դա արդեն ճաշակ է ձևավորում: Հիմա բազմաթիվ սթենդափերներ դահլիճներ են լցնում հենց միայն սթենդափով և դա չի կարող չուրախացնել»:

Շուշանիկ Փափայան
ԱրմՔոմեդի

Հումոր 2.0

Ամենաանշնորհակալ բաներից մեկն ինտերնետային վիզուալ բովանդակության մասին տպագիր մամուլում պատմելն է: Այն էլ՝ հումորային բովանդակության: Հումորը բացատրելն արդեն իսկ վատ է, դրան որևէ կերպ գնահատական տալը՝ օդը կշռելու պես մի բան: Բայց որևէ կերպ պետք է ամրագրել՝ ինչ օրի է հայկական հումորն ինտերնետային, սոցցանցերի տիրույթում, ու հետևաբար, «ավել-պակաս ներող»:

Աշխարհում ամենաանվերահսկելի երևույթը վաղուց արդեն երեք տարեկան երեխան չէ: Հենց ինտերնետը դարձավ հասանելի լայն զանգվածներին, մենք նորովի բացահայտեցինք «անվերահսկելի» բառը: Միլիոնավոր ինֆլյուենսերներ կարճ ժամանակում հեղեղեցին սոցիալական մեդիան իրենց քոնթենթով, որը չէր ենթարկվում խաղի և ոչ մի օրենքի, առավել ևս՝ գրաքննության կամ տրամաբանական վերլուծության: Ջրի երեսին մնում են նրանք, ովքեր մաքսիմալ շատ դիտումներ են հավաքում: (Հայկական իրականության դեպքում այդ մաքսիմումը մեկ միլիոնն է) Այդքանը: Այդպես, հայկական հումորը «Կարգին կասետներից» տեղափոխվեց զրոների ու մեկերի մոգական աշխարհ:

ԻՆՍՏԱԳՐԱՄ

Հայկական հումորն անդնդախոր ձորերի ու անհուն օվկիանոսի պես օրեցօր տարածվում ու ծավալվում է ինստագրամում: Բլոգերների երևակայությունը սահմաններ չի ճանաչում, չկան փակ թեմաներ, չկան ֆորմատի տաբուներ կամ աններելի կերպարներ: Նրանք նմանակում են հայտնի կերպարներին կամ ստեղծում նոր պերսոնաժներ, կատակում են կենցաղային, քաղաքական թեմաներով՝ լայն ընտրանի: Բլոգերներն ունեն տասնյակ կերպարներ, հատուկ դրանց համար նախատեսված էկիպիրովկա/հագուստ՝ իրական կեղծամներից մինչև ֆիլտրով փոփոխված ձայն: Փառք Աստծո, սոցկայքը տալիս է նման հնարավորություն:

Առավել պոպուլյար բլոգերներից է @vanoyan_liana-ն: Մասնագիտությամբ դերասանուհի Լիանան հաջողացնում է հիմնական նկարահանումների ընթացքում նկարել մեր համար ռիլզեր՝ տաքսի սերվիսի տիպիկ դիսպետչեր, հոգատար տատիկ, տնային տնտեսուհի, «Այլ երկրներում vs Հայաստանում» շարքը և այլն:

Կան նաև շատ տաղանդավոր տղաներ՝ «ահավոր հայտնի ինֆլուենսեր» Ռաֆոն՝ @haydalek, իր համարյա 48-հազարանոց բանակով, @michel_ghaytanjyan-ն իր 44 հազարով, և այլն, և այլն: Ում չնշեցինք՝ երկու հազար ներողություն (կամ այնքան, որքան կազմում է ձեր ֆոլոուերների քանակը): Ինստագրամում, բարեբախտաբար, չի ողջունվում գռեհկաբանությունը, օգտագործողները դա ուղղակի չեն ընդունում: Գռեհիկ քոնթենթը՝ մի ենթավերնագիր ներքևում:

Ինստագրամյան բլոգերները բավականին բարձր են վճարվում գովազդի համար, չեն խորշում շատ ակնհայտ փլեյսմենթներից՝ լազերային էպիլյացիայից մինչև թանկ բուծիկների բրենդային ապրանքների գովազդ նկարելուց: Շատերի համար դա եկամտի միակ աղբյուրն է:

ՅՈՒԹՈՒԲ

Ի սկզբանե մերոնք հավաքվում էին յութուբներում, քանի որ այն քոնթենթը, որ ստեղծում էին, հեռուստաֆորմատ չէր: Տարատեսակ վոքս փոփեր, «բոցեր», «կիսաբաց լուսամուտների եսիմինչեր», Գալուստ Սահակյանի, հիմա արդեն նաև Տիգրան Արզաքանցյանի և Աղազարյանի դարակազմիկ ելույթներից հատվածներ տեղադրելուց և մի շարք անփառունակ փորձերից հետո, այնուամենայնիվ, հաղթեց սթենդափի ժանրը: Դա տեղի ունեցավ աստիճանաբար, սահուն՝ հընթացս բարձրացնելով նաև քոնթենթի որակը: Ասել, որ հայկական հումորային քոնթենթը յութուբում մեծ հաջողություն ունի, սխալ կլինի, քանի որ, ինչպես գիտենք, Յութուբը մեր տարածաշրջանում չի ենթարկվում մանետիզացիայի: Դիտումների քանակն այնքան աննշան է, որ նույնիսկ չենք էլ դիտարկվում որպես բիզնես: Ու արդյունքում Յութուբը դեռևս մնում է որպես փիար գործիք մեր սթենդափերների համար, որտեղ ուղղակի տեղադրում են իրենց փաբային, ակումբային ելույթները: Այս շարքում կարելի է առանձնացնել միայն «ԱրմՔոմեդի» նախագիծը, տղաները չեն ընկրկում և դիմում են զանազան գործիքների, օրինակ՝ կազմակերպում են դրամահավաք Պատրեոնում, ակտիվորեն շփվում, իսկ վերջերս՝ նույնիսկ առաջին պլան բերում ու եթեր տալիս իրենց պատրեոններին (այն մարդկանց, ովքեր ամեն ամիս որոշակի դրամական հանգանակություն են անում՝ ի բարօրություն նախագծի): Սա առայժմ միակ հաջողված Յութուբ քոնթենթն է, որը ստեղծվեց հենց այստեղ, հետո գնաց հեռուստախոպան, բայց նորից վերադարձավ հայրենիք՝ դարավոր ավանդույթի համաձայն:

ՏԻԿ-ՏՈԿ

Մարդու ձեռը չի գնում մտնել Տիկ-Տոկ, ավելի ճիշտ՝ նորմալ կրթություն ստացած մարդու ու ավելի ճիշտ՝ հայկական տիկ-տոկ: Մարդու ձեռը չի գնում տիկ-տոկը գրել մեծատառով: Սակայն երևույթը կա, անխուսափելիորեն ապրում և ընդլայնվում է՝ բոլոր նորմալ մարդկանց կամքից անկախ ու առկախ: Հոդված գրելիս երեք անգամ տիկ-տոկ ինկոգնիտո ռեժիմով մտնելուց և ամեն անգամ չորս ժամ հետո ապշահար-սարսափած անջատելուց և դեմոտիվացվելուց հետո, այնուամենայնիվ, շարադրեմ աչքով տեսած ընդունելի օրինակները:

Բացի ինստագրամյան ընդունելի քոնթենթը, տիկ-տոկում ուղղակի կրկնօրինակողներից, այստեղ կան նաև բուն տիկտոկերներ՝ բլոգերանման մարդիկ, որոնք ստեղծում են գռեհիկի սահմանագիծը հատած-անցած ռիլզեր: Կան նաև քիչ թե շատ ընդունելի տարբերակներ, օրինակ, 85 հազարից ավելի ֆոլոուերներ ունեցող Մաշա Մուրադյանը՝ @mariammashamuradyan, խոսում է սեռերի տարբերության մասին՝ «Աղջիկների/տղաների մի տեսակ կա, որ..», կամ համայն հայության անկրկնելի մորքուր Նինա Տիտանյանը՝ @ninana_yan, աղի բլիթ սարքող մորքուրից մինչև պասպորտ սեղանի մորքուր, կարառկեի մորքուր ու նոր տարվա հյուր գնացող մորքուր ունի իր կերպարացանկում: Քոնթենթը որակյալ չէ, բայց շատ դիպուկ է: Նինայի գովազդատուն շունիկների հագուստի խանութ է, առցանց դեղատուն և այլն: Ինչպես բոլոր նախորդ բլոգերները, այստեղ նույնպես ոչ ոք չի ֆիլտրում գովազդատուներին:

Ընդհանրապես, տիկ-տոկում ֆիլտր չկա: Ու թերևս, դա տրամաբանական է, որովհետև ակտիվ օգտագործողները 10-18 տարեկաններն են, որոնք իրենք էլ չունեն ֆիլտր: Սմարթֆոնը նրանց ձեռքերում նռնակի պես է, նկարում են իրենց անհումոր հումորները տատիկի հետ զրույցի ժամանակ՝ հաճախ առանց վերջինիս իմացության, «երեխեեեեեք» ֆրազայով սկսվող ցանկացած աշխարհացունց բացահայտում և այլն, և այլն: Օրինակներ չենք բերելու, որ հանկարծ չգայթակղվեք ու որոշեք ստուգել:

Տիկ-տոկում արժե նայել քաղաքապետի թեկնածու Ռոտենբերգին: Թեև նրան արժե նայել ամենուր:

ՖԵՅՍԲՈՒՔ

Այս տարածքն այնքան քաղաքականացված է հայերի համար, որ հումորային նախագծերը զուտ իրենց ներկայությունն են ապահովում՝ այլ հարթակների հաջողված քոնթենթը քոփի անելով: Ժամանակին, իհարկե, բացվել են մի քանի էջեր, ստեղծել անորակ ֆոտոշոփած հումորային նկարներ, սակայն հիմա դրանք կամ ակտիվ չեն, կամ համառորեն աշխատում են մի քանի տասնյակ լայքի համար, զորօրինակ՝ Բլոգեր Գառնիկը: Չի կարելի չհիշել առաջամարտիկներ Կոլյային՝ @kolyahayrapetian կամ Բիձային՝ @its_bidza ու էլի մի տասնյակ մարդկանց, բայց հիմա նրանք էլ արդեն հասունացել և լուրջ գործերով են զբաղվում: Կամ էլ գնացել են խոպան՝ ինչպես «Արմքոմեդին» ջահել տարիներին:

Ֆեյսբուքում հաջողված հումորը պարտադիր քաղաքական տարրեր ունի, ավելի ճիշտ՝ որոշ քաղաքական տեքստեր ունեն հումորային երանգ: Օրինակ՝ մեր ու ձեր սիրելի «Լուրեր դժոխքից» էջը: Հետևորդների քանակը, թեև 35 հազարը չի հատում արդեն տևական ժամանակ, սակայն 2014 թվին բացված էջի ադմիններին դա չի դեմոտիվացնում ցայսօր առաջիններից մեկին արձագանքել երկրում տեղի ունեցող հասարակաքաղաքական անցքերին: Մի քիչ ավելի փոքր՝ 7,3 հզր հետևորդների բանակ ունեցող ՀՀ ամենակարևոր՝ «Պարզաբանման նախարարությունը» հարաբերականորեն վերջերս է ստեղծվել, սակայն դեպքերին արագ արձագանքի շնորհիվ շատերը նույնիսկ կարծում են, որ Նախարարությունն իրական է՝ կադաստրի գրանցման վկայականով: Այս էջը քաղաքականացված լինելով հանդերձ՝ դեռևս ամբողջովին չի պարզաբանել իր սեփական դիրքորոշումը՝ աջակողմյան, թե ձախակողմյան: Իսկ ադմինների մասին պտտվում են դեռևս չպարզաբանված լուրեր:

Սակայն կային կարճ, բայց ուրախ ժամանակներ, երբ ֆեյսբուքն այսքան քաղաքականացված չէր ու հումորային բովանդակությունը սարկազմի գոհարներ էր սփռում: «Կույս կանանց միավորում» էջն իր անվանման մեջ արդեն իսկ բառադատարկաբանություն պարունակելուց զատ՝ լավ ցնցել էր համացանցը: Մաքրամաքուր ոսկեղենիկ հայերենով գրված հայեցի տեքստերը կասկած չէին հարուցում, որ նման ՀԿ գոյություն ունի: Էջի ստեղծող մաթեմատիկոս Ռաֆայել Թեյմուրազյանն ի վերջո բացահայտեց իր ով լինելը՝ գրելով.

«Պահանջվեց 1-2 տարի և դոզայի հետևողական ավելացում, մինչև լայն զանգվածները վերջապես հասկացան, որ գրառումները սարկաստիկ բնույթ ունեն: Ինձ համար բացահայտեցի հիմարության անսահմանությունը»: Ցավոք, էջը հիմա չկա, ինչպես ասում են՝ ով տեսավ, տեսավ:

Ինչո՞ւ եղավ, որ այսպես եղավ

Եթե համեմատենք մարդու կյանքի միջին տևողության հետ, հայկական հումորային քոնթենթն ինտերնետում դեռևս մոտ տասը տարեկան երեխա է: Դատելն ու դաստիարակելն անիմաստ է, քանի որ այստեղ նույնպես գործում է մանկավարժության հիմնական օրենքը՝ լավագույն տարբերակը սեփական օրինակն է: Հետևաբար, մեր տեղական հումորը հենց այսպիսին է, որովհետև մենք ենք այսպիսին՝ մի քիչ գալուստաարզաքանյանցոտ, մի քիչ պարզունակ, գրոտեսկային ու անպայման զագսի ու բակից երեխային կանչող մորքուրներով:

Էլեն Բաբայան
Նոնա Իսազանյան

Տաշ Սարգսյան.
«Մենք մեր քաղաքի մի մասն էինք»

Լեգենդար «Նոր հայերի» և Comedy Club-ի անդամ, երկու երկրների ու քաղաքների միզև ապրող Տաշ Սարգսյանը պատմում է իր Երևանի մասին՝ Բ կարգի Մոսկվոյի դպրոցից մինչև կվն-յան հուշերով լի Համալիրն ու քաղաքի կենտրոնի դերը սպանջնող Պուշկինի փողոցը:

Մամային ա պետք հարցնել, թե որ ծննդատանն եմ ծնվել։ Մենակ գիտեմ, որ 100 տոկոսով Մարգարյանում չեմ ծնվել։

Շատ երևանցիների նման մենք էլ բնակարան էինք ստացել. այն ժամանակ՝ Կվարտալում։ Մինչև 3-րդ դասարան հենց այնտեղ եմ ապրել, բայց ամբողջ ամառս Կոմիտաս 23-ում ա անցել՝ տատիկիս տանը, կամ Լալայանցում՝ տատիկիս մամայի մոտ։ Ինձ համար կինո «Պիոները», որն արդեն չկա, Կոմիտասի, Բրյուսովի տարածքներն ավելի հարազատ են, քան Չերյոմուշկան։

Ֆիզգոռոդոկի մանկապարտեզն եմ գնացել. ամենալավ մանկապարտեզն էր էդ ժամանակ։ Տեղափոխվեցինք Մոնումենտ՝ դրա պատճառով բարդ ա ասել, թե Երևանի կոնկրետ որ շրջանում եմ մեծացել։ Սաղ Երևանով ֆոֆռում էի։

Սկսել եմ 109 դպրոցից, ավարտել՝ 128-ով։ Տոլստոյի անվան դպրոցը «Բ» կարգի դպրոց էր համարվում. դե տենց հասկացողություն կար։ Կային «Ա» դասի դպրոցներ՝ Պուշկինը, Չեխովը, Դերժինսկան։ Չգիտեմ ինչի, որովհետև Տոլստոյը կարգին դպրոց էր։ Երևի իրանք էին տենց որոշել։ Իրականում՝ մեր ժամանակ բոլոր ռուսական դպրոցները, հիմնականում, նորմալ էին։

Համալսարանական տարիներիս սկսվեց անկախացման ընթացքն ու ռուսերենը սկսեցին ամեն տեղից հանել։ Քանի որ ռուսական կրթություն ունեմ, տանն էլ հիմնականում ռուսերեն էինք խոսում, ցանկացած համալսարան ընդունվելու շանսերս խիստ կրճատվեցին։ Մամայիս երազանքն էր, որ բժշկականն ավարտեի։ Բայց ես չսիրեցի, իմը չէր։ Ավարտեցի գյուղատնտեսական ինստիտուտի գինեգործության բաժինը։ Էդ ժամանակ երկիրը նենց վիճակում էր, որ կրթության մասին շատ քիչ էին մտածում. շատ ուրիշ մտածելակերպ էր թելադրվում։

Համալիրում էինք սկսում ԿՎՆ-ը։ Գյուղինստիտուտի այգու դիմացի շենքը «Շարմի» առաջին օֆիսն էր, կարելի ա ասել հումորը սկսվեց և վերջացավ հենց այդտեղ։

Երևանը դինամիկ մեծացող ազատ երկրի մայրաքաղաք ա։ Երևանի հավես մասն էն ա, որ ինքը շատ օրգանիկ ա զարգանում՝ շերտերով։ Իմ կարծիքով դա շատ ավելի թանկ ա ու հետաքրքիր։ Քաղաքն իր սխալներն էլ ունի, օրինակ՝ Հյուսիսային պողոտան իր տգեղությամբ։

Քաղաքը մարդկանցով ա հետաքրքիր. այդ շերտերը քաղաքին տարբեր ազգերի ներկայությունն ա ապահովում։ Դա չափազանց կարևոր դեր ա խաղում քաղաքի զարգացման հարցում։ Մարդիկ տարբեր էներգիա են փոխանցում քաղաքին։ Սիրիահայերը, որ իրենց շունչն են փոխանցել քաղաքին, հիմա՝ ռուսների ներկայությունը։ Առաջ մեզ մոտ այլազգիներին տարօրինակ էին նայում։

Չգիտեմ՝ հիշում եք, թե չէ՝ էն ժամանակ Սարյան փողոցում շատ վտանգավոր էր նույնիսկ կանգնել, որովհետև Կոնդից «օրկերը» իջնում, մարդկանց «տանում էին»։ «Ռոսիա» կինոթատրոնի տարածքն էն ժամանակ «Ազիա» էր, հիմա էլ, իհարկե, նենց չի շատ ա փոխվել։ «Ազիայի» սահմանն անցնում էր Չարենցով՝ Բժշկական համալսարանի մոտով, Պլանի Գլխից մինչև Պուշկին։ Իսկ Սարյանը վտանգավոր զոնա էր։

Հին Երևան ասելով ինչ նկատի ունենք։ Մենք հին քաղաք չենք։ Քաղաք ենք, որը գտնվում ա շատ հին քաղաքի տարածքում։ Երևանը կառուցել ա Թամանյանն իր կոնստրուկտիվ մոդեռնիստական տեսակետով։

Երբ, օրինակ, ռուսներին հարցնում ես՝ ինչո՞վ ա լավ Երևանը, ասում են՝ «Երևանը գրկում է»։

Պուշկինի փողոցն իմ կարծիքով շուտով դառնալու է Երևանի նոր կենտրոնը։ Սարյանն արդեն ունի իր ուրույն տեղը. գինու փառատոնի շնորհիվ ձևավորեց իր ոճը։ Պուշկինը եվրոպայոտ ա, իսկ դեպի ներքև՝ Կողբացին, ավելի արևելյանոտ։

Կուզենայի, որ հետիոտնի հանդեպ հարգանք լիներ։ Մենք քայլող ազգ ենք։ Մեզ համար մայթերը շատ կարևոր դեր ունեն։ Լրիվ օք ենք սրճարանների միջով քայլել, ուտող մարդկանց էլ դա չի անհանգստացնում։ Սովոր ենք կոֆե խմել այնտեղ, ուր նստում ենք՝ մանավանդ, որ տարվա մեջ 8-9 ամիսը դուրսը նստելու հնարավորություն ունենք։

Պիտի սպասենք, որ Բուլվարի կաֆեներն իրանք իրանց վերանան։ Այդպես էլ լինելու է, որովհետև այնտեղ էլ ոչ ոք չի գնում։ Ժամանակը պիտի պարտադրի մարդկանց վերանայել սեփական տարածքի հանդեպ ունեցած վերաբերմունքը։ Նրանք պիտի հասկանան, որ մեքենայից շիշ շպրտելը նույն ա, ոնց քո տանը կեղտ թափելով քայլես։ Վաղ թե ուշ դա փոխվելու է. մարդիկ սկսելու են ավելի խնամքով վերաբերվել իրենց քաղաքին։

Այդ՝ մեզ Առաջին ալիքով էին ցուցադրում, բայց փող չէինք աշխատում, աստղեր չէինք, մեր քաղաքի մի մասն էինք։ Ինձ թվում ա՝ «Նոր Հայերին» դրա համար էին անսահման սիրում՝ քաղաքից չէինք պոկվել։ Ռուսաստանում մեզ «Քոմեդի քլաբով» են հիշում, իսկ ստեղ մինչև հիմա մենք «Նոր Հայերի» տղաներն ենք մնացել։ Հիմա եմ հասկանում՝ տարիներ անց, թե ինչ կարևոր դեր ենք խաղացել էս քաղաքի համար այդ էմոցիոնալ ծանր ժամանակներում։

2000 թվականից ապրում եմ Մոսկվայում։ Երևան տարին մեկ էի գալիս։ Անկեղծ՝ երբեք նոստալգիկ զգացողություններ չեմ ունեցել։ Հիմա էլ նույնը՝ ինձ այստեղ հաճախ էմիգրանտ եմ զգում։ Քաղաքի հետ հատուկ կապ չունեմ։ Խնդիրը նրանում ա, որ մի մեծ մաս բաց եմ թողել։ Կարծես սերիալը կեսից եմ նայել։ Հարցեր են առաջանում՝ բա էն ուր՞ ա, էս ի՞նչ ա, էս ովքե՞ր են, ի՞նչ ա ես 20 տարում ստեղ կատարվել։

Երևանը սթրեսային ա, ինձ համար շատ փոքր ա, կարծրատիպերով լի։ Ստեղ ամեն ինչ շատ ա բարդացվում, դիստանցիա չկա, միանգամից «ախպեր ջանով» են հետդ խոսում։ Շատ փափուկ ենք, փորձում ենք մինչև վերջ լուծում գտնել՝ առանց կոնֆլիկտի։ Մի կողմից վատ ա, որ գործնական և անձնականն այստեղ չեն տարանջատում, բայց մյուս կողմից էլ կարմիր գծեր կան, որոնք երբեք չեն անցնում։

Երևանցին էն մարդն ա, ով ապրում ա էս քաղաքում։ Ու կա ինչ-որ անբացատրելի խոսալու ձև, միմիկա, որ երևանցին երևանցուն կհասկանա առանց ավելորդ բացատրության։

Շատ շուտ եմ զարթնում ու հեծանիվ քշում՝ 7:30-ին Երևանը չկար։ Տենց շուտ մենակ երևի «Նաիրիտի» գործարանի աշխատողներն էին ավտոբուսով գործի գնում։ Հիմա էդ մշակույթը զարգացել ա նոր բացված սրճարանների շնորհիվ։ Ինձ համար առավոտյան Երևանը շատ թանկ ա։

Երևանը տարիքով մեծ ձյաձ ա՝ սենց ծանր, փնթփնթան, «բա մեր ժամանակները սենց էր» ասող ու հին հիշողություններով ապրող։ Ձյաձը հումորով ա, ընդհանրապես հայերը հումորից լավ են. սենց լուրջ դեմքով, ծանր, բայց աչքերը բարի են։ Ինքը՝ Երևանը, երբեք ջեբդ բան չի քցի։

Տենց հասկացողություն կա՝ Magic India, որ հին տարածք ա, որտեղ շատ ուժեղ էներգիա կա, ու էնտեղ ինչ մտածում ես՝ կատարվում ա։ Հիմա մենք էլ ապրում ենք նենց տարածքում, որ շատ հին ա իր էներգիայով, շատ զգույշ ա պետք լինել, կախարդական բաներ կան այստեղ։ Ու երևի հենց դա էլ ստիպում ա, որ լիքը բանի մեջ խորանաս։ Մտածելու տեղ ա տալիս, փաթաթվում ա քեզ ու ցավազրկող ա սրսկում, ու չես հասկանում՝ կյանքդ ոնց ա անցնում։ Լավ իմաստով վտանգավոր էներգիայով քաղաք ա։

Լենա Գևորգյան
Մարիամ Լորեցյան

Երկրորդ իմաստի հումոր

Երևան-Օդեսա հակամարտությունը, երգիծական երգերիս վախեցող գրաֆինիչները, փառքը հայրենիքում և այդ ամենի հետևանքները. պատմում է Ուրախների և հնարամիտների ակումբի առաջին հայկական թիմի՝ լեգենդար ԵրՊԻ-ի ափագ Արա Երնջակյանը:

Երկրորդ իմաստի հումոր

1957-ին ԽՍՀՄ կենտրոնական հեռուստատեսությամբ սկսեց հեռարձակվել «Ուրախ հարցերի երեկո» հաղորդումը: Չորս տարի անց՝ 1961-ին, երիտասարդական ծրագրերի խմբագրությունը որոշում կայացրեց ստեղծել մի նոր նախագիծ: Այդպես հայտնվեց «Ուրախների և հնարամիտների ակումբը»՝ ԿՎՆ-ը՝ Խորհրդային Միության ամենաերիտասարդական հաղորդումով, որին հետևում էին միլիոններ, իսկ հաղթանակն ուներ գուցե ոչ պակաս արժեք, քան ասենք միութենական ֆուտբոլային առաջնությունը:

Հայաստանում ԿՎՆ-յան առաջին հանդիպումը տեղի է ունեցել դեռ 1960-ականներին Երևանի Դերժինսկու անվան և Պուշկինի անվան դպրոցների միջև: Արդեն դրանից հետո Պոլիտեխնիկական ինստիտուտի կիբեռնետիկայի ֆակուլտետում խաղեր կազմակերպվեցին ավագ ու կրտսեր կուրսերի միջև: Արդյունքում ձևավորվեց երկու թիմ՝ «Старики» և «Дамма Пик» («Ծերուկներ» և «Բահերի թագուհի»): Հենց այս երկու թիմերի միաձուլումից ծնվեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի թիմը՝ ԵրՊԻ-ն, որը հանդես եկավ 1971-1972-ի ԿՎՆ-ի հեռուստատեսային եթերում: Ուրախ ու հնարամիտ երիտասարդների այս թիմը նախ տեղական նշանակության մի շարք հաջողություններ գրանցեց երևանյան առաջնությունում, հետո արդեն եղան միջազգային առաջին հաջողությունները, մասնավորապես՝ հաղթանակը Վոլգոգրադում անցկացվող մրցույթում: Այդտեղ էր, որ նորաթուխ հերոսներին նկատեցին Մոսկվայից ու հատուկ փորձնական խաղ կազմակերպեցին Սիմֆերոպոլի փորձառու թիմի հետ, որից հետո նրանց հրավիրեցին Մոսկվա: Թիմը մեծ հաջողություն գրանցեց և հասավ եզրափակիչ՝ ջախջախելով հակառակորդներին: Հաղթական թիմում կային հետագայում ԿՎՆ-ից շատ ավելի հեռուն գնացած դեմքեր՝ Ռոբերտ Սահակյանց, Արմեն Ահարոնյան, Վիգեն Ստեփանյան, Շավարշ Քոչարյան, Հակոբ Ջաղոյան, Արմեն Մարֆարյան և այլոք: Թիմի ավագ Արա Երնջակյանը համոզված է, որ իրենց թիմը ոչ միայն ամենաերաժշտականն էր, այլև տարբերվում էր ինտելեկտով: «Այն ժամանակ ԿՎՆ-ում միակն էինք, որ բեմից հնչեցնում էինք Բեթհովեն ու Շոպեն, տղաներն էլ առնվազն երեք ձայնով հրաշալի երգում էին: Բացի դա՝ մեր հումորն էլ այլ էր, մի տեսակ՝ ակումբային: Այդպես էլ կոչում էինք՝ «Мужской клуб» («Տղամարդկանց ակումբ» - *խմբ.*): Բեմ էինք դուրս գալիս անձրևանոցներով, «տոռոյկա» հագած՝ անգլիական ակումբի ոճով: Մեր հումորն էլ ծանրակշիռ էր, մենք էլ այդպիսինն էինք: Օրինակ՝ ի տարբերություն մյուս թիմերի՝ խաղից առաջ կուլիսների հետևում փորձեր չէինք անում, այլ նստում էինք դահլիճում՝ հանդիսատեսի հետ: Երբ հայտարարում էին մեր անունը՝ պարզապես բեմ էինք բարձրանում ու առաջին բանը, որ հնչում էր բեմից՝ իմ արտասանությամբ ժպիտի մասին մի տեքստ էր, որն ավանդույթ դարձավ: Իսկապես տարբերվում էինք: Առհասարակ հայկական հումորը երկրորդ իմաստի հումոր է, այն պատրաստված մարդկանց համար է, ոչ թե՝ հրեցիր՝ ընկավ, խուտուտ տվեցիր՝ ծիծաղեց: Մեր հումորն այդպիսին չէ, բոի չէ, կոպիտ չէ, այն մի տեսակ թախծոտ չապլինյան է և գուցե մեր հումորները նույն պահին պայթյուն չեն առաջացնում, բայց երկար են հիշվում: Նույնը չեմ կարող ասել, օրինակ, հրեական հումորի մասին, որը, կարծում եմ, ակնթարթային արձագանքի հումոր է»:

Ասպղային կյանք

Մոսկովյան հաջողությունից հետո ԵրՊԻ-ն մեծ փառք էր վայելում հայրենիքում: Օրինակ՝ տաքսիստները հրաժարվում էին գումարը վերցնել: Ելիտար էր համարվում այն ծննդյան օրվա խնջույքը, որտեղ ԵրՊԻ-ից հյուր կար: Տղաներն էլ առիթը չէին կորցնում ու հրավերի դեպքում ներկայանում էին բոլորով միասին. ուտում, խմում, մի լավ զվարճանում: Հոբելյարը հպարտ էր, թիմը՝ կուշտ:

Իրենց չարաճճիություններն Արա Երնջակյանը սիրով է հիշում. «Մոսկովյան խաղերի ընթացքում ապրում էինք ոչ այնքան լավ հյուրանոցներում: Այդտեղ էլ հաճախ ողջ գիշեր փորձեր էինք անում: Մեր թիմակից Վիգեն Ստեփանյանի մայրը մեր ինստիտուտի պրոֆկոմն էր ու միշտ ներկա էր լինում խաղերին: Ինքն էլ ավելի լավ հյուրանոցում էր ապրում, բայց հաճախ էր գալիս մեզ մոտ ու Վիգենի համար լիքը համեղ ուտելիքներ բերում: Մենք էլ ներքևում դիմավորում էինք Վիգենի մայրիկին, տեղում միանգամից ուտում ամենը, ինչ բերել էր, իսկ երեկոյան, վերջին կոնֆետը կծելով, Վիգենին ասում, թե՝ մայրիկն էր եկել, բարևում էր»:

← Արա Երնզակյան

← ԵրՊԻ-ի ավագը ՈՒՀԱ բեմում

Անհավասար եզրափակիչ

ԵրՊԻ-ն եզրափակիչ դուրս եկավ Օդեսայի թիմի հետ: Բոլորին էր հայտնի, որ այդ թիմի հետ աշխատում էին այդ ժամանակ ԽՍՀՄ լավագույն երգիծաբանները: Պատճառը նախորդ խաղում Օդեսայի անարդար պարտությունն էր Բաքվի թիմին: Իսկ ԵրՊԻ-ին օգնող չկար, ամեն բան ստիպված էին անել ինքնուրույն: Դա դեռ քիչ էր՝ ԿՎՆ-ն, ինչպես ամեն բան այդ տարիներին, ակտիվ գրաքննվում էր:

Ըստ Արա Երնջակյանի, երևանյան թիմի ելույթներն անհամեմատ ավելի ուժեղ կարող էին լինել, եթե չլիներ այդ չարաբաստիկ գրաքննությունը. «Եզրափակչի համար «Տնային աշխատանք» բաժնում պատրաստել էինք մի շատ հաջող էտյուդ, որտեղ գործիքներին մարդկային հատկանիշներ էինք տալիս: Համարը խիստ գրաքննության ենթարկվեց և մի քանի անգամ փոփոխվեց: Որոշ ժամանակ անց, երբ հաշված օրեր էին մնացել ելույթին, համարն առհասարակ արգելեցին՝ որակելով հակասովետական: Վերջին ուժերի լարումով նոր էտյուդ մտածեցինք, բայց դա արդեն այն չէր, իհարկե: Եզրափակչի մեր հակառակորդ Օդեսայի թիմը ևս ուներ գրաքննության ենթարկված համարներ, բայց իրենք մեզնից խորամանկ գտնվեցին ու բեմում արեցին այն, ինչ ուզում էին: Արդյունքում՝ հաղթեցին, բայց հաշվի առնելով գրաքննությունը՝ կարող եմ ասել, որ մենք էլ չենք պարտվել... Խաղից հետո փորձեցինք Օդեսայի թիմին հրավիրել Երևան և ավելի արդար պայմաններում նոր խաղ կազմակերպել: Երևանում առարկություններ չկային, բայց Օդեսայում թույլ չտվեցին»:

Զգոն գրաքննիչները

Գրաքննության հետ կապված դեպքերն իսկական զավեշտ էին: Նույնիսկ Ռոբերտ Սահակյանցի մորուքն էր գրաքննության ենթարկվում: Սահակյանցն իհարկե անդրդվելի էր: Մոսկվայի կենտրոնական հեռուստատեսության գրաքննության գլխավոր պատասխանատուն՝ Իվանովը, պարտավոր էր նախապես կարդալ բոլոր սցենարները: Հանձնում էին իրեն ու հետ ստանում կարմիր մատիտով կատարված ջնջումներով էջերը:

Կային և այնպիսի բաներ, որոնք անհնար էր նախապես գրել կամ գրաքննել: Օրինակ՝ Размика-ի ժամանակ պետք էր հանպատրաստից պատասխանել հակառակորդ թիմի հարցերին: Հարցերն իհարկե նախապես հաստատվում էին Իվանովի հետ, բայց արդեն դահլիճում տղաները խորամանկում ու հնչեցնում էին իրենց ուզած հարցերն ու ի պատասխան Իվանովի հանդիմանությանը՝ ասում, թե հուզված էին ու մոռացել էին:

«Մի երգ էինք պատրաստել, որը եղանակի մասին էր: Մեր կարծիքով՝ դրական ու բարի երգ էր, որն ուներ այսպիսի մի տող. «Մեր այս ջերմ մթնոլորտից նույնիսկ ձյունն է հալչում սարերում»: Իվանովն եկավ ու ասեց, թե այդ տողը պիտի հանենք երգից: Ապշել էինք, ինչպե՞ս թե, ինչո՞ւ: Պարզվեց՝ մի քանի օր առաջ Կոլորադոյի սարերում ձյան հալոցքի պատճառով բազմաթիվ տուժածներ կային, իսկ մեր խաղը նայելու էր նաև ԱՄՆ դեսպանն ու հնարավոր է՝ սխալ հասկանար երգի բառերը: Ստիպված էինք հանել այդ տողը»,– պատմում է Արա Երնջակյանն ու հպարտությամբ հիշում բոլոր այն հումորները, որոնք, իհարկե, գրաքննվել են, բայց իսկապես սրամիտ են եղել:

«Մի սուր ռեպլիկ ունեինք, որը ռուսերեն շատ լավ էր հնչում և որը ևս արգելվեց. «свинина наша дорожала, поскольку мы ей дорожим» [«խոզի միսը մեր թանկացել է, քանի որ շատ թանկ է այն մեզ համար» - *խմբ.*]: Հենց նման արտահայտությունների արդյունքում նույն տարի կենտրոնական հեռուստատեսության տնօրեն Լապինի հրահանգով ԿՎՆ-ն արգելվեց ու հեռուստատեսությամբ չհեռարձակվեց 15 տարի: Ասել էր, թե հոգնել է տեսնել, թե ինչպես են ողջ ԽՍՀՄ-ից երիտասարդները հավաքվում ծաղրելու ԽՍՀՄ-ը»:

ԿՎՆ-ն այլևս այն չէ

Դժվար էր այլևս չխաղալը: Գրեթե ամեն երեկո տղաները հանդիպում ու փորձում էին ինչ-որ բան անել: Արդյունքում պահպանեցին «Տղամարդկանց ակումբն» ու մի քանի հաջող ելույթներ ունեցան երևանյան տարբեր բեմերում, ինչպես օրինակ՝ 1976-ի «Պարոնա՛յք, ամեն ինչ կործանվում է, բայց դեռ կարելի է ապրել և զվարճանալ» ներկայացումը: Ավելի ուշ հիմնադրվեց Կամերային թատրոնը: Դե, 15 տարի անց թիմի վերադարձն արդեն ժամանակավրեպ էր, հերթը նոր սերունդներինն էր:

«Մեզնից հետո եկան «Շարմն» ու «Նոր հայերը», որոնք երկու շատ ուժեղ ու արտիստիկ թիմեր էին և արժանի էին բոլոր այն հաջողություններին, որոնց հասան: Իսկ թե ինչու նրանցից հետո լավ թիմ չունեցանք ու էլ երբեք, կարծում եմ, չենք էլ ունենա, որովհետև այդ խաղը վերջիվերջո ռուսական խաղ էր և այն խաղում էին ռուսերեն լեզվով: Անհնար է ԿՎՆ խաղալ միայն գրված տեքստեր անգիր անելով: Հարկավոր է տիրապետել լեզվին այնպես, որ կարողանաս իմպրովիզներ անել, սրամտել: Իսկ հաջորդած սերունդները, որպես կանոն, լեզվից խեղճանում էին: Բայց, կարծում եմ, ԿՎՆ-ն ինքնին իր դարն ապրել է, և այլևս այն չէ»,– անկեղծանում է Արա Երնջակյանը:

Հասմիկ Բարխուդարյան
Արա Երնզակյանի արխիվ

Փշոտ շապիկներ

Հայկական գլխավոր երգիծական հրատարակությունը՝ «Ոզնի» հանդեսը, լույս էր տեսնում 1954 թվականից: Ինչպես նշվում էր խորհրդային հանրագիտարաններում, «Ծաղրի զենքով պայքարել է խորհրդային և նոր հայ իրականությանն անհարիր երևույթների դեմ, ծանակել բյուրոկրատներին, պաշտոնամոլներին, բանսարկուներին, օրինազանցներին և այլն»: Ներկայացնում ենք հանդեսի շատ խոսուն շապիկներից մի քանիսը:

1970. «Առանցքում կա՞խիկը»

1965. «Վերջապես գնաց: Տնենք՝ էս տարի գիտի կմտի գիպիսի ինչ է գալու»



1954. «Նա Նոյնպես կողմնակից է կոլեգիալ ղեկավարության»

1967. «Բոլոր դարերում բարբարոսները հետք են թողնում հուշարձանների վրա»



1970. «ՄԵԿ. Ոչխարի միսը, ասում ենք, ոչխարի միսն է»

1957. «Գործում է Կիկին, գործում անդադար, եվ չգնում ոչ մեկի մեջ»

1959. «Լոգանքները փակցրի, հիմա ազատ կարող եմ ձեռքերս լվանալ»

1954. Ամերիկի «Ոչխարը», ռուսական ուռուցքը և կամակորությունը կամ ոչխարի միսը դանակի տակ

1981. «-Էս է ձեր բերածը, լոդեր:
-Ինչ ես տալել որ ինչ ես պահանջում:»



«Ոզնի» #20-21, հոկտեմբեր-նոյեմբեր 1957 թ.

«Ոզնի» երիգաձան հանդեսում հաճախ ծաղրվում էր Հայաստանի նախախորհրդային անցյալը: 1957 թվականի հոկտեմբեր-նոյեմբերի թողարկման մեջ, որը, իհարկե, նվիրված էր Հոկտեմբերյան հեղափոխության 40-րդ տարեդարձին, մի հեգնական անդրադարձ է կատարվել հին Երևանին (թեև վերջաբանում մի փոքր հարված է հասցվում նաև պետական Հայձուկտրեստին):
«Հիրավի, ով կարող է պատկերացնել, որ Կիրովի անվան մանկական զվարճարան պուրակի տեղը մի ժամանակ եղել է այս սևագորշ «Ղանթարը»: Պուրակում զբոսնող երջանիկ պիոնեները չի էլ կասկածում, որ Նելսոն Ստեփանյանի հուշարձանի տեղը երեսուն-քառասուն տարի առաջ կանգնել է մի բեղավոր մսավաճառ և սուր ձայնով գովերգել իր նշանավոր տժվժիկը...
Համա թե ճոռոմ անունների սիրահար են եղել Հայաստանի տեր ու տիրականները: Այս գետնահարկ բաղնիքի անունը դրել են «Ֆանտազիա»: Ինչ ֆանտազիա էր դա, այդպես էլ չհասկացանք ոչ մենք, ոչ էլ մեր երեխաները: Հապա հյուրանոցների անունները՝ «Օրիանտ», «Գրանդ Օտել», «Մինիոն»... Այս խարխուլ իջևանի անունն էլ կնքել էին «Ֆրանսիա»: Օտարամոլ պարոնայք երևի այդպես են կոչել իրենց հաստատությունները՝ ի պատիվ արևմտյան ասպետների «անշահախնդիր օգնությանը» Հայաստանի:
Բուլվարում մի ժամանակ դադար էին առնում հոգնած երևանցիները, վաճառականները հաշվում էին իրենց շահույթը, արհեստավորները խորհում էին իրենց հանապազօրյա հացի, իսկ լոթի տղաներն էլ Շուստովի կոնյակի ու մսեղ տիկնանց վրա: Իջնում է խաղաղ երեկոն: «Ֆաճլաները» շրջում են մայրաքաղաքի տրանսպորտից առաջացած փոշու ամպերը:
Բայց ամեն ինչ չէ, որ մերժելի է հնամենի Երևանում: Վաղ լուսաբացին դեպի ղանթարն է ձգվում իշաքարավանը՝ «Քավառա պոեզդը», Գեղամա լճից բերելով թարմ իշխանը: Գուցե Հայձուկտրեստի ավտոները մի կերպ փոխարինեն ավանակներին:
Հուսանք:»

«Ոզնի»

evnmag.com
կարդայեք առցանց



The Main
Design Store

@TheMainDesignStore

/

Միեր Մկրտչյան 10
(Միրզոյան գրադարան,
առաջին հարկ)